- Աղյուսակ 96. Խմելու ջուր, սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաներ տրամադրելու գործողությունների ընդհանուր նկարագիրը – էջ 213
- Աղյուսակ 97. Ջրամատակարարման առնչվող տեղեկատվություն – էջ 215
- Աղյուսակ 98. Պաշտոնական օգնության ստացված հիմնական ապրանքատեսակների ցանկը – էջ 216
- Աղյուսակ 99. Առաջին անհրաժեշտության պարագաների և սննդամթերքի մատակարարմանն ուղղված տեղեկատվության ապահովում – էջ 217
- Աղյուսակ 100. Նախապատրաստական կետեր՝ կենսաապահովման օբյեկտների և այլնի վերականգնման համար – էջ 218
- Աղյուսակ 101. Կենսաապահովման գծերի և այլնի անհապաղ վերականգնման գործողությունների ուրվագիծը – էջ 219
- Աղյուսակ 102. Օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հիմնական կետերը, որոնք պետք է տարածվեն անհապաղ վերականգնման շտաբերի կողմից – էջ 221
- Աղյուսակ 103. Աղբի հեռացման կենտրոնակայանի՝ աղբի հավաքման խմբի և աղբի մշակման խմբի աշխատանքային կետերը – էջ 223
- Աղյուսակ 104. Շրջակա մարզերից պահանջվող կետերը – էջ 224
- Աղյուսակ 105. Առնչվող ընկերություններից պահանջվող կետերը – էջ 225
- Աղյուսակ 106. Բնակիչներին տրվող տեղեկատվությունը – էջ 226

-
- Աղյուսակ 107. Հնարավոր ժամանակավոր թափման վայրերը – էջ 229
- Աղյուսակ 108. Շինարարական աղբի տեղափոխմանն առնչվող հնարավոր միջոցառումները – էջ 230
- Աղյուսակ 109. Կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանն ուղղված հրատապ միջոցառումների ընդհանուր պատկերը – էջ 232
- Աղյուսակ 110. Ապրանքների նոմենկլատուրային նմուշներ, որոնք ազատված են մաքսազերծումից և հարկերից – էջ 239
- Աղյուսակ 111. Հնարավոր աջակցության ցուցակը – էջ 251
- Աղյուսակ 112. Վնասված շենքերի վերականգնման/վերակառուցման միջոցառումների կետերն ըստ փուլերի – էջ 253
- Աղյուսակ 113. Աղմուկի մակարդակի չափանիշները – էջ 253

Նկարներ

- Նկար 1. Ուղղահայաց և հորիզոնական մակարդակներում կազմակերպությունների համագործակցություն – էջ 3
- Նկար 2. Աղետների կառավարման ցիկլի հայեցակարգ – էջ 3
- Նկար 3. Աղետների կառավարման ցիկլի ներքո իրականացվող գործողությունները, ըստ ժամանակագրական հերթականության – էջ 4
- Նկար 4. Երևան քաղաքի ռելիեֆային քարտեզ, ստեղծված ըստ ԲԹՄ (Գեոռիսկ, 2011) – էջ 11
- Նկար 5. Ակտիվ խզվածքների քարտեզ ըստ Գեոռիսկի: Վերադրված են պատմական և դիտված երկրաշարժերի տվյալներն ըստ ՍՊԾ-ի – էջ 13
- Նկար 6. Երևան քաղաքի հողօգտագործման ներկայիս քարտեզը – էջ 15
- Նկար 7. Սցենարային երկրաշարժերի խզվածքի մոդելներ – էջ 16
- Նկար 8. Արձագանքման վերլուծության համար մուտքային ալիքի ձևերը – էջ 17
- Նկար 9. Մուտքային ալիքի ձևի տրամաբանական ծառը – էջ 17
- Նկար 10. Արագացման բաշխվածությունը գրունտի մակերեսին – էջ 18
- Նկար 11. Կամուրջների վնասի գնահատման արդյունքները – էջ 20
- Նկար 12. Ճանապարհային ցանցը և ապագա հատակագիծը (Երևանի քաղաքի Գլխավոր Հատակագիծ) – էջ 33
- Նկար 13. Հարցեր Երևան քաղաքի քաղաքաշինության վերաբերյալ – էջ 36
- Նկար 14. Արագ արձագանքման ծառայությունների կառավարման ու գործունեության վերահսկման համակարգ – էջ 96
- Նկար 15. Տարածքային միավորման մեջ ԱԻ պատրաստվածության ապահովման փոխհամագործակցության կազմակերպման – էջ 108
- Նկար 16. ԱԻ աջակցման միջոցառումների համակարգ – էջ 109
- Նկար 17. Շինարարական աղբի հեռացման հնարավոր վայրեր – էջ 155
- Նկար 18. Շարժական զուգարան առանց ողողման ջրի – էջ 157
- Նկար 19. Հորի օգտագործմամբ ժամանակավոր զուգարան – էջ 157
- Նկար 20. Աղբի մշակման աշխատանքների ընդհանուր նկարագիրը – էջ 224

Մաս 1 Հիմնական դրույթներ

Բաժին 1 Հիմնական դրույթներ

Գլուխ 1. Պլանի նպատակը

1. Պլանը հստակ սահմանում է սեյսմիկ աղետի արդյունավետ կառավարմանը ուղղված բոլոր միջոցառումները, որոշում է բոլոր մասնակից կողմերի դերերը և պարտականությունները, նկարագրում է իրականացվելիք գործողությունները: Պլանում հստակ նշված են կողմերի միջև փոխհամագործակցության, հրահանգների փոխանակման և իրավիճակներին արձագանքման շղթան, ինչպես նաև հաղորդակցման ուղիները և անհրաժեշտ տեղեկատվության ու աջակցության ստացման ուղիները:

2. Երևանում սեյսմիկ աղետի ռիսկը նվազեցնելու համար անհրաժեշտ է խթանել սեյսմիկ աղետի կառավարման գործողությունները, որոնք ներառում են պլանների ձևավորում և միջոցառումների իրականացում: Պլանը նկարագրում է իրականացվելիք գործողությունները: Որպես պլանի հիմնական դրույթ գլոբալ օրակարգ է սահմանվում “Աղետների բազմակողմանի կառավարման գործողություններին նպաստելը”:

3. “Աղետների բազմակողմանի կառավարման գործողություններին նպաստելը” նշանակում է, որ ամբողջ անձնակազմը և բոլոր մարմինները պետք է ինքնաբավ հիմունքներով և ակտիվ խթանեն պլանում նշված սեյսմիկ աղետի կառավարման գործողությունները ստորև նշված մի քանի տեսանկյուններից:

Գլուխ 2. Աղետների հեռանկարային կառավարումը (վերջնական նպատակների սահմանում)


Երկրաշարժի ռիսկերը մեղմացնելու նպատակով առաջարկվում է խթանել երկրաշարժի կառավարման գործողությունները վերջնական նպատակները որոշելուց հետո, որոնք են՝ 1) մարդկային կյանքերի փրկում, 2) քաղաքացիներին՝ գոյատևման միջոցներով ապահովում, 3) սոցիալական/տնտեսական համակարգերի պահպանում և 4) քաղաքի և բնակչության ղեկավարման ապահովում:

Գլուխ 3. Աղետների բազմակողմանի կառավարում (ուղղահայաց և հորիզոնական մակարդակներում կազմակերպությունների միջև պատասխանատվությունների բաշխում, ինչպես նաև իրենց սեփականությունը համարող շահառուների համագործակցություն)

Ամբողջ անձնակազմը և բոլոր մարմինները պետք է խթանեն աղետների կառավարման գործողությունները: Սեյսմիկ աղետի կառավարման գործողությունները հեշտացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի բոլոր կազմակերպությունները/քաղաքացիները հստակեցնեն իրենց դերերը և ներգրավվեն

գործողությունների մեջ՝ մեկը մյուսին համակարգելու միջոցով (տես նկար 1):


Նկար 1 Ուղղահայաց և հորիզոնական մակարդակներում կազմակերպությունների համագործակցություն




Գլուխ 4. Աղետների պարբերաբար կառավարում (Գործողությունների հերթագայում աղետների կառավարման ցիկլի շրջանակներում)

Սեյսմիկ աղետների հետևանքները մեղմացնելու համար կարևոր է, որ մեղմացմանն ու աղետների արձագանքմանն ուղղված գործողությունները նախաձեռնվեն մինչև աղետի ծագելը: Աղետի ծագելուց անմիջապես հետո աղետի արձագանքմանը հետևում են հետագա վերականգնողական/վերակառուցման գործողությունները: Ավելին, վերականգնումը/ վերակառուցումը պետք է միտված լինի երկրաշարժին դիմակայելու հնարավորությունների զարգացմանը և չպետք է սահմանափակվի միայն մինչև երկրաշարժը վիճակի վերականգնմամբ, այլ պետք է փոխկապակցված լինի հետագա երկրաշարժերի դեպքում աղետի հետևանքների մեղմացման և պատրաստվածության հետ (տես նկարներ 2 և 3):

Նկար 2 Աղետների կառավարման ցիկլի հայեցակարգ



Նկար 3 Աղետների կառավարման ցիկլի ներքո իրականացվող գործողությունները, ըստ ժամանակագրական հերթականության



Գլուխ 5. Աղետների որոշակի/արդյունավետ կառավարում (գործողություններ՝ ելնելով ռիսկերի վերաբերյալ իրազեկվածությունից)

Վտանգի, խոցելիության, ինչպես նաև ռիսկերի վերաբերյալ իրազեկվելուց հետո աղետների կառավարման գործողությունները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է ձևակերպել աղետների կառավարման պլանը և ձեռնարկել համապատասխան քայլեր ուղղված այնպիսի ռիսկերի նվազեցմանը, որոնք ընտրվել են ըստ կարևորության, հրատապության և արձագանքման գործողությունների արդյունավետության:

Գլուխ 6. Աղետների ճիշտ և իրագործելի կառավարում (մեկի հնարավորությունների հետ համահունչ գործողություններ և գործողությունների համախմբում)

Ինչ վերաբերում է երկրաշարժի վտանգին, դժվար է ճշգրտորեն կանխատեսել, թե երբ, որտեղ և որքան մեծ վտանգ կարող է տեղի ունենալ նույնիսկ առաջադեմ տեխնոլոգիայի կիրառման դեպքում: Պետք է նաև խուսափել վտանգի և ռիսկի գնահատման արդյունքներում անճշտություններից: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում իրականացնել իրական քայլեր՝ հաշվի առնելով բնակիչների կարիքները և ֆինանսական պայմանները, իսկ հետո ձևավորել սեյսմակայուն քաղաք բոլոր իրական քայլերի համախմբմամբ: Քայլերի իրականացման հետ միասին անհրաժեշտ է թարմացնել ռիսկի գնահատման արդյունքները և վերանայել պլանը՝ հիմնվելով գնահատման թարմացված արդյունքների վրա:

Գլուխ 7. Պլանավորման քաղաքականությունը

Սույն պլանի ձևակերպման համար անհրաժեշտ քաղաքականությունները սահմանվում են հետազոտության ընթացքում առաջացած հարցերի հետ փոխկապակցվածության մեջ, որոնցից են՝

- 1) ռիսկի գիտական գնահատման և երկրաշարժի սցենարների օգտագործում
- 2) կենտրոնացում հետևանքների մեղմացման վրա՝ արդյունավետ գործողություններ իրականացնելու համար.
- 3) խոցելիության նվազեցում՝ ընդլայնելով նախքան աղետը ձեռնարկվող քայլերը, ինչպես օրինակ շենքերի ամրացում՝ հաշվի առնելով պիտանելիությունը.
- 4) աղետների կառավարման վերաբերյալ բոլոր քաղաքացիների իրազեկվածության բարձրացում՝ սկսած վարչական ծառայողներից մինչև բնակիչները.
- 5) կենսունակ պլանի ձևակերպում, որում շեշտը դրվում է համակարգի/բյուջեի/կառավարման բարձրացման վրա առնչվող կազմակերպությունների և համայնքների (բնակիչների խմբեր) միջև համագործակցության միջոցով.
- 6) աղետների կառավարման գործողությունների խթանում աղետների կրթության և աղետների վերաբերյալ տեղեկատվության տարածման միջոցով՝ օգտագործելով իրական ժամանակի սեյսմիկ ինտենսիվության արտապատկերման համակարգը.

Գլուխ 8. Պլանի առաջնահերթությունները

Վերոնշյալ քաղաքականության ծրագրերում նկարագրված հիմնական տարրերը կհեշտացնեն երկրաշարժի ժամանակ մեղմացմանն ուղղված գործողությունները պլանի առաջնահերթությունների ներքո: Առաջնահերթությունները ընտրվել են վերանայման և ընթացիկ իրավիճակի գնահատման միջոցով, ինչպես ցույց է տրված հավելված 1-ում: Ընտրված առաջնահերթություններից բարձր կարևորություն ունեցողներ են՝

- 1) աղետների կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում և տեղեկատվության տարածում (I),
- 2) բնակավայրերում ազատ տարածքների ապահովման և վերաձևավորման խթանում (I),
- 3) ճանապարհների բարելավում (I),
- 4) շենքերի սեյսմակայունության բարձրացում (I),
- 5) վնասի գնահատման հետազոտություն և ուսումնասիրություն (I),
- 6) համագործակցություն և համատեղ աշխատանք կամավորների հետ (II),
- 7) հրդեհի բռնկման և պայթյունի կանխարգելում, ինչպես նաև վտանգավոր նյութերի պահպանման և օգտագործման անվտանգության բարձրացում (II):

Ծանուցում՝ (Որպես պլանի հավելվածներ կազմված են գործողությունների պլաններ վերոնշյալ կետերի հետ կապված քայլերի սահուն և ժամանակին իրականացման համար):

Գլուխ 9. Այլ դրույթներ՝ մանրամասն պլաններ

1. Առնչվող կազմակերպությունները պետք է պատրաստեն մանրամասն պլաններ աջակցություն տրամադրելու համար՝ հաշվի առնելով յուրաքանչյուր կազմակերպության պայմանները և տարածաշրջանային յուրահատկությունները, ինչպես նաև նպաստեն այս կազմակերպությունների դերերի և գործողությունների իրականացմանը՝ մեկը մյուսին համակարգելով: Մանրամասն պլանի նախապատրաստման համար պահանջվող առնչվող կազմակերպությունները, ինչպես նաև ԱԽՆ-ի հաստատմանը ներկայացնելու վերջնաժամկետը պետք է սահմանված լինեն պլանում: Առնչվող կազմակերպությունները հետևյալն են՝ ՀՀ պետական կառավարման մարմինները և դրանց ստորաբաժանումները, Երևանի քաղաքապետարանը իր բոլոր ստորաբաժանումներով, Երևանի քաղաքի բոլոր վարչական շրջանները, աղետների կառավարմամբ զբաղվող բոլոր հաստատությունները և համայնքները (բնակիչների խմբեր, ձեռնարկություններ և դպրոցներ)

Գլուխ 10. Ծանոթացում պլանի հետ և վերջինիս թարմացում

Ամեն տարի սույն պլանը, ինչպես նաև մանրամասն պլանները պետք է ենթարկվեն անհրաժեշտ փոփոխությունների վերանայման միջոցով: ՀՀ պետական կառավարման մարմինները և աղետների կառավարմամբ զբաղվող մյուս կազմակերպությունները կատարում են անհրաժեշտ փոփոխություններ՝ ուսումնասիրելով սույն պլանի և իրենց մանրամասն պլանների/քայլերի միջև համապատասխանելիությունը: Բացի դրանից, կնշվեն նաև կրթական/ուսուցողական գործողությունները, ներառյալ նաև այն գործողությունները, որոնք միտված են տեղեկացնելու կազմակերպությունների անդամներին իրենց դերերի մասին:

Գլուխ 11. Ռիսկի կառավարման մարմինների հիմնական պարտականությունները

1. Երկրաշարժի վնասի մեղմացումը հիմնված է հետևյալ հիմնական գաղափարների վրա՝

1) անհատ քաղաքացիները պետք է ներգրավվեն ինքնուրույն նախաձեռնած գործողությունների մեջ “Դու պետք է պատասխանատվություն կրես քո և քո մերձավորների սեփական անվտանգությունը և ունեցվածքը պաշտպանելու համար” գաղափարի ներքո.

2) համայնքները (բնակիչների խմբերը, թաղային միավորները՝ դպրոցները և ձեռնարկությունները) պետք է ներգրավվեն փոխադարձ օգնության

գործողություններում “Դու պետք է պատասխանատվություն կրես քո համայնքի համար” գաղափարի ներքո.

3) քաղաքը, իր վարչական շրջաններով և ռիսկի կառավարմամբ զբաղվող կազմակերպությունները պետք է ներգրավվեն հասարակությանը օգնելու գործողություններում, որոնք նպաստում են ինքնուրույն նախաձեռնվող և փոխադարձ օգնության գործողություններին “սեյսմակայուն Երևան քաղաք կառուցելու” համար:

Ելնելով վերոնշյալ հիմնական գաղափարներից՝ աղետների կառավարմամբ զբաղվող կազմակերպությունները/թաղային միավորները/քաղաքացիները պետք է իրականացնեն համապատասխան պարտականություններ:

Գլուխ 12. Երևան քաղաքում սեյսմիկ աղետների աղետի կառավարման պլան

Պլանը ստեղծվել է 2-րդ փուլի ընթացքում՝ հիմնվելով 1-ին փուլի ընթացքում իրականացրած վնասի գնահատման և երկրաշարժի հետևանքների ստեղծված սցենարի վրա: Երևան քաղաքում սեյսմիկ աղետների աղետի կառավարման՝ ներառում է աղետների կառավարման նոր միջոցառումներ ընթացիկ միջոցառումների հետ մեկտեղ: Խորհուրդ է տրվում կիրառել սույն պլանը Երևան քաղաքի համար և շարունակել ընթացիկ միջոցառումները ապագայում:

Ակնկալվում է, որ ՀՀ ԱԻՆ ՓԾ, հետազոտական խմբի համակատարող կազմակերպությունը, կկիրառի պլանը Երևան քաղաքում սեյսմիկ աղետի կառավարման միջոցառումներին նպաստելու և բնակիչների/թաղային միավորների/առնչվող կազմակերպությունների կողմից ձեռնարկվող միջոցառումների իրականացումը հեշտացնելու համար:

Երևան քաղաքի համար երկրաշարժի ռիսկի կառավարման պլանը բաղկացած է 6 մասից՝ 41 բաժնից (տես Աղյուսակ 1).

Մաս 1: Ընդհանուր դրույթներ (բաժին 1-բաժին 3) ներկայացված են քաղաքականությունը, վնասի գնահատման արդյունքները և աղետի ռիսկի կառավարման մարմինների հիմնական պարտականությունները:

Մաս 2: Հետևանքների մեղմացման պլանը (բաժին 4-բաժին 9) ներկայացված են հետևանքների մեղմացման առաջնահերթ գործողությունները, որպես մեծ մարտահրավերներ սեյսմակայուն մարդկության/համայնքի/քաղաքաշինության համար:

Մաս 3: Պատրաստվածության պլան (բաժին 10-բաժին 21) բացատրում է տարբեր հարցեր՝ ներառյալ նախնական արձագանքումը, հաղորդակցությունը, հրդեհավտանգ նյութերը, փրկարարական գործը/տարահանումը, փոխադրումը, բժշկական օգնությունը, կորած համարվող անձինք, խմելու ջուրը/կերակուրը, կենսապահովման գծերը, թափոնները և այլն:

Մաս 4: Աղետների արձագանքման պլանը (բաժին 22-բաժին 35) բացատրում է աղետների արձագանքման իրական գործողությունները երկրաշարժի ժամանակ:

Մաս 5: Վերականգնման/վերակառուցման պլանը (բաժին 36-բաժին 40) բացատրում է վերականգնման պլանի շրջանակը, որը մշակված է աղետների արձագանքումից հետո ավելի հարմարավետ, կենսունակ համայնք կառուցելու համար:

Մաս 6: Աջակցության պլանը (բաժին 41) բացատրում է այլ տարածքներում ուժեղ երկրաշարժի դեպքում իրականացվող աջակցության գործողությունների պլանը:

Աղյուսակ 1 Պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

	Կառուցվածք	Բովանդակություն
Մաս 1	Հիմնական դրույթներ	Բաժին 1 Հիմնական դրույթներ Բաժին 2 Քաղաքի ընդհանուր ակնարկ և վնասի գնահատում Բաժին 3 Ռիսկի կառավարման մարմինների հիմնական պարտականությունները
Մաս 2	Հետևանքների մեղմացման պլան	Բաժին 4 Հետևանքների մեղմացման միջոցառումների իրականացմանն առնչվող քաղաքի կառավարումը Բաժին 5 Մարդկային սեյսմակայուն պոտենցիալի զարգացումը Բաժին 6 Սեյսմակայուն համայնքի ձևավորում Բաժին 7 Սեյսմակայուն քաղաքաշինություն Բաժին 8 Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացումը Բաժին 9 Սեյսմիկ ուսումնասիրություն և հետազոտություն
Մաս 3	Պատրաստվածության պլան	Բաժին 10 Նախապատրաստական աշխատանքները և քաղաքային համակարգի աջակցությունը դրանց անցկացմանը Բաժին 11 Բնակչության և համայնքների գործունեությունը երկրաշարժերին պատրաստվածության հարցերում Բաժին 12 Առաջնային գործողությունների իրականացմանն ուղղված նախապատրաստական միջոցառումներ Բաժին 13 Կապի ոլորտի նախապատրաստական աշխատանքներ Բաժին 14 Նախապատրաստական միջոցառումներ հրդեհների կանխարգելման ուղղությամբ Բաժին 15 Նախապատրաստական աշխատանքներ տարահանման և փրկարարական աշխատանքների վերաբերյալ Բաժին 16 Պատրաստվածություն ԱԻ-ում փոխադրումների համար Բաժին 17 Նախնական պատրաստություն, կապված շտապ բժշկական օգնության ցուցաբերման հետ Բաժին 18 Անհայտ կորածների որոնմանը և դիակների հավաքմանը վերաբերող նախնական պատրաստություն Բաժին 19 Ջրով և պարենամթերքով ապահովումը, բաշխման համակարգը Բաժին 20 Կոմունալ-էներգետիկ, տրանսպորտային հաղորդակցության, կապի, հակասելավային պաշտպանության օբյեկտների վերականգնման պատրաստականության ապահովման նախապատրաստական միջոցառումներ

		<p>Բաժին 21 Պատրաստվածությունը շինարարական աղբի մշակման և միջավայրի ու սոցիալական նկատառումների վերաբերյալ այլ հարցերում</p>
<p>Մաս 4</p>	<p>Արտակարգ իրավիճակների արագ արձագանքման պլան</p>	<p>Բաժին 22 ԱՒ արձագանքման հիմունքները</p> <p>Բաժին 23 Քաղաքի ԱՒ կառավարման շտաբի ձևավորումը, գործունեության կազմակերպումը</p> <p>Բաժին 24 Տեղեկատվության հավաքումը և փոխանցումը</p> <p>Բաժին 25 Պահպանություն, ճանապարհներով երթևեկության կարգավորում, հրատապ տեղափոխումներ</p> <p>Բաժին 26 Համագործակցությունը արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման կազմակերպությունների հետ</p> <p>Բաժին 27 Տարահանում և փրկարարական աշխատանքներ</p> <p>Բաժին 28 Շտապ բժշկական օգնությունը /ՇԲՕ/, առողջապահությունը և սանիտարական պայմանները</p> <p>Բաժին 29 Անհայտ կորածների որոնում և փրկում: Դիակների հավաքում</p> <p>Բաժին 30 Հակահրդեհային գործունեություն և պաշտպանություն վտանգավոր նյութերից</p> <p>Բաժին 31 Հրատապ միջոցառումներ ուսումնական հաստատություններում</p> <p>Բաժին 32 Մենդամթերքի և ջրի մատակարարում</p> <p>Բաժին 33 Կենսաապահովման գծերի, հեռահաղորդակցության և երթևեկության օբյեկտների անհապաղ վերականգնում</p> <p>Բաժին 34 Կենցաղային և շինարարական աղբի ու մարդկային արտաթորանքի մշակում</p> <p>Բաժին 35 Հրատապ միջոցառումներ՝ ուղղված կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանը</p>
<p>Մաս 5</p>	<p>Վերականգնման/վերակառուցման պլան</p>	<p>Բաժին 36 Վերականգնման/վերակառուցման հիմնական գաղափարները</p> <p>Բաժին 37 Վերականգնման/վերակառուցման շտաբեր</p> <p>Բաժին 38 Վերականգնման/վերակառուցման պլանի ձևակերպում</p> <p>Բաժին 39 Քաղաքացիական կյանքի կայունությունը</p> <p>Բաժին 40 Քաղաքի վերակառուցումը</p>
<p>Մաս 6</p>	<p>Օգնության պլան</p>	<p>Բաժին 41 Օգնության ցուցաբերման պլանը</p>


Բաժին 2 Քաղաքի ընդհանուր ակնարկ և վնասի գնահատում

Գլուխ 13. Բնական պայմանների համառոտ բնութագիր և վնասի գնահատում

1. Ռելիեֆի տեսանկյունից Երևան քաղաքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 830մ-ից (հարավ-արևմտյան մաս) 1550.0մ (հյուսիս-արևելյան մաս) բարձրության վրա (նկար 4): Կենտրոնի բարձրությունը մոտ 1000մ է: Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին: Երևան քաղաքի տարածքը բաժանվում է ռելիեֆի չորս տեսակների, որոնք են՝

- 1) Եղվարդի հրաբխային սարահարթը, Կոտայքի հրաբխային սարահարթը և Ջրվեժ-Նորք հրաբխային սարահարթը
- 2) Շորաղբյուր-Նուբարաշեն թեք հարթությունը և Էրեբունի լեռնաշղթան
- 3) Հրազդան, Գետառ և Շորաղբյուր գետերի գետային հարթավայրը
- 4) Մշակված հողերը

Նկար 4. Երևան քաղաքի ռելիեֆային քարտեզ, ստեղծված ըստ ԲԹՄ (Գեոոիսկ, 2011)



2. Երկրաբանություն տեսանկյունից Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է ($P_3^1 sh$), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են: Ծրագրի շրջանակներում հավաքագրվել է Երևանում առկա հորատանցքերի վերաբերյալ տվյալների բազան:

Այն բաղկացած է ընդհանուրը 5,094 հորատանցքերի տվյալներից: Ապարների ֆորմացիայի մակերևույթի բարձրությունը ուսումնասիրվել է՝ օգտագործելով այդ տվյալների բազան: Երևանում ապարները ուսումնասիրվել են հետևյալ ձևով՝

1) Հրաբխային ապարներ (բազալտ, խարամ, ծուլված տուֆ, կլինկեր (հոլանդական աղյուս) Ձուլված տուֆը նստվածքային ապար է իր ուղիղ իմաստով, բայց ներառված է այս կատեգորիայի մեջ պետրոգենետիկական տեսանկյունից:

2) Նստվածքային ապարներ (կավակրաքար, կրաքար, ավազաքար, կոնգլոմերատ)

Ապարի մակերևույթը բարձր է հյուսիսից դեպի հարավ-արևելք մասում, և ցածր՝ կենտրոնից հարավ-արևմուտք մասում:

Գլուխ 14. Տեկտոնիկա և ակտիվ խզվածքներ

1. Հայաստանը տեղակայված է Արաբական և Եվրասիական սալերի բախման սահմանի հյուսիսային մասի վրա: Արաբական սալը շարժվում է դեպի հյուսիս 20-30 մմ/տարի արագությամբ և բախվում է Եվրասիական սալի հետ: Հետևաբար, կովկասյան տարածաշրջանը սեղմված և բարձրացված է: Հյուսիս-հարավ ուղղությամբ սեղմման շնորհիվ Հայաստանի շուրջ տեկտոնիկան բնութագրվում է հետևյալ կերպ. 1) Արմ.Հս.Արմ.Արլ.Հվ.Արլ. ձգվող վերնետք և կողաշարժ խզվածքներ, և 2) հյուսիս-հարավ ուղղությամբ ձգման առանցքների ձևավորում:

2. Նկար 5-ում ցույց է տրված ակտիվ խզվածքների քարտեզն ըստ Գեոոհսկի, այստեղ վերադրված են պատմական և դիտված երկրաշարժերն ըստ ՍՊԾ-ի: Հայաստանում հիմնական ակտիվ խզվածքներն են Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքը ՓՍՍԽ), Մոավի խզվածքը, Ախուրյանի խզվածքը, Գառնիի խզվածքը (ԳԽ) և Երևանի խզվածքը (ԵԽ):


3. Գառնիի խզվածքն անցնում է Նախիջևանով (Ադրբեջան), Երևան քաղաքի արևելյան մասով և միավորվում է ՓՍՍԽ-ի հետ (նկար 11): Երկարությունը ~200 կմ է: ԳԽ-ի երկայնքով տեղի են ունեցել 4 ուժեղից չափավոր պատմական երկրաշարժեր: Դրանք են՝ 906թ.-ի երկրաշարժը (M 7.0), 1679թ.-ի Գառնիի երկրաշարժը (M 7.0), 1828թ.-ի երկրաշարժը (M 7.0) և 1988թ.-ի Սպիտակի երկրաշարժը (Ms 6.9):

4. Երևանի խզվածքը թաքնված (կույր) խզվածք է, որը ենթադրաբար գտնվում է Երևան քաղաքի հարավում՝ հիմնվելով գրավիտացիոն անոմալիաների տվյալների վրա (Երևանի խզվածքի վերաբերյալ Գեոոհսկի հաշվետվություն): Այնուամենայնիվ, այս ծրագրի համար Նոր-Ուղիում իրականացված պիլոտային խրամատը հաստատեց փխրուն մանրախճի վրա մեզոզոյան նստվածքը ծածկող փոքր անկյամբ վերնետք խզվածքը (վրաշարժ): ԵԽ-ի մի մասը կարող է հասնել մակերևույթին, սակայն, ավելի մանրամասն խրամատային հետազոտության անհրաժեշտություն կա: Ըստ փոքրից չափավոր երկրաշարժերի մեխանիզմի վերլուծության, Երևանից 30կմ հեռավորության սահմաններում դիտարկված տեղաշարժի գերակշռող տեսակը վերնետք է (Թովմասյան, 2008թ.): 893թ.-ի Դվինի երկրաշարժը հայտնի է, քանի որ Հայաստանի հնագույն մայրաքաղաք Դվինը ստացել էր լուրջ վնասներ: Դվինը գտնվում է ԵԽ-ի մոտ: Այնուամենայնիվ, 893թ.-ի երկրաշարժի էպիկենտրոնի մանրամասները

ճշգրտված չեն: Կա այլ կարծիք, որ ԳԻՆ-ն է առաջացրել այս երկրաշարժը (Գեոռիսկի հաշվետվությունը Երևանի խզվածքի վերաբերյալ): Բացի դա, համաձայն մեկ այլ կարծիքի՝ Դվինի երկրաշարժ երկու անգամ է տեղի ունեցել՝ 863թ.-ին և 893թ.-ին (Guidoboni, 1997):

Երևանի խզվածքի վերաբերյալ): Բացի դա, համաձայն մեկ այլ կարծիքի՝ Դվինի երկրաշարժ երկու անգամ է տեղի ունեցել՝ 863թ.-ին և 893թ.-ին (Guidoboni, 1997):

Նկար 5. Ակտիվ խզվածքների քարտեզ ըստ Գեոռիսկի: Վերադրված են պատմական և դիտված երկրաշարժերի տվյալներն ըստ ՍՊԾ-ի



Գլուխ 15. Բնակչություն, սոցիալական պայմաններ

1. Ելնելով վիճակագրական տվյալներից (ներառյալ 2020թ. հեռանկարով մշակված Գլխավոր Հատակագծի հաշվարկված տվյալները)՝ տարածքը, բնակչությունը և բնակչության խտությունը, ըստ համայնքների նշված են Աղյուսակ 2-ում: Երևան քաղաքում բնակչության բաշխվածությունը պայմանավորված է աշխարհագրական պատճառներով և հողօգտագործմամբ, իսկ բնակչության խտությունը համեմատաբար մեծ է քաղաքի հյուսիսային հատվածից կենտրոնական հատվածն ընկած մասում: Բնակարանային ֆոնդի զարգացումը քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածից հարավ-արևմտյան հատված ակտիվացել է վերջերս, և ակնկալվում է, որ այդ տարածքներում կդիտվի բնակչության փոքր աճ:

2. Բնակչության տեղաշարժը, ըստ համայնքների նույնպես կգրանցի թեթև աճ 1,102,000 մարդուց 2003թ մինչև 1,119,000 մարդ 2010թ երկար ժամանակահատվածի համար: Ապագայում բնակչության աճ չի ակնկալվում:

3. Ինչ վերաբերվում է Երևան քաղաքի բնակչության տարիքային բաշխմանը, ապա 2010թ. 63 տարեկանից բարձր 141,737 մարդ է եղել, ովքեր կազմել են ընդհանուր բնակչության 12.7%, 16-62 տարեկան 769,319 աշխատող մարդիկ՝ 68.9%, իսկ 0-15 տարեկան 205,592 մարդիկ կազմել են 18.4%:

Աղյուսակ 2. Բնակչությունը և բնակչության խտությունը, ըստ համայնքների

Համայնք	Տարածք ¹⁾ (հա)	Բնակչություն ²⁾ (×1,000)	Բնակչության խտություն (Բնակ./հա)
Աջափնյակ	2,600	108.2	42
Ավան	820	51.0	62
Արաբկիր	1,320	130.8	99
Դավթաշեն	650	41.1	63
Էրեբունի	4,940	121.9	25
Կենտրոն	1,340	130.6	97
Մալաթիա-Սեբաստիա	2,530	141.8	56
Նոր Նորք	1,450	147.0	101
Նորք Մարաշ	470	11.3	24
Նուբարաշեն	1,720	9.7	6
Շենգավիթ	4,060	146.5	36
Քանաքեռ-Զեյթուն	760	79.3	104
Ընդամենը	22,660	1,119.2	49

Աղբյուր՝ 1) Երևան քաղաքի Գլխավոր Հատակագիծ (2005թ.)

2) Ազգային վիճակագրական ծառայություն (2010թ.): Հայաստանի Հանրապետության մարզերը նկարներով


Գլուխ 16. Հողօգտագործում

1. Երևան քաղաքի քաղաքաշինության Գլխավոր Հատակագիծը (այսուհետ՝ «Գլխավոր Հատակագիծ») մշակվել է 2005թ.: Գլխավոր Հատակագծում նշված թիրախային ժամանակահատվածը 2006թ.-ից 2020թ. է: 2010թ. սկսած մինչ այժմ Գլխավոր Հատակագիծը վերանայվում է Երևանի քաղաքապետարանի և «Երևաննախագիծ» ՓԲԸ կողմից:

2. Համաձայն Երևան քաղաքի 2010թ. վիճակագրական տվյալների՝ Երևան քաղաքի հողերը ներառում են՝ գյուղատնտեսական հողեր - 42.55կմ² (18.7%), հասանելի գյուղատնտեսական հողեր - 14.435կմ² (6.4%), բնակավայրերի համար նախատեսված հողեր, ներառյալ հասարակական շենքերը - 67.02կմ² (29.5%), արդյունաբերական հողեր - 27.66կմ² (12.2%), կանաչ տարածքներ, ներառյալ զբոսայգիներ - 11.13կմ² (4.9%), պուրակներ - 12.39կմ² (5.5%).

3. Գլխավոր հատակագծում բերված հողօգտագործման ներկայիս քարտեզը ցույց է տրված Նկար 6-ում:

Նկար 6 Երևան քաղաքի հողօգտագործման ներկայիս քարտեզը




Գլուխ 17. Սցենարային երկրաչափեր

1. Գառնիի խզվածքը համարվում է 200կմ երկարությամբ ակտիվ խզվածք, որը կազմված է հինգ սեգմենտներից: Դրանցից ԳԽ2 և ԳԽ3 սեգմենտները գտնվում են Երևանին մոտ: Ելնելով պատմական գրառումներից՝ ենթադրվում է, որ այս սեգմենտներն առաջացրել են երկրաչափեր վերջին մի քանի հարյուր տարիների ընթացքում: Այս սեգմենտների շարժի հետևանքով երկրաչափի առաջացման հավանականությունը մոտ ապագայում փոքր է՝ հաշվի առնելով, որ ներքին ակտիվ խզվածքի շարժի հետևանքով առաջացած երկրաչափերի կրկնվելու ստանդարտ ինտերվալը 1000 տարուց ավել է: Այնուամենայնիվ, չի կարելի ամբողջովին հերքել

մոտ ապագայում այս սեգմենտների երկրաշարժ առաջացնելու հավանականությունը՝ հաշվի առնելով 1679թ. Գառնիի երկրաշարժն առաջացրած աղբյուրի սեգմենտի հետ կապված անորոշությունը: Երևան քաղաքը կրել է ծանր վնասներ 1679թ. երկրաշարժի ժամանակ, և եթե նմանատիպ երկրաշարժ կրկին տեղի ունենա, ապա ենթադրվում է, որ կստեղծվի նույն իրավիճակը: Այդ իսկ պատճառով, Գառնիի խզվածքի ԳԽ2 և ԳԽ3 սեգմենտներն ընտրվել են որպես սցենարային երկրաշարժեր:

Նկար 7. Սցենարային երկրաշարժերի խզվածքի մոդելներ



Աղյուսակ 3 Սցենարային երկրաշարժերի խզվածքային պարամետրերը

	Գառնիի խզվածք (ԳԽ2)	Գառնիի խզվածք (ԳԽ3)
Մագնիտուդ (Mw)	7.0	7.0
Խզվածքի տեսակը	Վարնետք խզվածք Աջակողմյա կոմպոնենտով	Վարնետք խզվածք Աջակողմյա կոմպոնենտով
Երկարությունը (կմ)	57	50
Անկումը (աստիճան)	90	90
Խորությունը (Վերինից Ստորին) (կմ)	3-12	3-12
Լայնությունը (կմ)	9	9


Գլուխ 18. Հաշվարկված գրունտի շարժումը

Ընտրված մարման հավասարումներով հաշվարկված արագացումը միջինացված է՝ ելնելով տրամաբանական ծառում նշված կշիռներից և հաշվարկվել է արագացումն ինժեներական սեյսմիկ արմատական ապարում: Օգտագործվել են Ակկեր և Բոմմերի (2010), Բուրե և Աթկինսոնի (2008) ու Չիոու և Յանգսի (2008) բանաձևերը:


Ենթամակերևութային ուժեղացման առանձնահատկությունը գնահատվել է 1D հավասարագոր գծային արձագանքման վերլուծության միջոցով՝ յուրաքանչյուր բջջում

օգտագործելով SHAKE91: Արձագանքման վերլուծության երեք մուտքային ալիքները հետևյալն են. ա) 1988թ. Սպիտակի երկրաշարժի ալիքի ձևը ($M_w=6.9$), որը դիտարկվել է Ղուկասյանում, բ) 7 մագնիտուդով երկրաշարժի ալիքի ձևը նույն խզվածքի տեսակով, որը դիտարկվել է համեմատական հեռավորության վրա սցենարային երկրաշարժի մոդելի համար, ինչպես ցույց է տրված Նկար 8-ում և 9-ում: Հաշվարկված արդյունքները ցույց են տրված Նկար 10-ում:


Նկար 8 Արձագանքման վերլուծության համար մուտքային ալիքի ձևերը



Նկար 9 Մուտքային ալիքի ձևի տրամաբանական ծառը



Նկար 10 Արագացման բաշխվածությունը գրունտի մակերեսին



Գլուխ 19. Պլանավորման համար հաշվարկված վնասները

Ելնելով ծրագրում հաշվարկված վնասներից, առնչվող գործակալությունների հետ քննարկման միջոցով, ինչպես նաև հղում կատարելով առկա պլաններին և կանոնակարգերին՝ սահմանվել են պլանավորման համար հաշվարկված վնասները:

Գլուխ 20. Շենքեր

Շենքի վնասը հաշվարկվել է բնակելի շենքերի և հիվանդանոցների/դպրոցների համար ինչպես ցույց է տրված աղյուսակ 4-ում և 5-ում:

ԳԽ2 սցենարային երկրաշարժի դեպքում ծանր վնասվել են 860 բազմաբնակարան շենք և 12.800 սեփական տուն: Ծանր վնաս կրած բնակելի շենքերի բնակելի միավորների թիվը 53.700 է: Արդյունքները օգտագործվում են պլանավորման համար:


Աղյուսակ 4 Բնակելի շենքերի վնասը

h/h	Համայնք	Հաշվեգրում			ԳԽ2 սցենար						ԳԽ3 սցենար					
		Բազմաբնակարան շենք (x100)	Սեփական տուն (x100)	Բնակելի միավոր (x100)	Բազմաբնակարան շենք (x100)	Սեփական տուն (x100)	Բնակելի միավոր (x100)	Բազմաբնակարան շենք (x100)	Սեփական տուն (x100)	Բնակելի միավոր (x100)	Բազմաբնակարան շենք (x100)	Սեփական տուն (x100)	Բնակելի միավոր (x100)			
1	Աջափնյակ	3.9	30.6	267	0.5	12%	10.8	35%	36	14%	0.1	4%	4.8	16%	12	5%
2	Ավան	2.3	12.2	127	0.6	27%	6.0	49%	39	31%	0.2	7%	2.2	18%	11	8%
3	Արարկիր	5.8	33.2	347	1.2	21%	10.7	32%	73	21%	0.4	6%	4.3	13%	24	7%
4	Դավթաշեն	1.7	7.8	98	0.0	2%	3.2	41%	5	5%	0.0	0%	1.3	17%	2	2%
5	Էրեբունի	2.2	106.4	228	0.5	23%	33.8	32%	64	28%	0.2	11%	18.7	18%	33	15%
6	Կենտրոն	7.1	55.1	364	2.5	35%	15.2	28%	102	28%	1.2	16%	7.4	13%	47	13%
7	Մալաթիա-Սեբաստիա	5.7	45.3	346	0.3	6%	10.3	23%	27	8%	0.1	2%	4.8	11%	11	3%
8	Նոր Նորք	6.4	1.8	369	1.0	16%	0.5	29%	71	19%	0.3	5%	0.2	10%	23	6%
9	Նորք-Մարաշ	0.0	24.0	24	0.0	23%	7.2	30%	7	30%	0.0	7%	3.1	13%	3	13%
10	Նուբարաշեն	0.3	5.5	16	0.1	26%	1.2	22%	4	24%	0.0	15%	0.7	14%	2	14%
11	Շենգավիթ	5.5	72.0	298	1.4	26%	15.3	21%	72	24%	0.8	15%	8.7	12%	40	13%
12	Քանաքեռ-Զեյթուն	2.9	32.4	163	0.5	16%	13.9	43%	36	22%	0.1	5%	5.2	16%	11	7%
Ընդամենը		43.7	426.3	2,649	8.6	20%	128.0	30%	537	20%	3.5	8%	61.5	14%	219	8%

C	<ul style="list-style-type: none"> - Կամրջի փլուզման ցածր հավանականություն - Չնչին տեղաշարժի առաջացում - Հիմնականում անցանելի ապահովությունը ստուգելուց հետո 	< 26
---	---	------

Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ երեք կամուրջներ գտնվում են վտանգավոր իրավիճակում (A աստիճան), իսկ երեք այլ կամուրջներ՝ պակաս վտանգավոր իրավիճակում (C աստիճան 24.49 գնահատման միավորով), ինչպես ցույց է տրված նկար 11-ում:

Նկար 11 Կամուրջների վնասի գնահատման արդյունքները



Գլուխ 22. Կենսապահովման գծեր (Ջրամատակարարում)

Ելնելով Երևան Ջուր ընկերության հետ ունեցած քննարկումից և հաշվարկման արդյունքներից՝ ջրամատակարարման խողովակաշարերի վնասը գնահատվել է այնպես, ինչպես բերված է աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8 Ջրամատակարարման խողովակաշարերի վնասը

ՀՀ	Համայնք	Խողովակի երկարությունը	Վնասի քանակը (կետեր)			
			ԳԽ2 սցենար		ԳԽ3 սցենար	
		կմ	Առավելագույն	Միջին	Առավելագույն	Միջին
1	Աջափնյակ	132.3	15.3	0.0	6.7	0.0
2	Ավան	48.7	17.3	0.2	4.9	0.0
3	Արաբկիր	114.0	34.2	0.2	12.7	0.0
4	Դավթաշեն	37.2	5.7	0.0	2.1	0.0
5	Էրեբունի	218.7	47.3	0.3	24.4	0.0
6	Կենտրոն	153.3	26.4	0.0	11.8	0.0
7	Մալաթիա-	131.2	11.2	0.0	5.7	0.0
8	Նոր Նորք	63.5	20.5	0.1	7.4	0.0
9	Նորք-Մարաշ	33.5	9.6	0.0	4.0	0.0
10	Նուբարաշեն	57.7	20.2	1.1	11.4	0.0
11	Շենգավիթ	217.4	32.5	0.0	19.2	0.0
12	Քանաքեռ-Զեյթուն	85.6	33.7	0.0	11.1	0.0
Ընդամենը		1,293.1	273.9	2.0	121.6	0.0

Խողովակաշարերի վերականգնման համար պահանջվող օրերի քանակը և աղետից հետո մեկ օրում ջրի անջատման գործակիցը հաշվարկված է հետևյալ ձևով.

1) Պայման

- վնասված կետերի թիվը՝ 274 կետ (0.21 կմ)

- մեկ աշխատանքային խմբի կազմը վերականգնման աշխատանքների համար՝

1 վերահսկող + 8 բանվոր/խումբ

- վերականգնման աշխատանքի ծավալը - 2 կետ/ 1 խումբ 8 ժամվա համար

- աշխատանքի տևողությունը – 24 ժամ երեք հերթափոխով

- աշխատանքային խմբերի քանակը -1 5 խումբ (ընդամենը 15 վերահսկող և 120 բանվոր)

2) Վերականգնման համար անհրաժեշտ օրերի հաշվարկը (D)

$$D = 274 \text{ կետ} / (15 \text{ խումբ} \times 2 \text{ կետ/օր})$$

$$= 10 \text{ օր}$$

3) Ջրի դադարեցման գործակցի հաշվարկ մեկ օր հետո (P)

$$P = 1 / (1 + 0.303 \times R^{-1.17})$$

$$= 1 / (1 + 0.303 \times 0.21^{-1.17})$$

$$= 0.344 (34.4 \%), \text{ որտեղ } R = \text{վնասի աստիճան (կետ/կմ)} = 0.21$$

Ելնելով հաշվարկման վերոնշյալ արդյունքից՝ անմիջապես աղետից հետո ջուրը կդադարի 100%-ով և ջրամատակարարումը կվերսկսվի աղետից մոտ 10 օր հետո:

Եթե մնացած հանգուցային միջոցները, օրինակ՝ ջրընդունիչները, ջրամբարները, ջրի մաքրման գործարանները, պոմպակայանները և այլն, վնասված են ջրի դադարեցումը կարող է շարունակվել մեկ ամիս կամ ավել:

Եթե Գառնիից եկող ջրամատակարարման հիմնական խողովակաշարերը լուրջ

վնասվեն, վերականգնողական աշխատանքները կարող են պահանջել երկար ժամանակ, ավելի քան մեկ ամիս, նույնիսկ մեկ տարի, քանի որ մեծ չափսի խողովակների ձեռքբերումը պահանջում է երկար ժամանակ:

Գլուխ 23. Կենսապահովման գծեր (Կեղտաջրի հեռացման համակարգ)

Ելնելով Երևան Զուր ընկերության հետ ունեցած քննարկումից և հաշվարկման արդյունքներից՝ կեղտաջրի խողովակաշարերի վնասը գնահատվել է այնպես, ինչպես բերված է աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9 Կեղտաջրի խողովակաշարերի վնասը

ՀՀ	Համայնք	Խողովակի երկարությունը	Վնասի քանակը (կետեր)			
			ԳԽ2 սցենար		ԳԽ3 սցենար	
		Կմ	Առավելագույն	Միջին	Առավելագույն	Միջին
1	Աջափնյակ	62.4	32.0	0.0	14.0	0.0
2	Ավան	28.5	40.0	0.0	12.0	0.0
3	Արաբկիր	70.8	64.0	0.0	25.0	0.0
4	Դավթաշեն	22.6	17.0	0.0	6.0	0.0
5	Էրեբունի	164.8	130.0	0.0	67.0	0.0
6	Կենտրոն	104.6	90.0	0.0	40.0	0.0
7	Մալաթիա-Սեբաստիա	109.3	40.0	0.0	21.0	0.0
8	Նոր Նորք	42.0	58.0	0.0	21.0	0.0
9	Նորք-Մարաշ	24.6	32.0	0.0	13.0	0.0
10	Նուբարաշեն	14.2	19.0	0.0	11.0	0.0
11	Շենգավիթ	161.4	115.0	0.0	67.0	0.0
12	Քանաքեռ-Զեյթուն	60.0	79.0	0.0	27.0	0.0
Ընդամենը		865.2	714.0	0.0	324.0	0.0

Խողովակաշարերի վերականգնման համար պահանջվող օրերի քանակը հաշվարկված է հետևյալ ձևով.

1) Պայման

- Վնասված կետերի թիվը - 714 կետ
- աշխատանքային խմբի կազմը վերականգնման աշխատանքների համար - 1 վերահսկող + 8 բանվոր/խումբ
- վերականգնման աշխատանքի ծավալը - 1 վայր/ 1 խումբ 8 ժամվա համար
- աշխատանքի տևողությունը – 24 ժամ երեք հերթափոխով

- աշխատանքային խմբերի քանակը – 15 խումբ (ընդամենը 30 վերահսկող և 240 բանվոր)

2) Վերականգնման համար անհրաժեշտ օրերի հաշվարկը (D)

$$D = 714 \text{ կետ} / (30 \text{ խումբ} \times 1 \text{ կետ/օր}) = 24 \text{ օր}$$

Քանի որ կեղտաջրի մշակման գործարաններ չեն գործում նույնիսկ սովորական պայմաններում, չի կանխատեսվում, որ կեղտաջրի համակարգի վերականգնումը կարող է ձգձգվել մշակման գործարանների վերականգնման պատճառով:

Գլուխ 24. Կենսապահովման գծեր (Անձրևաջրի հեռացման համակարգ)

Ելնելով Երևան Զուր ընկերության հետ ունեցած քննարկումից և հաշվարկման արդյունքներից՝ անձրևաջրի խողովակաշարերի վնասը գնահատվել է այնպես, ինչպես բերված է աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10 Անձրևաջրի խողովակաշարերի վնասը

<<	Համայնք	Խողովակի երկարությունը	Վնասի քանակը (կետեր)			
			ԳԽ2 սցենար		ԳԽ3 սցենար	
		Կմ	Առավելագույն	Միջին	Առավելագույն	Միջին
1	Աջափնյակ	12.4	4.0	0.0	2.0	0.0
2	Ավան	12.7	13.0	0.0	4.0	0.0
3	Արաբկիր	24.2	14.0	0.0	6.0	0.0
4	Դավթաշեն	1.9	1.0	0.0	1.0	0.0
5	Էրեբունի	30.5	13.0	0.0	7.0	0.0
6	Կենտրոն	31.4	8.0	0.0	4.0	0.0
7	Մալաթիա-Սեբաստիա	23.5	4.0	0.0	2.0	0.0
8	Նոր Նորք	15.4	19.0	0.0	7.0	0.0
9	Նորք-Մարաշ	1.4	2.0	0.0	1.0	0.0
10	Նուբարաշեն	0.0	0.0	0.0	0.0	0.0
11	Շենգավիթ	18.7	4.0	0.0	2.0	0.0
12	Քանաքեռ-Զեյթուն	10.6	12.0	0.0	4.0	0.0
Ընդամենը		182.6	95.0	0.0	38.0	0.0

Խողովակաշարերի վերականգնման համար պահանջվող օրերի քանակը հաշվարկված է հետևյալ ձևով.

1) Պայման

- Վնասված կետերի թիվը - 95 կետ

- Աշխատանքային խմբի կազմը վերականգնման աշխատանքների համար - 1 վերահսկող + 8 բանվոր

- Վերականգնման աշխատանքի ծավալը - 1 կետ/ 1 խումբ 8 ժամվա համար

- Աշխատանքի տևողությունը. 24 ժամ երեք հերթափոխով
 - Աշխատանքային խմբերի թիվը. 9 խումբ (ընդամենը 9 վերահսկող և 72 բանվոր)
- 2) Վերականգնման համար անհրաժեշտ օրերի քանակը (D)
 $D = 92 \text{ կետ} / (9 \text{ խումբ} \times 1 \text{ կետ/օր}) = 11 \text{ օր}$

Գլուխ 25. Կենսապահովման գծեր (Օդային էլեկտրական գծեր)

Ելնելով էլեկտրական Կազմակերպությունների, մասնավորապես՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ, Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր ՓԲԸ և Երևան քաղաքի լույսեր ՓԲԸ հետ ունեցած քննարկումից աղյուսակ 11-ում բերված հաշվարկված վնասը կարող է օգտագործվել պլանավորման համար: Ստորգետնյա էլեկտրական գծերի վնասը հաշվարկվել է 9 և ավել հարկանի շենքերի վնասի հարաբերակցության համամասնությամբ, քանի որ ստորգետնյա գծերի վնասի պատճառ է հանդիսանում բարձրահարկ շենքերի փլուզումը, ինչպես ցույց է տրված աղյուսակ 12-ում: Բազմապատկելով բարձրահարկ շենքերի վնասի հարաբերակցությունը ստորգետնյա գծերի ընդհանուր թվի հետ՝ վնասը կազմում է 305.1 կմ: Վնասված էլեկտրական սյուների թիվը հաշվարկված է վնասված գծերի համամասնությամբ ինչպես ցույց է տրված աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11 Օդային էլեկտրական գծերի վնասը

ՀՀ	Համայնք	Մալուխի երկարությունը	Վնասի երկարությունը (կմ)			
			ԳԽ2 սցենար		ԳԽ3 սցենար	
		կմ	Առավելագույն	Միջին	Առավելագույն	Միջին
1	Աջափնյակ	185.8	0.8	0.0	0.1	0.0
2	Ավան	59.6	1.4	0.1	0.1	0.0
3	Արաբկիր	154.7	1.7	0.1	0.1	0.0
4	Դավթաշեն	68.4	0.6	0.0	0.0	0.0
5	Էրեբունի	355.9	6.1	0.3	1.8	0.0
6	Կենտրոն	237.2	2.1	0.1	0.3	0.0
7	Մալաթիա-Սեբաստիա	232.6	0.8	0.0	0.1	0.0
8	Նոր Նորք	133.1	2.6	0.1	0.4	0.0
9	Նորք-Մարաշ	48.7	0.6	0.0	0.1	0.0
10	Նուբարաշեն	80.2	1.4	0.1	0.6	0.0
11	Շենգավիթ	275.1	2.3	0.0	0.7	0.0
12	Քանաքեռ-Զեյթուն	118.8	1.9	0.1	0.2	0.0
Ընդամենը		1,950.2	22.4	0.9	4.5	0.2

Աղյուսակ 12 Ստորգետնյա էլեկտրական գծերի վնասը

ՀՀ	Համայնք	Մալուխի երկարությունը	Վնասի երկարությունը (կմ)	
		կմ	ԳԽ2 սցենար	ԳԽ3 սցենար
1	Աջափնյակ	286.2	14.9	5.1
2	Ավան	225.1	41.4	12.1
3	Արաբկիր	391.5	53.8	20.0
4	Դավթաշեն	141.9	6.1	2.0
5	Էրեբունի	399.1	18.5	9.6
6	Կենտրոն	379.2	31.8	15.1
7	Մալաթիա-Սեբաստիա	301.7	16.6	7.1
8	Նոր Նորք	392.4	38.0	12.7
9	Նորք-Մարաշ	53.3	0.0	0.0
10	Նուբարաշեն	2.2	0.2	0.1
11	Շենգավիթ	415.6	17.8	9.9
12	Քանաքեռ-Զեյթուն	528.9	66.0	23.5
Ընդամենը		3.517.1	305.1	117.3

Աղյուսակ 13 Էլեկտրական սյուների վնասը

Լարում	Երկարություն	Սյուների միջև հեռավորությունը*	Վնասված հատվածը	Վնասված սյունը	Տեսակը
	կմ	Մ	Թռիչք	Սյուն	
10կՎ կամ պակաս	19.7	40	493	494	Էլեկտրական սյուն
35կՎ	0.5	140	4	5	Մետաղյա աշտարակ
110կՎ	2.2	390	6	7	Մետաղյա աշտարակ
Ընդամենը	22.4		503		

Էլեկտրական գծերի վերականգնման համար պահանջվող օրերի քանակը հաշվարկված է հետևյալ ձևով.

1) Պայման

- վնասված օդային գծերի երկարությունը՝ 22.4կմ
- վնասված ստորգետնյա գծերի երկարությունը՝ 305.1կմ
- վնասված էլեկտրական սյուների թիվը՝ 494
- վնասված մետաղյա աշտարակների թիվը՝ 12

Աշխատանքային խումբ՝ էլեկտրական սյուների համար՝ 1 վերահսկող + 4 բանվոր/խումբ

մետաղյա աշտարակների համար՝ 1 վերահսկող + 10

բանվոր/խումբ

օդային գծերի համար՝ 1 վերահսկող + 5 բանվոր/խումբ

	ստորգետնյա գծերի համար՝ 1 վերահսկող + 4
բանվոր/խումբ	
Աշխատանքի ծավալը՝	էլեկտրական սյուների համար՝ 1 սյուն/1 խումբ/8
ժամվա համար	
	մետաղյա աշտարակների համար՝ 10 օր (24 ժամ երեք
հերթափոխով)/ 1 աշտարակ	
	օդային գծերի համար՝ սյունից սյուն 1 հատվածը/1 խումբ 8
ժամվա համար	
	ստորգետնյա գծերի համար՝ 20մ/ 1 խումբ 8 ժամվա
համար	
Աշխատանքի տևողությունը՝	24 ժամ երեք հերթափոխով
Աշխատանքային խմբերի քանակը՝	
	էլեկտրական սյուների համար՝ 30 խումբ (ընդամենը
	30 վերահսկող և 120 բանվոր)
	մետաղյա աշտարակների համար՝ 36 խումբ
	(ընդամենը 30 վերահսկող և 120 բանվոր)
	օդային գծերի համար՝ 30 խումբ (ընդամենը 30
	վերահսկող և 120 բանվոր)
	ստորգետնյա գծերի համար՝ 150 խումբ (ընդամենը
	150 վերահսկող և 600 բանվոր)
2) Վերականգնման համար անհրաժեշտ օրերի հաշվարկը (D)	
	էլեկտրական սյուների համար՝ $D = 494 \text{ սյուն} / (30 \text{ խումբ} \times \text{սյունից սյուն } 1$
	$\text{հատվածը} / \text{օր}) = 17 \text{ օր}$
	մետաղյա աշտարակների համար՝ 12
աշտարակ նույն ժամանակահատվածում	
	1 աշտարակ \times 10 օր երեք խմբով
	12 աշտարակ \times 3 խումբ = 36 խումբ
	10 օր
	օդային գծերի համար՝ 503 հատված/ (30
	խումբ \times 1 հատված/օրը) = 17 օր
	ստորգետնյա գծերի համար՝ 305.1կմ/ (150
	խումբ \times 20մ/օրը) = 120 օր

Գլուխ 26. Կենսապահովման գծեր (գազի խողովակաշար)

Գազի խողովակաշարերի վնասը հաշվարկված է ստորգետնյա խողովակաշարերի և վերգետնյա խողովակաշարերի համար:

Ստորգետնյա խողովակաշարերի վնասի հաշվարկի համար օգտագործվում են Ճապոնիայում և ԱՄՆ-ում մշակված վնասի ֆունկցիաները: Արդյունքը ցույց է տրված աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14 Ստորգետնյա խողովակաշարերի վնասը

ՀՀ	Համայնք	Խողովակի երկարությունը	Վնասի թիվը (կետ)			
			ԳԽ2 սցենար		ԳԽ3 սցենար	
		կմ	Առավելագույն	Միջին	Առավելագույն	Միջին
1	Աջափնյակ	11.7	0.4	0.0	0.2	0.0
2	Ավան	1.6	0.1	0.0	0.0	0.0
3	Արաբկիր	9.6	0.6	0.0	0.2	0.0
4	Դավթաշեն	1.6	0.1	0.0	0.0	0.0
5	Էրեբունի	5.2	0.2	0.0	0.1	0.0
6	Կենտրոն	2.6	0.1	0.0	0.0	0.0
7	Մալաթիա-Սեբաստիա	10.4	0.2	0.0	0.1	0.0
8	Նոր Նորք	0.6	0.0	0.0	0.0	0.0
9	Նորք-Մարաշ	0.9	0.1	0.0	0.0	0.0
10	Նուբարաշեն	5.8	0.3	0.0	0.2	0.0
11	Շենգավիթ	9.0	0.3	0.0	0.2	0.0
12	Քանաքեռ-Զեյթուն	8.5	0.5	0.0	0.2	0.0
Ընդամենը		67.6	2.9	0.0	1.3	0.0

Վերգետնյա խողովակաշարերի վնասի հաշվարկի համար օգտագործվում է շենքերի վնասի հարաբերակցությունը, քանի որ չկա վերգետնյա խողովակաշարերի վնասի հուսալի ֆունկցիա և խողովակաշարերի վնասը պետք է հաշվարկվի ըստ շենքերի փլուզման: Արդյունքը ցույց է տրված աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15 Վերգետնյա գազի խողովակաշարի վնասը

ՀՀ	Համայնք	Խողովակի երկարությունը	Վնասի երկարությունը (կմ)	
		կմ	ԳԽ2 սցենար	ԳԽ3 սցենար
1	Աջափնյակ	95.3	18.3	7.9
2	Ավան	44.3	14.0	4.9
3	Արաբկիր	103.4	25.1	9.7
4	Դավթաշեն	13.8	2.0	0.8
5	Էրեբունի	173.2	38.4	21.2
6	Կենտրոն	130.5	30.8	14.7
7	Մալաթիա-Սեբաստիա	97.5	13.9	6.4
8	Նոր Նորք	50.8	7.1	2.3
9	Նորք-Մարաշ	37.1	10.5	4.3
10	Նուբարաշեն	22.0	3.2	2.0
11	Շենգավիթ	162.8	26.9	15.3
12	Քանաքեռ-Զեյթուն	96.3	31.1	11.5
Ընդամենը		1,027.0	221.1	101.0

Գլուխ 27. Կենսաապահովման գծեր (հեռախոսագիծ)

Ստորգետնյա հեռախոսագծերի վնասի հաշվարկման համար օգտագործված վնասի ֆունկցիաները նույնն է, ինչ ստորգետնյա էլեկտրական գծերինը: Արդյունքը ցույց է տրված աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16 Ստորգետնյա հեռախոսագծերի վնասը

ՀՀ	Համայնք	Մալուխի երկարությունը	Վնասի երկարությունը (կմ)			
			ԳԽ2 սցենար		ԳԽ3 սցենար	
		կմ	Առավելագույն	Միջին	Առավելագույն	Միջին
1	Աջափնյակ	27.3	0.0	0.0	0.0	0.0
2	Ավան	14.3	0.0	0.0	0.0	0.0
3	Արաբկիր	30.2	0.0	0.0	0.0	0.0
4	Դավթաշեն	7.2	0.0	0.0	0.0	0.0
5	Էրեբունի	35.7	0.0	0.0	0.0	0.0
6	Կենտրոն	62.9	0.0	0.0	0.0	0.0
7	Մալաթիա-Սեբաստիա	31.6	0.0	0.0	0.0	0.0
8	Նոր Նորք	25.7	0.0	0.0	0.0	0.0
9	Նորք-Մարաշ	7.8	0.0	0.0	0.0	0.0
10	Նուբարաշեն	3.8	0.0	0.0	0.0	0.0
11	Շենգավիթ	36.8	0.0	0.0	0.0	0.0
12	Քանաքեռ-Զեյթուն	18.2	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը		301.5	0.0	0.0	0.0	0.0

Քանի որ չկան տվյալներ օդային գծերի երկարության մասին, օդային գծերի երկարությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$L_a = a * L_u$$

L_a ՝ օդային հեռախոսագծերի երկարությունը (կմ), L_u ՝ ստորգետնյա հեռախոսագծերի երկարությունը

a ՝ օդային գծերի և ստորգետնյա գծերի հարաբերակցությունը էլեկտրական գծերում; 0.55

Շենքերի փլուզման պատճառով սյուների վնասի հարաբերակցությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$D_p = a * D_b$$

D_p ՝ սյուների վնասի հարաբերակցությունը, D_b ՝ շենքերի վնասի հարաբերակցությունը

a ՝ վնասի հարաբերակցությունը՝ 0.17155

Օդային հեռախոսագծերի և սյունների հաշվարկման արդյունքը ցույց է տրված աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17 Օդային հեռախոսագծերի և սյունների վնասը

ՀՀ	Համայնք	Ստորգետնյա գծերի երկարությունը (կմ)	Օդային գծերի երկարությունը (կմ)	Օդային գծերի վնասը (կմ)	Սյունների թիվը	Շենքերի փլուզման հետևանքով վնասված սյուներ	9 բալանոց սեյսմիկ ինտենսիվության հետևանքով վնասված սյուներ	Վնասված սյունների ընդհանուր թիվը	Վնասի հարաբերակցությունը (%)
1	Աջափնյակ	27.3	15.0	0.065	4,645	258	3	261	5.6
2	Ավան	14.3	7.9	0.185	1,490	116	1	117	7.9
3	Արաբկիր	30.2	16.6	0.183	3,868	202	2	204	5.3
4	Դավթաշեն	7.2	4.0	0.035	1,710	100	1	101	5.9
5	Էրեբունի	35.7	19.6	0.337	8,898	486	5	491	5.5
6	Կենտրոն	62.9	34.6	0.306	5,930	293	3	296	5.0
7	Մալաթիա-Սեբաստիա	31.6	17.4	0.060	5,815	211	3	214	3.7
8	Նոր Նորք	25.7	14.1	0.276	3,328	107	2	109	3.3
9	Նորք-Մարաշ	7.8	4.3	0.053	1,218	63	1	64	5.3
10	Նուբարաշեն	3.8	2.1	0.036	2,005	76	1	77	3.8
11	Շենգավիթ	36.8	20.2	0.169	6,878	252	4	256	3.7
12	Քանաքեռ-Զեյթուն	18.2	10.0	0.160	2,970	208	2	210	7.1
Ընդհանուր			301.5	1.865	48,755	2,372	28	2,400	4.9

Գլուխ 28. Զոհերի թիվը

Հաշվարկի արդյունքը ցույց է տալիս, որ զոհերի թիվը կազմում է 31.000 ԳԽ2-ի և 10.900 ԳԽ3-ի դեպքում, ինչպես ցույց է տրված աղյուսակ 18-ում: Հաշվարկի այլ արդյունքները ցույց են տրված աղյուսակ 19-ում:

Հաշվի առնելով կարևոր կետի պլանավորման մեջ ապահովության գործոնը (զոհերի թիվը)՝ պլանավորման համար զոհերի թիվը սահմանված է 150.000:

Աղյուսակ 18 ԳԽ2 և ԳԽ3 դեպքում զոհերի հաշվարկված թիվը

ՀՀ	Համայնք	Բնակչություն	ԳԽ2 սցենար		ԳԽ3 սցենար	
			Զոհ		Զոհ	
1	Աջափնյակ	108,200	1,900	1.8%	500	0.5%
2	Ավան	51,000	2,100	4.2%	500	0.9%
3	Արաբկիր	130,800	4,400	3.3%	1,100	0.9%
4	Դավթաշեն	41,100	200	0.5%	0	0.1%
5	Էրեբունի	121,900	3,800	3.1%	1,700	1.4%

6	Կենտրոն	130,600	6,500	5.0%	2,600	2.0%
7	Մալաթիա-Սեբաստիա	141,800	1,300	0.9%	500	0.3%
8	Նոր Նորք	147,000	4,300	2.9%	1,100	0.8%
9	Նորք-Մարաշ	11,300	300	2.6%	100	0.9%
10	Նուբարաշեն	9,700	100	1.5%	100	0.8%
11	Շենգավիթ	146,500	4,300	2.9%	2,100	1.5%
12	Քանաքեռ-Զեյթուն	79,300	1,900	2.4%	500	0.6%
Ընդամենը		1,119,200	31,100	2.8%	10,900	1.0%

Աղյուսակ 19 Զոհերի թվի վերաբերյալ այլ հաշվարկի արդյունքները

Սցենարային երկրաշարժ	MSK-64 ինտենսիվություն երևանում	Զոհերի թիվը	Շենքերին հասցված վնասը (4-րդ և 5-րդ աստիճանի)		Աղբյուր
			Բնակելի	2,000	
Չսահմանված	IX	76,500	Բազմաբնակարան	27,000	Հետազոտական խումբը
			4-րդ աստիճանի	8,839	
Գառնի	VII	162,243	5-րդ աստիճանի	15,296	ՀՀ կառավարության թիվ 919 որոշում

Գլուխ 29. Վիրավորները

Հաշվարկի արդյունքը ցույց է տալիս, որ վիրավորների թիվը կազմում է 75.000 ԳԽ2-ի և 30.300 ԳԽ3-ի դեպքում, ինչպես ցույց է տրված աղյուսակ 20-ում: Վիրավորների այլ հաշվարկի թիվը նշված է ՀՀ կառավարության թիվ 919 որոշման մեջ, ինչպես ցույց է տրված աղյուսակ 21-ում:

Վիրավորների թվի հաշվարկի համար այս ուսումնասիրության մեջ օգտագործվել է հետևյալ բանաձևը՝

$$N_i = 8.2297 * (N_d)^{0.8494} \quad (N_i: \text{վիրավորների թիվը}, N_d: \text{զոհերի թիվը})$$

150.000 զոհերի դեպքում, ինչպես նշված է վերևում, վիրավորների թիվը հաշվարկվել է 205.000:

Ապահովության համար պլանավորման մեջ օգտագործվում է 205.000-ը:

Աղյուսակ 20 Վիրավորների* հաշվարկված թիվը

ՀՀ	Համայնք	Բնակչություն	ԳԽ2 սցենար		ԳԽ3 սցենար	
			Վիրավոր	4.7%	Վիրավոր	1.6%
1	Աջափնյակ	108,200	5,100	4.7%	1,700	1.6%

2	Ավան	51,000	5,500	10.8%	1,500	2.9%
3	Արաբկիր	130,800	10,200	7.8%	3,300	2.5%
4	Դավթաշեն	41,100	700	1.7%	200	0.5%
5	Էրեբունի	121,900	8,900	7.3%	4,600	3.8%
6	Կենտրոն	130,600	14,300	10.9%	6,500	5.0%
7	Մալաթիա-Սեբաստիա	141,800	3,700	2.6%	1,500	1.1%
8	Նոր Նորք	147,000	10,000	6.8%	3,200	2.2%
9	Նորք-Մարաշ	11,300	1,000	9.0%	400	3.8%
10	Նուբարաշեն	9,700	600	5.7%	300	3.4%
11	Շենգավիթ	146,500	10,100	6.9%	5,500	3.8%
12	Քանաքեռ-Զեյթուն	79,300	5,000	6.3%	1,500	1.9%
Ընդամենը		1,119,200	75,000	6.7%	30,300	2.7%

Վիրավորներ* - միջին ծանրության և հոսպիտալացված

Աղյուսակ 21 ՀՀ կառավարության թիվ 919 որոշման մեջ նշված վիրավորների թիվը

Կատեգորիա	Վիրավորների թիվը	Նշումներ
Ծանր	60,562	Գառնիի սցենարային երկրաշարժ Երևանում, XII բալանոց ըստ
Միջին	32,488	MSK-64 սանդղակի
Թեթև	27,162	
Ընդամենը	120,212	

Գլուխ 30. Տարահանվողները

Տարահանվողների թիվը հաշվարկված է ըստ հետևյալ պայմանների, իսկ հաշվարկի արդյունքը ցույց է տրված աղյուսակ 22-ում:

- Փլուզված և ծանր վնասված բնակելի շենքերի բոլոր բնակիչները պարտադրված են եղել տարահանվել:
- Միջին վնասվածության բնակելի շենքերի բնակիչների կեսը պարտադրված է եղել տարահանվել:
- Բնակիչների կեսը, ովքեր տուժել են ջրի պակասից, պարտադրված է եղել տարահանվել:

Աղյուսակ 22 Տարահանվողների հաշվարկված թիվը

ՀՀ	Համայնք	Բնակչություն	Անմիջապես հետո	Մեկ օր հետո	Չորս օր հետո	Մեկ ամիս հետո
1	Աջափնյակ	108,200	51,420	57,297	55,534	52,007
2	Ավան	51,000	30,219	35,336	33,801	30,731
3	Արաբկիր	130,800	68,586	82,376	78,239	69,965
4	Դավթաշեն	41,100	11,899	15,786	14,620	12,288

5	Էրեբունի	121,900	69,716	78,899	76,144	70,634
6	Կենտրոն	130,600	83,722	90,607	88,542	84,410
7	Մալաթիա-Սեբաստիա	141,800	55,776	62,430	60,433	56,441
8	Նոր Նորք	147,000	70,211	88,049	82,697	71,995
9	Նորք-Մարաշ	11,300	7,318	8,174	7,917	7,403
10	Նուբարաշեն	9,700	5,021	6,163	5,820	5,135
11	Շենգավիթ	146,500	75,825	85,035	82,272	76,746
12	Քանաքեռ-Զեյթուն	79,300	39,819	50,135	47,040	40,851
Ընդամենը		1,119,200	569,531	660,286	633,060	578,607

Տարահանվողների մեջ կլինեն մարդիկ, ովքեր չեն մնա տարահանման կետերում, այլ կգնան իրենց բարեկամների տներ կամ կմնան հյուրանոցներում կամ կտեղակայվեն այլ վայրերում: Տարահանման կետերում մնացող տարահանվողների թիվը հաշվարկված է հետևյալ փորձարարական բանաձևով, ինչպես ցույց է տրված աղյուսակ 23-ում:

$N_s = N_e * 0.65$ (N_s :Տարահանման կետերում մնացողների թիվը, N_e :Տարահանվողների թիվը)

Աղյուսակ 23 Տարահանման կետերում մնացող տարահանվողների հաշվարկված թիվը

ՀՀ	Համայնք	Բնակչություն	Անմիջապես հետո	Մեկ օր հետո	Չորս օր հետո	Մեկ ամիս հետո
1	Աջափնյակ	108,200	33,423	37,243	36,097	33,805
2	Ավան	51,000	19,643	22,969	21,971	19,975
3	Արաբկիր	130,800	44,581	53,544	50,855	45,477
4	Դավթաշեն	41,100	7,734	10,261	9,503	7,987
5	Էրեբունի	121,900	45,315	51,284	49,493	45,912
6	Կենտրոն	130,600	54,419	58,895	57,552	54,867
7	Մալաթիա-Սեբաստիա	141,800	36,254	40,579	39,282	36,687
8	Նոր Նորք	147,000	45,637	57,232	53,753	46,797
9	Նորք-Մարաշ	11,300	4,757	5,313	5,146	4,812
10	Նուբարաշեն	9,700	3,263	4,006	3,783	3,338
11	Շենգավիթ	146,500	49,286	55,273	53,477	49,885
12	Քանաքեռ-Զեյթուն	79,300	25,883	32,587	30,576	26,553
Ընդամենը		1,119,200	370,195	429,186	411,489	376,094


Գլուխ 31. Քաղաքի խոցելիության գնահատում

Երևան քաղաքում ճանապարհները, այգիները/կանաչ տարածքները և այլն լավ պլանավորված և բաշխված են: Բացի այն տարածքներից, որտեղ հին սեփական տները կառուցված են խիտ, հողօգտագործումը, ինչպես օրինակ՝ բնակելի և արդյունաբերական տարածքները, բաժանված և բաշխված են ըստ գործածության և հետևաբար, քաղաքը լավ զարգացած է քաղաքային պլանավորման տեսանկյունից: Չնայած քաղաքի խոցելիությունը կարող է լինել փոքր վերոնշյալ տեսանկյունից, համարվում է, որ խոցելիությունը աճում է շատ շենքերի տարիքային մաշվածության, արագ ուրբանիզացվածության և այլնի պատճառով: Սեյսմակայուն Երևան քաղաք ստեղծելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ խոցելի գործոնները:

Գլուխ 32. Ներկա քաղաքային հիմքերի խոցելիությունը (Ճանապարհային ցանցի և ճանապարհների լայնության հատակագիծ)

Երևան քաղաքում կան երկկողմանի ճանապարհներ, որոնք օղակի նման շրջապատում են կենտրոնը՝ Կենտրոն վարչական շրջանը: Նախատեսված են աստղաձև ճանապարհներ, որոնք հատելով օղակաձև ճանապարհները, դուրս են գալիս քաղաքից դուրս, ինչպես պատկերված է նկար 12: Վերոնշյալ հիմնական ճանապարհային ցանցը պետք է անհապաղ ավարտին հասցվի, որպեսզի այս օղակաձև և աստղաձև ճանապարհները երկրաշարժի ժամանակ կիրառվեն տարահանման համար: Աջափնյակ և Նորք-Մարաշ վարչական շրջաններում, որտեղ աշխարհագրական ձևախախտման պատճառով գերակշռում են 6 մետր կամ պակաս լայնությամբ նեղ ճանապարհներ, կանխատեսվում է, որ աղետից հետո փրկարարական աշխատանքների իրականացումը կդժվարանա:

Նկար 12 Ճանապարհային ցանցը և ապագա հատակագիծը (Երևանի քաղաքի Գլխավոր Հատակագիծ)



Գլուխ 33. Զբոսայգիների և կանաչ տարածքների տարածքը մեկ անձի համար

Զբոսայգու և կանաչ տարածքների, Երևան քաղաքի Գլխավոր Հատակագծում նշված ներկա բնակչության և Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված տվյալների հիման վրա հաշվարկված զբոսայգու տարածքը մեկ անձի համար բերված է աղյուսակ 24-ում:

Աղյուսակ 24 Երևան քաղաքում ընդհանուր օգտագործման զբոսայգու և կանաչ տարածքները (2003թ.)

ՀՀ	Համայնք	Զբոսայգու և կանաչ տարածքները	
		Տարածք (հա)	Տարածք մեկ անձի համար (մ ² /անձ)
1	Աջափնյակ	12.0	1.12
2	Ավան	10.5	2.10
3	Արաբկիր	122.3	9.30
4	Դավթաշեն	7.8	1.90
5	Էրեբունի	18.5	1.55
6	Կենտրոն	128.0	9.85
7	Մալաթիա-Սեբաստիա	60.5	4.30
8	Նոր-Նորք	49.5	3.46
9	Նորք-Մարաշ	0.0	0.00
10	Նուբարաշեն	3.1	3.30
11	Շենգավիթ	32.6	2.30
12	Քանաքեռ-Զեյթուն	95.5	12.25
Ընդամենը		540.3	4.90

Գլուխ 34. Խոցելիություն շենքերի բաշխվածության տեսանկյունից (Վարչական շրջանների շենքերը)

1. Համաձայն քաղաքի շենքերի վնասի գնահատման (ԳԽ2 սցենարային երկրաշարժ)՝ ավելի շատ վնաս է կանխատեսվում Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններում, քանի որ հին շենքերի մեծամասնությունը գտնվում է այդ վարչական շրջաններում: Շատ վնաս է նաև կանխատեսվում Ավանի, Նոր-Նորքի և Արաբկիրի կենտրոնական ուրբանիզացված տարածքներում:

2. Համաձայն սեփական տների շենքերի վնասի գնահատման (ԳԽ2 սցենարային երկրաշարժ)՝ ավելի շատ վնաս է կանխատեսվում Էրեբունի, Արաբկիր և Ավան վարչական շրջաններում: Աղետի ժամանակ ենթադրվում է նաև հրդեհի բռնկում:

Գլուխ 35. Խոցելիություն հողօգտագործման և այլնի տեսանկյունից (Գետերի շրջակայքի հողօգտագործում)

Ինչ վերաբերում է քաղաքում գետերի երկայնքով հողերի օգտագործմանը, երկրաշարժերի ժամանակ պահանջվում են լանջի փլուզման հակամիջոցառումներ Հրազդանի և Նորքի հարթավայրերի երկայնքով գտնվող զառիվայր լանջերի և հարակից բնակելի տարածքների համար:

Գլուխ 36. Հողօգտագործումը սողանքային գոտիներում

Երկրաշարժերի ժամանակ սողանքային հակամիջոցառումներ են պահանջվում Էրեբունի վարչական շրջանում և Նուբարաշեն վարչական շրջանի հարավարևելյան տարածքում: Քանի որ այս տարածքում չկան բարձրահարկ շենքեր և ընդամենը միայն մի քանի սեփական տներ, շենքերի վնասը այս տարածքի համար չի հաշվարկվել: Բայց կանխատեսվում է, որ այս տարածքում որոշ մասեր կարող են մեկուսացվել, եթե սողանքները ակտիվանան:

Գլուխ 37. Հարցեր վերակառուցման ծրագրերի տեսանկյունից

Վերակառուցման ծրագրերի տեսանկյունից ներկա իրավիճակի վերլուծության միջոցով հայտնաբերված հարցերը հետևյալն են՝

1. Գլխավոր Հատակագծով նախատեսված վերակառուցման տարածքների մեծ մասը ունեն տեղագրական և երկրաբանական սահմանափակումներ, այնպես որ այս վերակառուցման ծրագրերին անհրաժեշտ է ոչ միայն իրականացնել շենքերի վերակառուցման, այլև հողերի մշակման աշխատանքներ՝ միաժամանակ իրականացնելով լանջերի հողի սահքը կանխարգելող միջոցառումներ: Բացի այդ վերակառուցման ծրագրերը պահանջում են նաև ներդաշնակություն իր շրջակա տարածքների հետ համալիր զարգացման միջոցով, որը միավորում է ճանապարհների բարելավումը (որպես ենթակառուցվածք) և շենքերի վերակառուցումը (տես նկար 13):

2. Քաղաքի կենտրոնական մասում վերակառուցման աշխատանքի առաջընթացը կարող է պատճառ հանդիսանալ ապագայում բնակչության չափից շատ կենտրոնացմանը, հատկապես Կենտրոն վարչական շրջանում և իր հարակից տարածքներում: Այս իրավիճակից խուսափելու համար պետք է ակնկալվի երկարաժամկետ պլանի ստեղծում քաղաքի արևմտյան մասերում բնակարաններ տրամադրելու համար (օրինակ՝ Աջափնյակ, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջաններ), որտեղ բնակարանային շինարարությունը ակտիվանալու է:

3. Վերակառուցման ծրագիր իրականացնելիս անհրաժեշտ է ոչ միայն խթանել շենքերի վերակառուցումը Երևանի ղեկավարության ներքո, այլև ներմուծել հասարակական աշխատանքներ (ինչպես օրինակ՝ զբոսայգիները, բաց տարածքները, ճանապարհների լայնացումը և այլն) քաղաքապետարանի կողմից տրամադրված նպաստի հաշվին: Նմանատիպ համալիր ծրագիրը կարող է շատ օգտակար լինել քաղաքի շրջակա միջավայրի և աղետների հետևանքների մեղմացման համար:

Սկար 13 Հարցեր Երևան քաղաքի քաղաքաշինության վերաբերյալ

ՎԵՐԱԿՆԵՐՆԵՐ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԻՎՆԵՐ

1. Աղետի կառավարման տեսանկյունից քաղաքի վերակառուցման օգուտները

- Կրճատվում են այն շենքերը, որոնք խոցելի են երկրաշարժի նկատմամբ
- Կանխարգելում է հրդեհի առաջացումը խիտ կառուցապատված սեփական տներում
- Օգնում է աղետի դեպքում վերականգնման աշխատանքներին՝ ճիշտ նախագծված և լայն ճանապարհների միջոցով
- **Վերակառուցման արդյունքում ստեղծված բաց տարածքները (այգիներ, կանաչապատ տարածքներ) կարող են օգտագործվել որպես տարահանման բազաներ**

2. Քաղաքի վերակառուցման արդյունքում ստեղծված այգիներ և կանաչապատ տարածքներ

Հասարակական բաց տարածքների ապահովման չափանիշները քաղաքաշինության մեջ (Ճապոնիայի Օրենքը Քաղաքի Պլանավորման մասին)


Քաղաքաշինական տարածք (Վերակառուցման տարածք)	Ուրուրացված տարածք		Ոչ-ուրուրացված տարածք
	սեփական տուն	Բնակարան	
0.3 հա - 1 հա	1% >	2%>	2% >
1 հա - 5 հա	2% >		4% >
5 հա - 20 հա		3%>	6% >
20 հա -			3% >

Նշում. % -ը կառուցապատված տարածքի տոկոսն է




3. Ինչպես վերակառուցել կառուցապատված տարածք ճապոնիայում

Քաղաքի վերակառուցման նախագիծ (եռաչափ գարգացում)
 Շինարարական կազմակերպությունը (քաղաքապետարան կամ մասնավոր ձեռնարկություն) կառուցում է շենք՝ ներառյալ դիմային բարեկարգումը, ինչպիսիք են փողոցը, այգին և այլն: Վերակառուցված տարածքում սեփականատերերը կարող են ստանալ վերակառուցված շենքի հողի և հատակի իրավունք, այսինքն՝ նույն սկզբնական հողի և շենքի գնահատված արժեքը: Մա կոչվում է «իրավունքի փոխանակում»:



Աղբյուր՝ Practical Handbook for Urban Redevelopment (2007, Supervision by Ministry of Land, Infrastructure and Transport of Japan)

Շողի կազմակերպման նախագիծ (երկչափ կառուցապատում)
 Շինարարական կազմակերպությունը (միություն կամ մասնավոր ձեռնարկություն) կառուրում է դիմային բարեկարգում, ինչպիսիք են փողոցը, այգին և այլն: Շողի կազմակերպման տարածքում պահուստային հող, այգիներ և փողոց ստեղծելու նպատակով սկզբնական հողի սեփականատիրոջ հողը կրճատվում է, սակայն հողի սեփականատերը կարող է նախագծված հողն օգտագործել հարմարորեն:



Աղբյուր՝ Practical Handbook for Urban Redevelopment (2007, Supervision by Ministry of Land, Infrastructure and Transport of Japan)

4. Հայաստանի Հանրապետությունում քաղաքի վերակառուցման վերաբերյալ օրենքներ, ստանդարտներ և ընթացակարգեր

- Հայաստանում քաղաքի վերակառուցման վերաբերյալ օրենքները, ստանդարտները և ընթացակարգերը ձևավորվել են Սովետական Միության ժամանակաշրջանում: Օրենքները և դրանց ինստիտուցիոնալ կառուցվածքը, ներառյալ տեխնիկական կոդները, էապես չեն փոխվել, և դրանց կիրառումը բարդացել է անկախացումից հետո:

- Քաղաքաշինության օրենքի և ստանդարտի
- Երևան քաղաքի գլխավոր հաստատվածի (2005)
- Հարստաբազմաօբյեկտային վերաբնակարար օրենքի և ստանդարտների

→Քաղաքաշինության մասին» 22 օրենք /1998-05-05/
 →Հողի մասին» 22 օրենք /2001-05-02/
 →Լիցենզավարման մասին» 22 օրենք /2001-05-30/

5. Հայաստանի Հանրապետությունում քաղաքի վերակառուցման ներկայիս վիճակը և հարցերը


- Քաղաքի պլանավորման գլխավոր հաստատվածում վերակառուցման տարածքը որոշվում է քաղաքապետի որոշմամբ, որն ունի բնակիչների հեռացման ուժ
- Վերակառուցման նախագծի պլանը մշակվել է մասնավոր շինարարի կողմից, որի կիրառման, քննման և որոշման գործընթացներն իրականացվում են օրենքների և քաղաքապետի որոշման հիման վրա:
- Վերակառուցման իրականացումը կախված է մասնավոր շինարարի ներդրման պատրաստակամությունից (շահույթաբերությունից), որն ազդեցություն է թողնում հասարակական օբյեկտների (ինչպիսիք են ճանապարհները և այգիները) և վերակառուցված շենքերի ներդաշնակության վրա:
- Քաղաքի ֆինանսական բարոությունների արդյունքում վերակառուցման նախագիծն նպաստելու համար մասնավոր ներդրողների կողմից իրականացվող հասարակական ենթակառուցվածքի զարգացումը հարթի չի կատարվում և վերակառուցման նախագծերի մեծ մասը հապարդում է:

6. Կոնդում, Կենտրոն վարչական շրջանում վերակառուցման նախագիծ (մոտ 7հա)

Վերակառուցման պլանի օրինակ (սխեմատիկ քարտեզ)

Ներկայիս իրավիճակը (ցածրահարկ տներով խիտ կառուցապատված)

Շողի սեփականատեր (կապույտ գույն - մասնավոր հող)



- Պատշաճ քաղաքաշինության օգուտները**
- ✓ Փողոցների ճիշտ նախագծման միջոցով կենսական միջավայրի բարելավում
 - ✓ Քաղաքային միջավայրի բարելավում՝ այգիների և կանաչ տարածքների ստեղծման արդյունքում
 - ✓ Շենքերի անկանոն վերակառուցման կանխարգելում
 - ✓ Փողոցների և ենթակառուցվածքի ինտեգրալ վերակառուցման արդյունքում նմիակ արժեքի բարձրացում
 - ✓ Տարահանման գործունեությունների համար բաց տարածքների և տարահանման ճանապարհի ապահովում և վերականգնման աշխատանք աղետի ժամանակ

Երևան քաղաքում հողօգտագործման/քաղաքի պլանավորման ներկայիս վիճակն ու հարցերը
 - Աղետի կառավարման համար քաղաքաշինության բարելավում -

Բաժին 3 Ռիսկի կառավարման մարմինների հիմնական պատասխանատվությունները

Գլուխ 38. Հիմնարար սկզբունքներ

Աղետի ռիսկի կառավարումը իրականացվում է երեք մակարդակներում՝ անհատական, համայնքային և պետական մակարդակներում:

Սեյսմիկ աղետի ռիսկերը նվազեցնելու համար յուրաքանչյուր քաղաքացի պետք է ներգրավվի ինքնօգնության գործողություններում՝ գիտակցելով հետևյալ սկզբունքը՝ “Դու պետք է պատասխանատու լինես քո կյանքի և ունեցվածքի պաշտպանության համար”: Թաղային միավորները (խմբեր Կազմակերպություններում և դպրոցներում) պետք է ներգրավվեն փոխադարձ օգնության գործողություններում գիտակցելով հետևյալ գաղափարի՝ “Դու պետք է պատասխանատու լինես քո թաղային միավորի/համայնատիրության պաշտպանության համար”: Քաղաքապետարանը, վարչական շրջանները և պետական կառավարման մարմինները պետք է իրականացնեն միջոցառումներ, այդ թվում խթանեն ինքնօգնության և փոխադարձ օգնության գործողությունները, “Երկրաշարժերի դեմ ավելի կայուն Երևան քաղաք ստեղծելու” համար: Երեք մակարդակներում գործող մարմինները պետք է իրականացնեն գործողություններ, որոնք նշված են այս պլանում, որտեղ բոլոր մարմինները խաղում են շատ կարևոր դեր գլուխ 1-ում նշված նպատակին հասնելու համար:

Գլուխ 39. Քաղաքապետարանի և պետական կառավարման մարմինների պատասխանատվությունը

1. Ավելի ուժեղ Երևան քաղաք ստեղծելու համար քաղաքապետարանը և պետական կառավարման մարմինները պետք է տարածեն այս պլանում նշված միջոցառումների բովանդակությունը բնակիչների շրջանում և առնչվող կազմակերպություններում, և ապա իրականացնեն/խթանեն մեղմացմանն ու պատրաստվածությանն ուղղված գործողությունները՝ հատկացնելով անհրաժեշտ բյուջե:

2. Երկրաշարժի առաջացման դեպքում քաղաքապետարանը և պետական կառավարման մարմինները պետք է իրականացնեն ԱԻ արձագանքում, ինչպես օրինակ՝ փրկարարական գործ, տարահանում, բժշկական օգնություն, որպեսզի հնարավոր լինի նվազագույնի հասցնել վնասը:

3. Երկրաշարժից վնասներ կրելուց հետո քաղաքապետարանը և պետական կառավարման մարմինները պետք է պատրաստեն վերականգնման և վերակառուցման մանրամասն պլաններ՝ համաձայն վնասի ընթացիկ իրավիճակի և ելնելով այս պլանում նշված պլանավորման սկզբունքներից: Համաձայն մանրամասն պլանների՝ վերականգնման գործողությունները կիրականացվեն անհապաղ վերականգնման համար՝ նախքան երկրաշարժը եղած վիճակին հասնելու

նպատակով, և ապա կիրականացվեն վերակառուցման գործողությունները “ավելի ուժեղ Երևան քաղաք ստեղծելու համար”:

4. Քաղաքապետարանը և պետական կառավարման մարմինները խթանում են նաև թաղային միավորների կողմից ձեռնարկվող աղետների կառավարման գործողությունները “իրենց Թաղային միավորները պաշտպանելու”, ինչպես նաև նպաստում բնակիչների գործողություններին “իրենց կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու” համար:

Գլուխ 40. Թաղային միավորների (ԹՄ) պատասխանատվությունները

1. Այս պլանում Թաղային միավոր (այսուհետ՝ ԹՄ) ասելով ի նկատի ունենք՝ դպրոց կենտրոնով 500 մ շառավիղով գտնվող շենքերը և շինությունները: Այսպիսով՝ սույն պլանով հիմնվում է աղետին արձագանքող մի քանի շենքերի բնակչություն միավորող 1 կոմպակտ միավոր: Այս տարածքում հայտնված կազմակերպությունները իրենց աշխատողներով նույնպես կարող են ընդգրկվել ԹՄ աղետի դիմակայման գործընթացին: Ենթադրվում է, որ համատիրությունների շենքերի շահագործմամբ և պահպանմամբ զբաղվող պատասխանատուները և բնակիչների միավորումները պետք է նաև հանդիսանան աղետների կառավարման գործողությունները խթանող միավոր:

2. ԹՄ կունենա իր ոչ հաստիքային անձնակազմը, որում կընդգրկվեն «Ուժեղ երկրաշարժի դեպքում Երևան քաղաքի բնակչության տարահանման պլանը հաստատելու մասին» Երևանի քաղաքապետի որոշմամբ հաստատված Տարահանման վայրի միավորի անձնակազմը (այսուհետ՝ ՏՎՄ. յուրաքանչյուր դպրոցում ստեղծվել է տարահանմանը աջակցող խումբ և նշանակվել է պատասխանատու անձնակազմ), այդ 500 մետր շառավիղում ընդգրկված բնակելի շենքերի լիազորները, կազմակերպությունների ղեկավարները և այլ պաշտոնյա/պատասխանատու անձինք:

3. Սովորական պայմաններում և արտակարգ իրավիճակներում աղետի կառավարման գործողությունները սահուն իրականացնելու համար ԹՄ անհրաժեշտ է ստեղծել ենթախմբեր, որոնք կունեն խնդիրներ կապված ընդհանուր համակարգման, շինությունների ապահովության ստուգման, աղետների կրթության, տեղեկատվության փոխանցման, ուսուցման, փրկարարական գործի և առաջին բուժօգնության հետ: Խումբը պետք է ստեղծի ներքին կազմակերպչական կառուցվածք կարևոր միջոցառումները իրականացնելու համար, ինչպիսիք են կապը ծնողների հետ, աշակերտների անվտանգությունն ապահովող միջոցառումները, դպրոցի և աշակերտների տների միջև ընկած ճանապարհի անվտանգության ապահովումը, տարահանման երթուղիների անվտանգության ապահովում, առաջնային փրկարարական և հակահրդեհային միջոցառումներ, բժշկական օգնություն, բնակիչների և իրենց ունեցվածքի անվտանգության ապահովում և այլն:

4. ԹՄ խնդիրները, պատասխանատվության և գործունեության շրջանակները սահմանվում են սույն պլանով:

5. Սակայն ներկայումս միայն մի քանի միավորումներ են կարողանում արդյունավետ իրականացնել շահագործման և պահպանման գործողությունները, իսկ

ինչ վերաբերում է աղետների կառավարման գործողությունները խթանող համայնք ստեղծմանը, այն պետք է համարվի առաջնահերթություն: Այդ իսկ պատճառով դժվար թե բնակիչների միավորումները հիմք հանդիսանան քաղաքում աղետների կառավարման գործողությունների համար: Առաջարկվում է ամրապնդել բնակիչների միավորումները գործողությունների առումով և ներառել աղետների կառավարման գործողությունները իրենց գործողությունների մեջ:

6. Յուրաքանչյուր ԹՄ պետք է ինքնուրույն իրականացնի սեյսմիկ աղետի կառավարման գործողություններ գիտակցելով հետևյալ գաղափարը՝ “Դու պետք է լինես պատասխանատու քո թաղի պաշտպանության համար”՝ համաձայն քաղաքապետի կողմից հաստատված աղետների կառավարման պլանի՝ քաղաքապետարանից և պետական կառավարման մարմիններից օգնություն ստանալու և վերջիններիս կողմից ղեկավարվելու միջոցով:

7. Երկրաշարժի առաջացման դեպքում, նախ և առաջ, անհատ բնակիչները պաշտպանում են իրենց կյանքն ու ունեցվածքը, իսկ հետո բնակիչները պետք է պաշտպանեն համայնատիրության մյուս անդամների կյանքն ու ունեցվածքը՝ համայնքում վնասը նվազագույնի հասցնելու համար:

8. Տուժելով երկրաշարժի վնասներից՝ ԹՄ պետք է ինքնակամ նպաստեն վերականգնման/վերակառուցման պլանների մշակմանը, իսկ հետո ինքնուրույն իրականացնեն վերականգնման/վերակառուցման գործողությունները “ավելի ուժեղ Երևան քաղաք ստեղծելու” համար:

Գլուխ 41. Բնակիչների պատասխանատվությունները

1. Անմիջապես երկրաշարժից հետո հնարավոր չէ ակնկալել օժանդակող գործողություններ, օրինակ՝ փրկարարական գործ և նախնական հրդեհաշիջում, քաղաքապետարանի և պետական կառավարման մարմինների կողմից: Պետք է նաև հաշվի առնել, որ ոչ բոլոր տուժածները կարող են ստանալ բավարար օգնություն նույնիսկ աղետից որոշ ժամանակ հետո: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր բնակիչ ապահովի, նախ և առաջ իր անվտանգությունը՝ գիտակցելով հետևյալ գաղափարը՝ “Դու պետք է պաշտպանես քո կյանքը և ունեցվածքը”:

2. Տուժելով երկրաշարժի վնասներից՝ բնակիչները պետք է հասկանան իրենց պատասխանատվությունը որպես ԹՄ անդամ և համագործակցեն ԹՄ անդամների հետ՝ ավելի շատ մտածելով փոխադարձ օգնության մասին, որպեսզի հնարավոր լինի վերականգնել/կայունացնել իրենց առօրյա կյանքն ու քաղաքի առօրյան:

3. Բնակիչները պետք է համագործակցեն աղետների կառավարման միջոցառումներ մշակելու համար, որոնք իրականացնում են քաղաքապետարանը, պետական կառավարման մարմիններն ու կազմակերպությունները “ավելի ուժեղ Երևան քաղաք ստեղծելու” համար: Նրանք պետք է նաև նպաստեն միջոցառումների իրականացմանը, օրինակ՝ ինքնակամ մասնակցելով իրականացվելիք գործողություններին:

Գլուխ 42. Առնչվող

կազմակերպությունների

պատասխանատվությունները

ՀՀ կառավարության 2010թ. թիվ 919 որոշման և քաղաքապետի 2010թ. թիվ 940-Ա որոշման մեջ նշված պետական կառավարման մարմինները և առնչվող կազմակերպությունները ցույց են տրված աղյուսակ 25-ում: Այս կազմակերպությունները պետք է իրականացնեն նշված խնդիրները՝ համագործակցելով քաղաքապետարանի և պետական կառավարման մարմինների հետ:

Աղյուսակ 25 Առնչվող խոշոր կազմակերպությունները

ՀՀ կառավարության թիվ 919 որոշում (2010)	Քաղաքապետի թիվ 940-Ա որոշում (2010)
<ul style="list-style-type: none"> - ՀՀ բոլոր 18 նախարարությունները - ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայությունը - ՀՀ ԿԱ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն - ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե - ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտե - ՀՀ ԿԱ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն - Մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան - ՀՀ Հանրային հեռուստառադիոյի ընկերության խորհուրդ - Տեղական կառավարման մարմիններ մարզերում և Երևանք քաղաքում 	<ul style="list-style-type: none"> - Երևանի քաղաքապետարանի 20 վարչություններ և բաժիններ - Երևան քաղաքի 12 վարչական շրջաններ - Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ - Երևանի կայազոր - ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն - Երևան քաղաքի ազգային անվտանգության վարչություն - “Երևան գազ” ՓԲԸ - Առողջապահության նախարարության հիգիենայի և հակահամաճարակաբանության պետական տեսչություն - “Երքաղլույս” ՓԲԸ - “Երևան ջուր” ՓԲԸ - “Հայաստանի էլեկտրական ցանցեր” ՓԲԸ - “Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր” ՓԲԸ

Մաս 2 Հետևանքների մեղմացման պլան

Բաժին 4 Հետևանքների մեղմացման միջոցառումների իրականացմանն առնչվող քաղաքի կառավարումը

Գլուխ 43. Քաղաքի դերը

1. Երկրաշարժի հնարավոր հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումները, ինչպիսիք են օրինակ շենքերի սեյսմակայունության բարձրացում, շատ արդյունավետ են երկրաշարժի ռիսկի նվազեցման գործում: Երևանը քաղաքում այժմ իրականացվում են երկրաշարժի հնարավոր վնասների նվազեցմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվում են երկրաշարժերի մոնիթորինգ, շենքերի սեյսմակայունացում, մշակված են բժշկական ապահովման և հակահամաճարակային մի շարք միջոցառումներ, անցկացվում են վարժանքներ, իրականացվում է ուսուցում և այս ոլորտում հանրային իրազեկման միջոցառումներ: Երևան քաղաքում երկրաշարժի հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումների հետագա ընդլայնման նպատակով առաջարկվում է՝

1) Երևան քաղաքը իրականացնում է սույն պլանի 5-րդ և 9-րդ բաժիններում առաջարկված միջոցառումները, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերում նշված բաժիններում առաջարկված միջոցառումների իրականացման գործում: Այս նպատակով առաջարկվում է քաղաքի համապատասխան մարմինների կողմից անհրաժեշտ պայմանների ստեղծում, մանրամասն տարեկան պլանների մշակում, անհրաժեշտ ֆինանսավորման ապահովում, համապատասխան անձնակազմի և մասնագետների ներգրավում:

2) Պլանի որոշակի մասերի իրականացման գործընթացի մոնիթորինգի իրականացում, այդ միջոցառումների անխոչընդոտ իրականացման ապահովում, անհրաժեշտության դեպքում ստորաբաժանումների աշխատանքների ճշգրտում (վերանայում) և անհրաժեշտ աջակցության ցուցաբերում:

3) Հաշվետու տարվա վերջում Պլանի առանձին մասերի իրականացման միջոցառումների մանրամասն գնահատում և գնահատման արդյունքների հիման վրա հաջորդ տարվա միջոցառումների պլանավորման իրականացում:

Գլուխ 44. Իրագործման և աջակցության քաղաքային համակարգը, գործունեության բովանդակությունը

1. Սույն պլանը իրագործումը կսկսվի Երևան քաղաքի քաղաքապետի կողմից հաստատումից հետո: ՀՀ ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչությունը (ԵՓՎ) պատասխանատու է Պլանի որոշակի մասերի իրագործման համար: ԵՓՎ որպես համակարգման կենտրոն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) Երևանի քաղաքապետարանի աշխատանքներին աջակցության իրականացում՝ մանրամասն պլանների և բյուջեների, համապատասխան մարմինների և կազմակերպությունների անձնակազմերի տեղաբաշխման ստուգման գործերում, ինչպես նաև երկրաշարժի հնարավոր հետևանքների նվազեցման պլաններով իրականացվող միջոցառումների համակարգման, պլանների քննարկման և դրանց վերանայման մասին կարգադրությունների իջեցման հարցերում:

2) Մանրամասն պլանների իրագործման միջանկյալ արդյունքների դիտարկում և ամփոփում՝ Երևանի քաղաքապետարանին համապատասխան ցուցումների նախապատրաստման աջակցության ցուցաբերման նպատակով:

3) Հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո մանրամասն պլանների իրագործման արդյունքների դիտարկում և ամփոփում՝ Երևանի քաղաքապետարանին արդյունքների գնահատման և հաջորդ տարվա պլաններում ներառելու նպատակով նոր միջոցառումների նախանշման գործում աջակցության ցուցաբերման նպատակով:

Աղյուսակ 26 Երկրաշարժի հետևանքների նվազեցման պլանների հետ կապված կազմակերպությունների և բաժինների դասակարգում

Վերահսկող բաժիններ	Երևանի քաղաքապետարանի այն վարչությունները, որոնք պատասխանատու են առանձին պլանների իրագործման համար, ինչպես նաև իրականացնում են համապատասխան վերահսկողություն և համակարգում
Հիմնական կատարող բաժիններ/ կազմակերպություններ	Առանձին պլանների անմիջական կատարողներ: Կատարումը պետք է իրականացվի դերերի և փոխհամագործակցության միջոցառումների հստակ բաշխման հիման վրա
Աջակցող բաժիններ և մարմիններ	Պլանների իրականացման գործում հիմնական կատարող բաժիններին /կազմակերպություններին աջակցություն ցուցաբերող և համագործակցող բաժիններ և մարմիններ

Աղյուսակ 27 Բաժիններ և կազմակերպություններ, որոնք պատասխանատու են առանձին պլանների իրագործման համար

Պլանի գլուխներ	Վերահսկող բաժիններ	Կատարող բաժիններ և մարմիններ	Աջակցող բաժիններ և մարմիններ
1	2	3	4
Տարերային աղետների կանխարգելման գործում գիտակցության բարձրացում			
Երկրաշարժի հետևանքների կանխարգելման վերաբերյալ տեղեկատվության փոխանակում (տարածում)			
Տարերային աղետների կանխարգելման գործում բնակչության ինքնուրույն գործելակերպի խրախուսում			
Համագործակցություն կամավորների հետ			
Երկրաշարժի հետևանքների կանխարգելման համայնքային (վարչական շրջանների) պլանների մշակում, նախազգուշացման համակարգի ուժեղացում, գործունեության զարգացում			
Երկրաշարժի հետևանքների կանխարգելմանն ուղղված ուսումնական ծրագրերի մշակում, վարժանքների անցկացում			
Հակահրդեհային պաշտպանություն, վտանգավոր օբյեկտների անվտանգության			

ապահովում			
Աջակցություն հասարակության առավել խոցելի հատվածներին			
Տնտեսության և արդյունաբերության վերականգնման նախապատրաստում			
Վերականգնողական (վերապլանավորման) աշխատանքների խթանում, քաղաքային շինարարության համար տարածքների հատկացում			
Ճանապարհների սպասարկում			
Տարերային աղետների ժամանակ հողօգտագործում			
Շենքերի սեյսմակայունության			
Կահույքի և այլ իրերի ամրացում՝ անկումից պաշտպանելու նպատակով			
Վերելակների անվտանգության ապահովում			
Կենսաապահովման ենթակառուցվածքների սեյսմակայունության			
Տրասնպորտային օբյեկտների սեյսմակայունության			
Լանջերի ամրացման պատերի և վահանների պաշտպանություն փլուզումից			
Մշակութային և այլ արժեքների պաշտպանության ապահովում			
Պաշտպանություն սողանքներից, սելավներից և փլուզումներից			
Մտացածին (սցենարային) երկրաշարժների ուսումնասիրություն			
Երկրաշարժի հետևանքով առաջացած աղետների ուսումնասիրություն			
Հնարավոր վնասների գնահատման համար իրականացվող ուսումնասիրություն			

Բաժին 5. Մարդկային սեյսմակայուն պոտենցիալի զարգացումը

Գլուխ 45. Ընդհանուր դրույթներ

Տարերային աղետների պայմաններում մարդկային հուսալի պոտենցիալի ապահովումը հանդիսանում է քաղաքային իշխանություններ խնդիրը, որի լուծման համար պետք է զարգացնել ծրագրեր՝ ուղղված քաղաքային վարչակազմի ծառայողների և բնակչության գիտակցված մոտեցմանը ԱԻ կանխման և հետևանքների վերացման միջոցառումներին, և գործնական վարժանքների ընթացքում ԱԻ դեպքում իրենց ունակությունների կատարելագործմանը:

Գլուխ 46. Բնակչության դերը

Երկրաշարժի աղետալի հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է ապահովվել բնակչության համապատասխան պատրաստվածությունը, հիմնված երկրաշարժի դեպքում վարքագծի և արտակարգ իրավիճակներում առանց խուճապի գործելու հստակ գիտելիքները յուրաքանչյուր քաղաքացուն հասցնելու հիման վրա, հիմնվելով «Ինքդ պաշտպանիր քեզ և քո ունեցվածքը» սկզբունքի վրա:

Դրա համար բնակչությանը անհրաժեշտ է սեփական նախաձեռնությամբ նախօրոք իրականացնել միջոցառումներ, ուղղված աղետի մասշտաբները նվազագույնի հասցնելուն և ԱԻ դեպքում գործողություններին սեփական պատրաստվածության ապահովմանը (տես աղյուսակ 28):

Աղյուսակ 28 Բնակչության գործողությունները աղետի մասշտաբները նվազեցնելու և սեփական պատրաստվածության ապահովման ուղղությամբ

Աղետի մասշտաբները նվազեցնելու գործողություններ	<ol style="list-style-type: none"> 1. Բազմաբնակարան տների բնակիչների ոչ ֆորմալ միությունների հիմնում 2. Սեփական բնակարանների սեյսմակայունության և հրդեհային անվտանգության ապահովում 3. Հրդեհների կանխարգելում 4. Կահույքի, պահարանների, դարակների ամրացում, լուսամուտների ապակիների պաշտպանություն 5. Պատերի պրոֆիլակտիկ զննում և ամրացում, շենքերի երեսապատման անվտանգության ապահովում 6. Մասնակցություն տեղական վարչական շրջանների շրջանակներում դպրոցների, համատիրությունների և այլ կազմակերպությունների կողմից անց կացվող փոխօգնության համակարգերի ստեղծման աշխատանքներին 7. Արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ գիտելիքների և տեղեկատվության հասանելիության ընդլայնում
--	---

Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ապահովման միջոցառումներ	8. Նախօրոք կրակմարիչների և հրդեհաշիջման այլ գույքի ձեռք բերում և պահպանում 9. Սննդամթերքի, ջրի, շարժական ռադիոկայանների, գրպանի լապտերի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության այլ գույքի պաշարների ապահովում (առնվազն 3 օրվա) 10. Ահ դեպքում ընտանիքի անդամների միջև պարտականությունների նախօրոք բաշխում; հավաքի վայրի և կապի միջոցների, տարահանման կարգի և երթուղիների որոշում, 11. Քաղաքի իշխանությունների և ԹՄ կամ Համատիրությունների կողմից կազմակերպվող վարժանքներին և այլ միջոցառումներին ակտիվ մասնակցություն 12. ԹՄ, Համատիրություններին և տեղական մակարդակի այլ մարմիններին տեղեկատվության տրամադրում ընտանիքի այն անդամների մասին, որոնք ունեն հատուկ խնամքի կարիք
---	--

Վնասի նվազեցմանն ուղղված միջոցառումների մանրամասն նկարագիրը բերված է Գլուխ 47-ում:

Գլուխ 47. Արտակարգ իրավիճակներում պատրաստվածության ապահովման միջոցառումներին սեփական նախաձեռնությամբ բնակչության մասնակցության ակտիվացումը

1. Տեղական մակարդակով արտակարգ իրավիճակներին կոլեկտիվ պատրաստվածության Կազմակերպություններում մասնավոր տների բնակիչների միավորում՝ԹՄ իրականացվում է կոլեկտիվ սկզբունքներով:
2. Մասնավոր տների ընդհանուր թիվը Երևանում 42630 միավոր է՝ շուրջ 170 հազար ընդհանուր բնակչությամբ (2007թ – ի տվյալներով): Մասնավոր տների 43% - ը քարե կառույցներ են, 46% - ը պատրաստված են բետոնե բլոկներով, 11% - ը՝ հողային տներ են:
3. Սույն պլանի 6-րդ և 11-րդ բաժիններում, ՝ «Վարչական շրջանների համար հնարավոր երկրաշարժներին պատրաստվածության պլան», առանձին շարադրված է տեղական մակարդակով կանխարգելիչ գործողությունների ակտիվացման վերաբերյալ առաջարկություններ: Հարկ է նշել, որ «տեղական համայնք» հասկացողությունը այս դեպքում սահմանափակվում է վարչական շրջաններով, տնտեսվարող սուբյեկտներով և ընդհանուր կրթական հաստատություններով, չհաշված բնակիչների միությունները՝ ԹՄ դրանց առայժմս բացակայության պատճառով: Առկա վարչական շրջանների և համայնատիրությունների/ԹՄ աշխատակազմերի գործունեությունը ուղղված է բացառապես կոմունալ խնդիրների լուծմանը, ինչպիսիք են ենթակա տարածքների աղբահանումը և չի ներառում որեւէ այլ խմբի կոլեկտիվ միջոցառումներ, բացի այդ, ի սկզբանե գոյություն ունեցող 12 վարչական շրջաններում այսօր ենթակա տարածքների աղբահանումը շարունակում է ոչ ավելի քան դրանց կեսում: Բնակչության մասնակցությունը արտակարգ իրավիճակներին պատրաստվածության միջոցառումների կազմակերպմանը հնարավոր է միայն, եթե ստեղծեն նոր տեսակի միություններ՝ տարածքային սկզբունքով՝ Թաղային միավորներ:

Այս պայմաններում ԱԻ և տարածքային ստորաբաժանումները պետք է կազմակերպեն միջոցառումներ՝ փոխակերպելու առկա կառույցները արտակարգ իրավիճակներում կոլեկտիվ պատրաստվածության ընկերակցությունների՝ ունենալով ԱԻՆ և կոմունալ տնտեսությունների աջակցությունը:

Գլուխ 48. Բնակարանի սեյսմիկ և հրդեհային անվտանգության ապահովումը

1. Սեյսմիկ աղետի դեպքում մարդկային կորուստի հիմնական պատճառներն են հանդիսանում, առաջին հերթին, մահը շենքերի և շինությունների բեկորների տակ և մահը հրդեհների հետևանքով: Վերը նշված հանգամանքների հետ կապված՝ զոհերի կրճատման առավել արդյունավետ մեթոդներն են շենքերի և շինությունների սեյսմիկ և հրդեհային կայունության բարձրացումը: Ներկայումս բնակարանային ֆոնդի մեծ մասը հանդիսանում է բնակչության մասնավոր սեփականություն, որը սեյսմիկ և հրդեհային կայունության ապահովման միջոցառումների իրականացումը տեղափոխում է բնակարանի սեփականատիրոջ անձնական պատասխանատվության ոլորտ: Բազմաբնակարան շենքերի դեպքում անհրաժեշտ աշխատանքների կենտրոնացված իրականացումը բարդանում է՝ պայմանավորված, որպես համատիրության լիիրավ անդամ, յուրաքանչյուր բնակչի համաձայնության ստացման անհրաժեշտությունից: Այսպիսով, կարևոր է բնակչության՝ «Պաշտպանեք ինքներդ ձեզ և ձեր սեփականությունը» սկզբունքի հստակ ըմբռնումը՝ անձնական բնակարանների սեյսմիկ և հրդեհային անվտանգության ապահովման իրականացմամբ, ինչպես նաև ԹՄ ու համատիրության կողմից անցկացվող համապատասխան միջոցառումների մասնակցությամբ:

2. Երևանի քաղաքապետարանը ՀՀ քաղաքաշինության նախարարության աջակցության ներքո պետք է աջակցի բնակչությանը՝ բնակարանների սեյսմիկ ամրացման աշխատանքներում, և այդ աշխատանքների իրականացման նպատակով ապահովի անհրաժեշտ տեխնիկական տվյալներով: Պլանի 95-ից 102-րդ գլուխներում շարադրված են հստակ առաջարկություններ՝ նշված ուղղություններով կոնկրետ միջոցառումների մասով:

Գլուխ 49. Հրդեհների կանխարգելում

1. Երկրաշարժի ժամանակ, սեյսմիկ տատանումների հետևանքով ուղղակի վնասից բացի մտահոգություն է առաջացնում հրդեհների հետ կապված երկրորդային վնասի մասշտաբների աճը: Բնակարանային ֆոնդի հիմնական մասը հագեցած է անհատական ջեռուցման համակարգերով, գազաֆիկացված է, որն, ընդհանուր առմամբ ցույց է տալիս հրդեհների ռիսկի բարձր մակարդակը: Որպես զգալի հրդեհների պոտենցիալ պատճառներ, պետք է դիտարկել նաև բնակչության կողմից օգտագործվող ջեռուցման էլեկտրական սարքերը և գազօջախները:

2. ԱԻՆ խնդիրն է մշակել ծրագրեր, ուղղված հրդեհային անվտանգության բնագավառում բնակչության գիտելիքների ավելացմանը՝ համապատասխան տեսական եւ պրակտիկ ուսուցման միջոցով (տես աղյուսակ 29), հրդեհային անվտանգության պետական տեսչության աշխատակիցների մասնակցությամբ:

Աղյուսակ 29. Հրդեհների կանխարգելման նպատակով աշխատանքներ բնակչության հետ

<p>Հրդեհների կանխարգելում (տեխնիկական մաս)</p> <ol style="list-style-type: none"> 1. Բնակարանների հագեցում հակահրդեհային վաղ ազդարարման սարքերով 2. Կրակմարիչների պարտադիր ձեռք բերում; ջրի մշտական պաշարների ապահովում (հնարավոր տարաներով) 3. Բնակարանների հագեցում հրդեհաշիջման, էլեկտրականության անջատման և արտահոսքի դեպքում գազի անջատման ավտոմատ համակարգերով 4. Տատանումների նկատմամբ անկայուն էլեկտրական սարքավորումների պարտադիր ամրացում 5. Հրակայուն ծածկույթի ապահովում այն տարածքներում, որտեղ օգտագործվում է բաց կրակ 6. Բնակարանների հագեցումը հակահրդեհային վարագույրներով և այլ տեխնիկական միջոցներով 7. Դյուրավառ և վտանգավոր նյութերի, առարկաների նկատմամբ մշտական հսկողության ապահովում
<p>Հրդեհների կանխարգելում (մեթոդական և պրակտիկ մաս)</p> <ol style="list-style-type: none"> 8. Երկրաշարժի իմիտացիոն – վարժասարքերի օգտագործում 9. Նույնիսկ թեթև ցնցումների ժամանակ կրակի անջատման սովորությունը հասցնել ավտոմատային 10. Բնակչության իրազեկումը գազի, էլեկտրականության անջատման երեք կարևորագույն ժամանակահատվածների մասին. թույլ ցնցումների ժամանակ, հիմնական տատանումներից հետո և հրդեհի դեպքում 11. Բնակչության իրազեկումը կարճ ժամանակով բնակարանը լքելու կամ տարահանման ժամանակ էլեկտրականության լրիվ անջատման և գազի փականների փակման անհրաժեշտության մասին 12. Բնակչության իրազեկումը էլեկտրամատակարարման համակարգի գործունեության դադարեցման հետ կապված այլընտրանքային ջեռուցման համակարգերի օգտագործման անվտանգության ապահովման միջոցառումների մասին 13. Բնակչության իրազեկումը հրդեհի բռնկման վտանգի մասին՝ էլեկտրամատակարարման և գազամատակարարման համակարգի գործունեությունը վերականգնվելու պահին

Գլուխ 50. Կահույքի, պահարանների, դարակների ամրացում, լուսամուտների ապակիների պաշտպանություն

Արտաքին ավերվածությունների նշանների բացակայությունը երկրաշարժի ժամանակ նույնպես կարող է հանգեցնել մարդկային զոհերի՝ կապված կահույքի կամ նրա առանձին մասերի վայր ընկնելու և ապակիների կոտրվելու հետ: Դրա հետ կապված՝ բնակչությունը պետք է ապահովի կանխարգելիչ միջոցառումներ՝ ամրացնի հեռուստացույցները, կահույքը և նրա մասերը, խուսափի մեծ չափերի կահույքի պարագաներից ննջասենյակներում, պաշտպանիչ թաղանթով ամրացնի լուսամուտների ապակիները:

Գլուխ 51. Պատերի պրոֆիլակտիկ զննում և ամրացում, շենքերի երեսապատման անվտանգության ապահովում

Բնակելի տների արտաքին պատերի ամրացումը կարևոր է ցնցումների ժամանակ փլուզումների, ինչպես նաև տան բնակիչների և անցորդների վնասման կանխարգելման

համար: Առանձին պետք է նշել արտաքին պատշգամբների և ձևափոխված սենյակների պատերի բավականին ամրության ապահովման անհրաժեշտությունը:

Գլուխ 52. Մասնակցություն վարչական շրջանների շրջանակներում դպրոցների, համատիրությունների և այլ կազմակերպությունների կողմից անց կացվող փոխօգնության համակարգերի ստեղծման աշխատանքներին

Վեցերորդ բաժնում նշված, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ապահովման միջոցառումների պրակտիկ իրագործումը անհնար է առանց բնակիչների ակտիվ մասնակցության: Կարևոր է ապահովել բնակչության ակտիվ ներգրավումը տեղական փոխօգնության համակարգերի ստեղծման աշխատանքներին, որը կհանդիսանա հնարավոր աղետներին վարչական շրջանների պատրաստվածության հիմքը:

Գլուխ 53. Արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ գիտելիքների և տեղեկատվության հասանելիության ընդլայնում

Կարևոր է ակտիվացնել բնակչության ինքնակամ ձգտումը ԱԻՆ (տես բաժին 5), քաղաքապետարանի, և ԶԼՄ-ների (տես բաժին 6) կողմից անցկացվող, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ ուսուցողական ծրագրերի, գործնական գիտելիքների և տեղեկատվության ձեռք բերման համար:

Գլուխ 54. Արտակարգ իրավիճակների պատրաստվածության ապահովման միջոցառումներին գիտակցված մոտեցման ընդլայնումը

1. Ուսումնական ծրագրերի մշակումը վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների համար Քաղաքապետարանի կարևորագույն խնդիրն է: Արտակարգ իրավիճակներում բնակչության կյանքի, առողջության և գույքի պաշտպանությունը, որը պետական մարմիններին ներկայացվող պահանջներից առաջնահերթն է կարելի է հասնել ապահովվելով վարչական շրջանների աշխատակազմերի աշխատողների համապատասխան ուսուցմամբ՝ նպատակ ունենալով բարձրացնել նրանց իրազեկվածությունը արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ, հիմնավորված որոշումներ ընդունելու և արտակարգ իրավիճակներում վստահ գործելը ունակությունը:

2. Աի ոլորտում ներգրավված վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցները պետք է անցնեն 15 ժամյա ուսուցողական ծրագրով տեսական և գործնական դասընթացներ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ 9 ժամ ընդհանուր և 6 ժամ մասնագիտական դասընթացներ: Վարչական շրջանների այլ բաժինների աշխատակիցները պետք է մասնակցեն վարչական շրջաններում պարբերաբար անցկացվող ուսուցողական կոլեկտիվ ծրագրերին՝ ուղղված ոչ միայն արտակարգ իրավիճակների կանխման և

հետևանքների վերացման միջոցառումների հիմնական նյութերի հետ ծանոթացմանը, ինչպես նաև ծանոթանան արտակարգ իրավիճակներում յուրաքանչյուր բաժնի կողմից աշխատանքների կազմակերպման կարգին, յուրաքանչյուրի պարտականություններին և ոչ ստանդարտ իրավիճակներում վարքագծի հնարավոր մոդելներին: ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի կողմից կազմվում են աղյուսակ 30- ում բերված թեմատիկայով ուսումնական ձեռնարկներ:

Աղյուսակ 30 Վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների համար երկրաշարժի կանխարգելման և հետևանքների վերացման ուսուցման տեսական մասի բովանդակություն

1. Երկրաշարժերի առաջացման մեխանիզմների և սեյսմիկ տատանումների ներածություն
2. Երկրաշարժերի ռիսկի կառավարման ընթացիկ միջոցառումների ծանուցում
3. Սեյսմիկ աղետի դեպքում վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների և այլ պատասխանատու անձանց պարտականությունները
4. Երկրաշարժի կանխարգելման և հետևանքների վերացման արդի հիմնահարցեր
5. Այլ արդի թեմաներ

Գլուխ 55. Արտակարգ իրավիճակներում պատրաստվածության ապահովման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության տարածում բնակչության շրջանում

1. ԵՓՎ ԱԻ վարչական շրջանների բաժինները, ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի աջակցությամբ, պետք է կազմակերպեն հնարավոր աղետներին պատրաստվածության ապահովման վերաբերյալ բնակչության գիտակցված մոտեցման և տեղեկացվածության բարձրացման աշխատանքներ՝ քարոզչական թերթիկների տարածմամբ, սեմինարների, թեմատիկ ցուցահանդես-տոնավաճառների կազմակերպմամբ. ՁԼՄ-ների ներուժի ակտիվ օգտագործման հետ համատեղ: Միևնույն ժամանակ, պետք է հատուկ ուշադրություն դարձնել տեղեկատվության մատչելիության վրա, վերջինիս ընկալման հետ կապված խնդիրներ ունեցող մարդկանց խմբերին՝ ծերեր, հաշմանդամներ և օտարերկրյա քաղաքացիներ:

- 1) Տեղեկատվության տարածումը խորհուրդ է տրվում կազմակերպել աղյուսակ 31-ում բերված մեթոդներով:

Աղյուսակ 31 Բնակչության շրջանում արտակարգ իրավիճակների պատրաստվածության ապահովման միջոցառումների վերաբերյալ ինֆորմացիայի տարածման մեթոդները

1. Հավաքներ վարչական շրջաններում
2. ԹՄ, Դպրոցներում, համատիրություններում և այլ սուբյեկտներում աշխատանք տանող անձանց և կազմակերպությունների հրահանգավորում և մեթոդական օգնության ցուցաբերում
3. Վտանգների և ռիսկերի քարտեզներին բնակչությանը ծանոթացում
4. Ուսուցողական թերթիկների, վավերագրական տեսանյութերի և այլ քարոզչական նյութերի

<p>պատրաստում և տարածում</p> <p>5. Բոլոր տեսակի ՁԼՄ – ների ներուժի օգտագործում</p> <p>6. Սեմինարների, ցուցահանդես-տոնավաճառների կազմակերպում, քարոզչական վահանակների տեղադրում</p>
--

2) Խորհուրդ է տրվում բնակչության շրջանում տեղեկատվությունը տարածել հետևյալ բովանդակությամբ.

ա) տեղեկատվություն երկրաշարժի բնության վերաբերյալ, պարզ և մատչելի բացատրություններ երկրաշարժերի առաջացման մեխանիզմների, սեյսմիկ ալիքների տարածման բնույթի, երկրակեղևի տատանումների վերաբերյալ: Ծանոթություն վտանգների և ռիսկերի քարտեզների հետ.

բ) Երկրաշարժի պատրաստվածության ապահովման ուղղությամբ ԱԻ մարմինների ընթացիկ աշխատանքները, բնակչության ծանոթացումը ԱԻՆ և երկրաշարժի կանխարգելման և հետևանքների վերացման աշխատանքներում ընդգրկված այլ մարմինների կողմից իրականացվող գործառույթներին.

գ) Սեփական անվտանգության ապահովման կանխարգելիչ միջոցառումներ, ծանոթացում հնարավոր աղետի վնասների նվազեցման, ինչպես նաև երկրաշարժին սեփական պատրաստվածության ապահովման միջոցառումներին (տես 41, 42, 119 և 120 գլուխներում).

դ) Բնակչության հավաքի կետերի և թաքստոցների տեղակայումը, տարահանման կարգը, բնակչության հավաքի կետերի և թաքստոցների տեղակայման վայրերը, ըստ բնակչության վայրերի.

ե) Երկրաշարժի դեպքում քաղաքում ճանապարհատրանսպորտային երթևեկության սահմանափակում մտցնելու կարգը, վարորդների վարքագծի կանոնները, երկրաշարժի ժամանակ բնակչության (վարորդներ, ուղևորներ) վարվելակերպի կանոնների ծանոթացման ուղղությամբ ԱԻՆ և հասարակական կարգի պահպանության մարմինների կատարած աշխատանքները (տես աղյուսակ 32):

Աղյուսակ 32 Երկրաշարժի ժամանակ վարորդների վարվելակերպի կանոնները

<ol style="list-style-type: none"> 1. Անվտանգության միջոցառումների և կանոնների պահպանումը ստորերկրյա ցնցումները զգալիս 2. Ճանապարհային երթևեկության վիճակի մասին տվյալների հավաք 3. Ճանապարհային ոստիկանության ցուցումների կատարում 4. Ավտոտրանսպորտի միջոցով դեպի ապաստարաններ գնալու արգելափակում 5. Էվակուացիայի դեպքում ավտոտրանսպորտի կայանման կանոնները
--

զ) Տուժածների ապաբլրկավորման և առաջին օգնության ցուցաբերման կարգը, ԱԻՆ և առողջապահության նախարարության կողմից բնակչության, ինքնուրույն անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու մեթոդների ուսուցումը (սրտի աշխատանքի և շնչառության վերականգնում, արյունահոսությունների դադարեցում)՝ դրանով իսկ ապահովելով արտակարգ իրավիճակների դեպքում անդառնալի կորուստների թվի նվազեցումը:

Բաժին 6 Սեյսմակայուն համայնքի ձևավորում

Գլուխ 56. Թաղային միավորները

Վերջին ուժեղ երկրաշարժերի ժամանակ հնարավոր է եղել փրկել շատ մարդկանց կյանքեր բնակելի միավորումներում մարդկանց ինքնուրույն ջանքերի շնորհիվ, օրինակ՝ նախնական հրդեհաշիջում, փրկարարական գործ, առաջին բուժօգնություն, տարահանում: ԹՄ (բնակիչների միավորումները, Կազմակերպությունները և դպրոցները) պետք է ստեղծեն կազմակերպչական կառուցվածք աղետների դեմ պատրաստվածության և միմյանց հետ համագործակցության համար՝ գիտակցելով հետևյալ գաղափարը՝ «Դու պետք է լինես պատասխանատու քո համայնքը պաշտպանելու համար»: ԹՄ, ինչպես նաև ԹՄ առանձին անդամների շրջանում աղետների կառավարման ուղղությամբ իրազեկվածության մակարդակը և հնարավորությունները բարձրացնելու համար բոլոր անդամները պետք է իրականացնեն մեղմացման և երկրաշարժերի դեմ պատրաստվածության գործողություններ, որոնք նշված են աղյուսակ 33-ում: Գործողությունների մանրամասն նկարագիրը/բացատրությունը տրված է գլուխներ 52-54 հետևանքների մեղմացման և բաժին 11-ում պատրաստվածության համար:

Աղյուսակ 33 ԹՄ կողմից իրականացվելի գործողությունները մեղմացման և պատրաստվածության ուղղությամբ

Մեղմացում	<ol style="list-style-type: none"> 1. Աղետների կառավարման համար ինքնուրույն խմբերի ստեղծում և ուժեղացում 2. Յուրաքանչյուր ԹՄ համար աղետների կառավարման պլանի մշակում 3. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման խթանում (վերազինում և վերականգնում) 4. Կանխարգելիչ միջոցառումների խթանում, կահույքի շրջվելու, պատուհանի ապակու թափվելու կանխում և այլն 5. Աղետների կրթության նյութերի պատրաստում և աղետների կառավարման վերաբերյալ կրթության խթանում
Պատրաստվածություն	<ol style="list-style-type: none"> 6. Հրդեհային պաշտպանություն և վտանգավոր նյութերից ապահովություն 7. Ջրի, սննդի, առաջին անհրաժեշտության պարագաների պահեստավորում, ինչպես նաև աղետների հետևանքների վերացման համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների պահեստավորում/պահպանում և պարբերաբար ստուգում 8. ԹՄ անդամների (բնակիչներ, աշխատողներ, ուսուցիչներ, ուսանողներ), օգնության կարիք ունեցող մարդկանց և աղետների կառավարմամբ զբաղվող պատասխանատուների ցուցակների պատրաստում 9. Աղետների կառավարման քարտեզի ստեղծում, օգնություն տրամադրելու վայրերի նախապատրաստում և ծանուցում, օրինակ՝ տարահանման հավաքակետեր 10. Թաղային միավորի անդամների և բնակիչների պաշտպանության/ օգնության նախապատրաստում 11. Արձագանքման հնարավորության բարելավում և աղետների վերաբերյալ կազմակերպվող վարժանքների և սեմինարների միջոցով խորհրդատվության տրամադրում, թե ինչ անել երկրաշարժի ժամանակ

Գլուխ 57. Թաղային միավորներում բնակիչների միավորումների դերը

Քանի որ շատ բնակիչներ ապրում են Երևանի կենտրոնի բազմաբնակարան շենքերում, խորհուրդ է տրվում, որպեսզի նաև 1 շենքում կամ մուտքում ապրող բնակիչները ինքնուրույն ստեղծեն մի խումբ աղետների կառավարմամբ զբաղվելու համար: Խումբը կստեղծի կազմակերպչական կառուցվածք անդամների միջև համագործակցության համար և կիրականացնի աղյուսակ 33-ում նշված գործողությունները:

Գլուխ 58. Կազմակերպությունների դերը

Հասարակությունում կազմակերպությունները, որպես տեղական հասարակության անդամ, պետք է կատարեն որոշակի դեր աղետների կառավարման ուղղությամբ: Կազմակերպությունների դերը կայանում է նրանում, որ նրանք պետք է ապահովեն շենքերի, աշխատողների/այցելուների անվտանգությունը, պահպանեն տնտեսական գործողությունները և նպաստեն տեղական հասարակությանը: Կազմակերպությունները պետք է ինքնուրույն իրականացնեն աղյուսակ 33-ում նշված գործողությունները հիմնականում իրենց հաշվին:

Գլուխ 59. Դպրոցների դերը

Պարտադիր է պարբերաբար իրականացնել աղետների կառավարման գործողություններ դպրոցներում աղետի ժամանակ աշակերտների անվտանգությունը ապահովելու համար: Մասնավորապես արդյունավետ է երիտասարդ սերնդին տրամադրվող աղետների կրթությունը և ընդհանրապես, դպրոցներում աղետների կրթության խթանումը շատ կարևոր է: Դպրոցները պետք է իրականացնեն աղյուսակ 33-ում նշված գործողությունները՝ նպատակ ունենալով զարգացնել աղետների կառավարման վերաբերյալ գործնական հմտությունները:

Գլուխ 60. Աղետների կառավարման համար ինքնուրույն խմբերի ստեղծում և ուժեղացում

1. Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր ԹՄ կամ համատիրությունում ստեղծել ինքնուրույն խմբեր աղետների կառավարման համար: Այդ խմբերի ներսում պետք է ստեղծվեն ենթախմբեր, որոնց միջև պետք է բաշխվեն կարևոր խնդիրները, ինչպիսիք են՝ հրդեհաշիջումը, փրկարարական գործը, առաջին բուժօգնությունը, տեղեկատվության փոխանցումը, աղետների կրթությունը, առօրյա կյանքին նպաստելը, սանիտարական պայմանները, խոցելի մարդկանց օժանդակելը, ապահովության ստուգումը, անվտանգությունը, հարմարությունների վերանորոգումը: Քանի որ անհրաժեշտ է բաշխել գործողությունները ԱԻ արձագանքումը սահուն իրականացնելու համար, յուրաքանչյուր ենթախմբի համար պետք է սահմանվեն ամենօրյա իրականացվելիք գործողությունները: Ամենօրյա գործողությունների միջոցով քաղված դասերի հիման վրա սահմանված գործողությունները պետք է վերանայվեն և թարմացվեն, իսկ կազմակերպչական կառուցվածքը պետք է հարմարեցվի տվյալ տարածքում տիրող իրավիճակին:

2. Յուրաքանչյուր կարևոր կազմակերպությունում (ինչպես օրինակ՝ խոշոր կամ այնպիսի կազմակերպություն/ձեռնարկություն, որտեղ միաժամանակ շատ մարդիկ են հավաքվում) ստեղծվել է ԱԻ արձագանքող խմբեր և նշանակվել է պատասխանատու անձնակազմ:

Ուսուցումների և դասախոսությունների կազմակերպման միջոցով այդ խումբը պետք է խթանի անձնակազմի գիտելիքների և հմտությունների տարածմանը աղետների կառավարման համար: Կանխատեսելի է, որ աղյուսակ 39-ում բերված վտանգավոր կամ հրդեհավտանգ նյութեր պարունակող կազմակերպությունների հարակից տարածքները լրջորեն կտուժեն աղետի/պատահարի դեպքում: Հետևաբար, կազմակերպությունները պետք է բարձրացնեն աղետների կառավարման հնարավորությունները, օրինակ՝ կատարելագործեն գիտելիքներն ու հմտություններն անվտանգության ոլորտում, բարելավեն սարքավորումներն ու միջոցները աղետների կառավարման համար, ամրապնդեն համագործակցությունը տվյալ ձեռնարկության և առնչվող կազմակերպությունների միջև:

3. Յուրաքանչյուր դպրոցում ստեղծվել է տարահանմանը աջակցող խումբ և նշանակվել է պատասխանատու անձնակազմ: Սովորական պայմաններում և արտակարգ իրավիճակներում աղետի կառավարման գործողությունները սահուն իրականացնելու համար անհրաժեշտ է ստեղծել ենթախմբեր, որոնք կունեն խնդիրներ կապված ընդհանուր համակարգման, շինությունների ապահովության ստուգման, աղետների կրթության, տեղեկատվության փոխանցման, ուսուցման, փրկարարական գործի և առաջին բուժօգնության հետ: Խումբը պետք է ստեղծի ներքին կազմակերպչական կառուցվածք կարևոր միջոցառումները իրականացնելու համար, ինչպիսիք են կապը ծնողների հետ, աշակերտների անվտանգությունն ապահովող միջոցառումները, դպրոցի և աշակերտների տների միջև ընկած ճանապարհի անվտանգության ապահովումը:

Գլուխ 61. Յուրաքանչյուր Թաղային միավորի համար աղետների կառավարման պլանի մշակումը

Յուրաքանչյուր ԹՄ պետք է մշակի աղետների կառավարման իր սեփական պլանը՝ ենթադրելով կոնկրետ իրավիճակ յուրաքանչյուր թաղում՝ նպատակ ունենալով ամրապնդել աղետների կառավարման վերաբերյալ իրենց հմտությունները: Պլանում պետք է հստակեցվեն կազմակերպչական կառուցվածքը և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները՝ պլանում նշված միջոցառումների շարունակական իրականացումը ապահովելու համար:

Գլուխ 62. Աղետների կառավարման պլանի մշակում բնակիչների յուրաքանչյուր միավորման համար

ԹՄ բնակիչների միավորումները պետք է պատրաստեն աղետների կառավարման սեփական պլանը: Միավորները պարբերաբար վերանայում և թարմացնում են պլանը՝ ելնելով տեղեկատվությունից և իրենց գործողությունների շնորհիվ քաղված դասերից, օրինակ՝ ուսուցումը: Պլանում նշվող բովանդակությունը բերված է աղյուսակ 34-ում:

Աղյուսակ 34 Բնակիչների Թաղային միավորների համար աղետների կառավարման պլանում նշվող բովանդակությունը

- | |
|---|
| <ol style="list-style-type: none">1. Պլանի նպատակը2. Հիմնական գաղափարը3. Ընդհանուր ակնարկ միավորների վերաբերյալ (բնակչությունը, շենքերի թիվը, շենքերի |
|---|

- կառուցվածքը, հարակից տարածքներում հողօգտագործումը և այլն)
4. Վնասի հաշվարկման արդյունքը
 5. Ներքին կազմակերպչական կառուցվածք և ներքին կազմակերպությունների խնդիրները
 6. Աղետների կառավարման համար նախապատրաստվող սարքավորումների/նյութերի ցուցակը և պահեստի վայրը
 7. Աղետների կառավարման քարտեզը, ներառյալ՝ տարահանման վայրերի ցուցակը, Թաղային միավորին բնորոշ ռիսկերը, աղետների կառավարման միջոցները
 8. Շենքերի բնութագիրը, աղետների կառավարման վերաբերյալ հարցերը և տարահանման երթուղին
 9. ԹՄ անդամների նախապատրաստվելը աղետների կառավարմանը
 10. Գործողությունների պլանը և ֆինանսական պլանը
 11. Աղետների կառավարման հետ առնչվող տեղական կազմակերպությունների կոնտակտային հասցեները

Գլուխ 63. Յուրաքանչյուր կազմակերպության համար աղետների կառավարման պլանի մշակում

Յուրաքանչյուր կազմակերպությունում պետք է իր համար պատրաստի աղետների կառավարման պլան, որը պետք է ներառի աղյուսակ 35-ում նշված բովանդակությունը՝ անկախ իր հիմնական գործունեության տեսակից և ծավալներից: Բացի այդ, Կազմակերպությունները պետք է պատրաստեն ձեռնարկ վերականգնման/ վերակառուցման համար:

Աղյուսակ 35 Կազմակերպությունների աղետների կառավարման պլանում նշվող բովանդակությունը

1. Պլանի նպատակը
2. Ընկերության ընդհանուր ակնարկը
3. Աշխատանքների շարունակականության վերաբերյալ հիմնական գաղափարը
4. Պատասխանատու անձնակազմը և նրանց խնդիրները աշխատանքների շարունակականության պլանի վերաբերյալ (ԱՇՊ)
5. Վնասի հաշվարկման արդյունքը
6. Աշխատանքների հիմնական կետերը և վերականգնման համար սահմանված ժամանակը
7. Գործողությունների պլան և ֆինանսական պլան աշխատանքների շարունակականությունը ապահովող միջոցառումների համար
8. Կրթության և ԱՇՊ ծանոթացման համար կազմակերպվող ուսուցման պլանը
9. Աղետի կանխատեսելի իրավիճակի դեմ ձեռնարկվող անհապաղ միջոցառումները
10. Շրջական տեղական համայնքների խթանման պլան

Գլուխ 64. Յուրաքանչյուր դպրոցի համար աղետների կառավարման պլանի մշակում

Յուրաքանչյուր դպրոց պետք է իր համար պատրաստի աղետների կառավարման պլան աշակերտների և ուսուցիչների անվտանգության ապահովման համար և ապա պատշաճ

իրականացնի նախապատրաստական գործողություններ: Պլանը պետք է ներառի աղյուսակ 36-ում նշված բովանդակությունը:

Աղյուսակ 36 Դպրոցների աղետների կառավարման պլանում նշվող բովանդակությունը

1. Պլանի նպատակը
2. Կազմակերպչական կառուցվածքը դպրոցում սովորական և արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև գործառույթների բաշխում
3. Միջոցառումներ սեյսմակայունության բարձրացման և շենքերի ու սարքավորումների անվտանգության ուղղությամբ
4. Սարքավորումների և նյութերի ստուգման թերթիկների օրինակելի ձևեր
5. ԱՌ արձագանքման պլան ըստ ժամանակագրական հերթականության (ներառյալ՝ վիրավորների անվտանգության հաստատման և գրանցման ձևեր)
6. Ձեռնարկ աշակերտների ծնողներին և բարեկամներին փոխանցելու համար
7. Դպրոցի գործունեության արագ վերսկսման պլան և ֆինանսական պլան
8. Դրսից ստացվող հարցումներին արձագանքման պլան
9. Դպրոցում տարահանման կետի բացման պլան (որոշված դպրոցների համար)

Գլուխ 65. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման խթանում

Սեյսմիկ աղետի կառավարման գործում ամենակարևոր միջոցառումներից մեկը շենքերի սեյսմակայունության բարձրացումն է: Թաղային միավորները պետք է իրականացնեն հետևյալ գործողություններն ու միջոցառումները:

1. Բնակիչների խմբերի կողմից պետք է իրականացվի ԹՄ շենքերի սեյսմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունների խթանում:

1) ԹՄ բնակիչների խմբերը պետք է իրականացնեն ԹՄ շենքերի սեյսմիկ զննում շենքերի սեյսմակայունությունը պարզելու համար: Համաձայն արդյունքների անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվեն սեյսմակայունության բարձրացման (վերազինում, նոր շինարարություն և այլն) միջոցառումներ: ԹՄ շենքերի սեյսմիկ ամրացումը խթանելու համար բնակիչների խմբերը պետք է ստեղծեն համաձայնության մթնոլորտ բնակիչների միջև, հավաքեն դրամ, փնտրեն պաշտոնական ֆինանսական օգնություն, իրականացնեն այլ գրասենյակային ընթացակարգեր և այլն:

2) Կազմակերպություններում պետք է իրականացվի շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման խթանում: Եթե շենքերն ու շինությունները լրջորեն տուժեն երկրաշարժի վնասից, ապա Կազմակերպություններում գտնվող անձնակազմը և այցելուները վտանգված կլինեն և դժվար կլինի Կազմակերպություններին շարունակել աշխատանքները կամ իրականացնել տեղական հասարակությանը օգնություն ցուցաբերելու գործառույթները: Բացի դրանից, վտանգավոր և հրդեհավտանգ նյութեր պարունակող հաստատությունների վնասվելու դեպքում կարող են տեղի ունենալ երկրորդային լուրջ աղետներ, օրինակ՝ հրդեհի բռնկում կամ պայթյուն: Այդ ռիսկերը նվազեցնելու համար Կազմակերպությունները պետք է սեփական պատասխանատվությամբ խթանեն շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացմանը:

3) Դպրոցներում պետք է լրջորեն իրականացվեն շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման խթանում: Աշակերտների և ուսուցիչների անվտանգությունը

ապահովելու համար շատ կարևոր է ամրացնել դպրոցական շենքերն ու շինությունները: Այդ իսկ պատճառով դպրոցների սեյսմակայունության բարձրացումը հանդիսանում է ամենակարևոր հարցը և պետք է արվի անմիջապես քաղաքապետարանի և պետական կառավարման մարմինների ղեկավարմամբ:

Գլուխ 66. Կանխարգելիչ միջոցառումների խթանում, կահույքի շրջվելու, պատուհանի ապակու թափվելու և այլնի կանխում

1. ԹՄ բնակիչների խմբերի կողմից պետք է իրականացվեմն պահարանների շրջվելը, պատուհանի ապակու թափվելը կանխող միջոցառումներ: ԹՄ բնակիչների միավորումները պետք է նպաստեն շենքերի բնակարանների ունեցվածքի, մասնավորապես կահույքի և պատուհանի ապակիների վնասվելու կանխարգելմանը, որը պետք է արվի բնակիչների կողմից սեմինարների կազմակերպման և կրթական նյութերի բաշխման միջոցով: Այն տարածքներում, որտեղ այդ միավորումները կատարում են աղետների կառավարման գործառույթներ, կանխարգելման միջոցառումները իրականացվում են տվյալ միավորումների պատասխանատվությամբ:

2) Կազմակերպությունները պետք է ձեռնարկեն միջոցառումներ պահարանների շրջվելը, պատուհանի ապակու թափվելը և այլնը կանխելու համար իրենց գործառույթներն ու խնդիրները կատարելու համար, որոնք են՝ անձնակազմին հասցված վնասի նվազեցումը, աշխատանքների շարունակականության ապահովումը, տեղական ԹՄ և համատիրություններին ցուցաբերվող աջակցությունը և այլն: Քանի որ վտանգավոր նյութերով պահեստավորված պահարանների և կոնտեյներների շրջվելը հանգեցնում են երկրորդային լուրջ աղետների, ինչպես օրինակ՝ հրդեհը կամ պայթյունը, պետք է ձեռնարկվեն բավարար քանակության կանխարգելիչ միջոցառումներ:

3) Դպրոցները պետք է ձեռնարկեն միջոցառումներ, օրինակ՝ պահարանների ամրացումը, պլաստիկ երիզների փակցումը պատուհանի ապակու վրա, որը հնարավորություն կտա խուսափել կոտրված մասերի տարբեր տեղեր թափվելուց, լաբորատորիայում օգտագործվող վտանգավոր նյութերի ապահով պահեստավորումը, սարքավորումների և կրթական նյութերի շրջվելու դեմ պաշտպանիչ հարմարանքների տեղադրում և այլն:

Գլուխ 67. Աղետների կրթության նյութերի պատրաստում և աղետների կառավարման կրթության խթանում

Աղետների կրթության նյութերը պետք է պատրաստվեն հիմնականում ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի և ՓԾ կողմից (տես գլուխ 73): ԹՄ պետք է ակտիվ մասնակցություն ունենա պատրաստման աշխատանքներում և տրամադրեն աղետների վերաբերյալ գիտելիքներ ԹՄ անդամներին՝ օգտագործելով պատրաստված կրթական նյութերը աղյուսակ 37-ում նշված նպատակի համար:

Աղյուսակ 37 ԹՄ և համատիրություններում աղետների կրթության նպատակը

- | |
|---|
| <ol style="list-style-type: none">1. Սեյսմիկ աղետի հիմնական կետերի ընկալում և աղետի կառավարում2. Աղետների կառավարման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում3. Պատշաճ որոշումներ կայացնելու և սեյսմիկ աղետների դեմ գործողություններ իրականացնելու ունակության զարգացում |
|---|

4. Այլ տուժած տարածքներին օգնություն ցուցաբերելու ունակության զարգացում

1. Առաջարկվում է ստեղծել մի համակարգ, որով ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան տրամադրի աղետների կառավարման կրթություն ԹՄ և համատիրությունների բնակիչների միավորումների ղեկավարներին, իսկ հետո կրթությունն անցած ղեկավարները կարող են տրամադրել նմանատիպ կրթություն Թաղային միավորի անդամներին աղետների կառավարման վերաբերյալ գիտելիքի տարածման նպատակով: Բացի այդ, մասնագիտացված գիտելիքը պետք է տրամադրվի հրավիրված մասնագետների կողմից: Աղետների կառավարման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները, օրինակ՝ հեռուստածրագրերը, ինտերնետային կայքերը, թերթերը և այլն, նույնպես պետք է օգտագործվեն կրթության մեջ

2. ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան պետք է պարբերաբար տրամադրի աղետների կրթություն վտանգավոր և հրդեհավտանգ նյութեր պարունակող Կազմակերպություններում աղետների կառավարմամբ զբաղվող անձնակազմին: Կազմակերպություններում կրթություն անցած անձնակազմը պետք է տրամադրի աղետների վերաբերյալ կրթությունը անձնակազմի բոլոր անդամներին: Կրթությունը պետք է ներառի թեմաներ, որոնք թույլ կտան ձեռք բերել հատուկ գիտելիք վտանգավոր/հրդեհավտանգ նյութեր, սարքավորումներ և այլն օգտագործվող Կազմակերպություններում աղետների կառավարման վերաբերյալ:

3. Դպրոցներում պետք է ստեղծվի կազմակերպչական կառուցվածք աղետների կրթությունը խթանելու համար, որում պետք է նախատեսվի աղետների կրթությամբ զբաղվող ենթախումբ (տես գլուխ 59-ում): Աղետների կրթությամբ զբաղվող ենթախումբը, համագործակցելով առնչվող կազմակերպությունների հետ, պետք է պատրաստի աղետների կրթության տարեկան պլան, որում կներառվի կրթությանը վերաբերող բոլոր հիմնահարցերը՝ հաշվի առնելով աշակերտների տարիքը, կոնկրետ տարածքի իրավիճակի բնութագիրը: Գոյություն ունի աղետների կրթության պարտադիր ծրագիր. շաբաթական մեկ դասաժամ բարձր դասարանների աշակերտների համար: Աղետների վերաբերյալ կրթությունը պետք է բարելավվի դասարաններում: ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից պատրաստված կրթական նյութերը պետք է լինեն ցայտուն, տպավորիչ և հնարավոր լինի դրանք սովորել անելով (տես բաժին 6):

Գլուխ 68. Հրդեհի բռնկման կանխում

Կազմակերպությունները պետք է ձեռնարկեն միջոցառումներ հրդեհի բռնկումը կանխելու համար, օրինակ՝ վարչական շենքերի սեյսմակայունության բարձրացում, նոր հրդեհավտանգ սարքավորումների ներդնում, հրդեհաշիջման համար միջոցների ու նյութեր նախապատրաստում և դրանց սարքին լինելու պարբերական ստուգում, (տես աղյուսակ 38): Կանխարգելման մեջ ներգրավված անձնակազմի գիտելիքների ու իրազեկվածությունը բարձրացում՝ տեսական և գործնական վարժանքների անցկացման միջոցով:

Աղյուսակ 38 Համայնքների կողմից պատրաստվող նյութեր

Անհատական պաշտպանության համար
1. Ջերմակայուն սաղավարտ դիմակով

2. Պաշտպանիչ հագուստ և կոշիկ հանդերձանք 3. Դյուրակիր լապտեր 4. Ազդարարման և ազդանշանների փոխանց,ամ միջոցներ
Կոլեկտիվ պաշտպանության համար 5. Հակահրդեհային տեխ. միջոցներ և գույք 6. Ապամոնտաժման գործիքներ 7. Բարձրախոսներ 8. Վթարավերականգնողական գործիքներ և միջոցներ 9. կապի միջոցներ 10. դիմակներ

1. Կազմակերպությունները, որոնք իրենց գործունեության մեջ օգտագործում են հրդեհավտանգ նյութեր կամ սարքավորումներ, պետք է ձեռնարկեն անվտանգության միջոցառումներ, օրինակ՝ կրակով աշխատող սարքավորումների/սարքերի ամրացում, սարքավորումների/սարքերի շուրջը անհրաժեշտ ազատ տարածքի ապահովում, սարքավորումներին/սարքերին ավտոմատ կրակմարիչների կցում և այլն: Սարքավորումների և սարքերի պատշաճ աշխատելը ապահովելու համար Թաղային միավորները պետք է պահպանեն և ստուգեն դրանք:

2. Կազմակերպությունները, որոնք իրենց գործունեության մեջ օգտագործում կամ պահեստավորում են հրդեհավտանգ նյութեր, օրինակ՝ բենզին, պետք է ձեռնարկեն միջոցառումներ շինությունների/սարքավորումների սեյսմակայունության բարձրացման և հրդեհի կանխարգելման ուղղությամբ:

3. Կազմակերպությունները, որոնց գործունեությունը առնչվում է գազին պետք է ձեռնարկեն միջոցառումներ գազից առաջացած հրդեհը կանխարգելելու համար, օրինակ՝ գազի արտահոսքի դեպքում տագնապային համակարգի, վթարային անջատման սարքերի տեղադրում և այլն: Պետք է ձեռնարկվեն լրացուցիչ միջոցառումներ գազի արտահոսքից առաջացած հրդեհը կանխարգելելու համար, օրինակ՝ գազի կոնտեյներների ու խողովակների ամրացում և այլն:

4. Պայթյունավտանգ նյութեր պահեստավորող կամ օգտագործող կազմակերպությունները պետք է խիստ պահպանեն անվտանգության կանոնները, ներառելով պահեստավորման հատուկ պահանջների պահպանումը և դրանց պարբերաբար ստուգումը:

5. Քիմիական վտանգավոր նյութեր օգտագործող արտադրանքներում և էլեկտրական սարքերից առաջացած հրդեհի կանխարգելելու համար անհրաժեշտ է

1) Քիմիական նյութերից առաջացող հրդեհի կանխարգելման նպատակով Քիմիական նյութեր օգտագործող հանրակրթական և գիտական հաստատությունները, հիվանդանոցները, պետք է նախապես գնահատեն ԱԻ դեպքում քիմիական նյութերի խառնվելու ռիսկը և ձեռնարկեն միջոցառումներ այդ կանխելու ուղղությամբ.:

2) Էլեկտրական սարքերից առաջացած հրդեհի կանխարգելման նպատակով Էլեկտրականություն մատակարարող Կազմակերպությունները պետք է հետևեն կանոնակարգին՝ Էլեկտրական սարքերի, օրինակ՝ էլեկտրական հոսանքի արտադրման, փոխանցման և բաշխման սարքերի բռնկումը կանխելու համար: Սարքերը պետք է ստուգվեն և պահպանվեն փորձառու մասնագետների կողմից: Բացի այդ, Կազմակերպությունները պետք է նպաստեն սեյսմակայուն և հակահրդեհային սարքերի տեղադրմանը:

3) Էլեկտրական սարքերից առաջացած հրդեհի կանխարգելելու նպատակով Կազմակերպությունները պետք է լայնորեն կիրառեն երկրաշարժի ժամանակ էլեկտրական սարքերի և լարերի ապահով ինքնուրույն անջատման սարքերը:

Գլուխ 69. Բազմամարդ վայրերում հրդեհի կանխարգելում

Բազմամարդ օբյեկտների, օրինակ՝ ռեստորանների, առևտրի կենտրոնների և հիվանդանոցների ղեկավարները պետք է աշխատողների համար պատրաստեն հրդեհի դեպքում արագ արձագանքման վերաբերյալ ձեռնարկներ: Ղեկավարները պետք է ձեռնարկեն հրդեհի կանխարգելման միջոցառումներ, օրինակ՝ կրակով աշխատող սարքավորումների և սարքերի շրջվելու կանխման անհրաժեշտ միջոցների կիրառումը:

Գլուխ 70. Անվտանգության միջոցառումներ՝ կապված վտանգավոր նյութերի հետ

Այն օբյեկտներում, որոնք պահեստավորում, տեղափոխում կամ օգտագործում են վտանգավոր նյութեր, պահեստավորման ցիստեռների, խողովակաշարերի, բաշխիչ սարքերի վնասվելը կանխատեսելի է: Վնասվելու հետևանքով կարող է տեղի ունենալ ՈՒՆԹՆ արտահոսք//տարածում, որն, ամենայն հավանականությամբ, կունենա լուրջ ազդեցություն շատ տարածքներում: Վտանգավոր նյութերով զբաղվող Կազմակերպությունները պետք է պարտադիր կիրառեն իրենց շինությունների և սարքավորումների սեյսմակայունության և ապահովության բարձրացման միջոցառումներ:

Գլուխ 71. Վտանգավոր նյութեր, որոնց ուղղությամբ պետք է ձեռնարկվեն հատուկ անվտանգության միջոցառումներ

Վտանգավոր նյութերը, որոնց պահեստավորման և փոխադրման օբյեկտներում երկրաշարժի ժամանակ պետք է ձեռնարկվեն անվտանգության հատուկ միջոցառումներ, բերված են աղյուսակ 39-ում:

Աղյուսակ 39 Վտանգավոր նյութեր, որոնց ուղղությամբ պետք է ձեռնարկվեն անվտանգության միջոցառումներ

1. Վնասակար քիմիական նյութեր (ամոնիակ, քլոր և այլն)
2. Վնասակար կենսաբանական նյութ (մանրէներ, վարակի հարուցիչ, վիրուս և այլն)
3. Ռադիոակտիվ նյութեր (կոբալտ, ստրոնցիում, ցեզիում և այլն)
4. Նավթ և նավթամթերքներ
5. Պայթյունավտանգ նյութեր
6. Բարձր ճնշման գազ, պայթյունավտանգ գազ և այլն
7. այլ ՈՒՆԹՆ
8. Վտանգավոր նյութեր տեղափոխման հարմարանքներ
9. Վտանգավոր և թունավոր կենդանիներ և բույսեր

Գլուխ 72. Անվտանգության կանոնների հսկողությունը վտանգավոր նյութեր օգտագործող Կազմակերպություններում

Արտակարգ իրավիճակների նախարարությունը վերահսկում է վտանգավոր նյութերով զբաղվող Կազմակերպությունների աղետների կառավարման հարցերը: ԱԻՆ հրահանգների և ցուցումների ներքո Կազմակերպությունները պետք է մշակեն ապահովության կառավարման պլան և ձեռնարկեն միջոցառումներ վտանգավոր նյութերի ուղղությամբ: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պետք է կիրառի լիցենզավորման և հետագա գործունեության վերահսկման խիստ վերահսկողություն:

Գլուխ 73. Վտանգավոր օբյեկտների ապահովության միջոցառումներ

Վտանգավոր նյութերով զբաղվող Կազմակերպությունները պետք է ձեռնարկեն անվտանգության հետևյալ միջոցառումները՝

1) Կազմակերպությունները պետք է մշակեն անվտանգության կանոններ և աղետների կառավարման պլան՝ համաձայն կանոնակարգերի և ստանդարտների՝ ԱԻՆ հաստատման ներկայացնելու համար: Պլանը պետք է բխի տուժած տարածքի հաշվարկից և բնակչության վրա ունեցած ազդեցությունից:

2) Պատահարի ժամանակ վնասի հրատապ հետազոտման, հաղորդակցության և արձագանքման կազմակերպումը պետք է հստակեցվի նախապես:

3) պետական մարմինների կողմից պետք է իրականացվի ստուգումներ անվտանգության միջոցառումների, կանոնակարգերին և պլանին համապատասխան պատշաճ իրականացումը համար:

3) Նոր օբյեկտների համար պետք է կատարվի շինարարության պահանջների կատարման և անվտանգության միջոցառումների պարտադիր ստուգում: Պետք է կատարվի գոյություն ունեցող օբյեկտների սեյսմիկ զննում սեյսմակայունությունը ճշտելու համար, և պետք է ձեռնարկվեն սեյսմակայունության բարձրացման համար անհրաժեշտ միջոցառումներ՝ համաձայն զննման արդյունքի:

4) Համաձայն աղետների կառավարման պլանի՝ պետք է կազմակերպվեն ուսուցում և սեմինարներ պատրաստվածության արդյունավետությունը ստուգելու, անվտանգության տեխնիկան սովորելու, անվտանգության ստուգման ճիշտ եղանակը հստակեցնելու, աղետների արձագանքման հմտություններ ձեռք բերելու համար: Պլանը պետք է թարմացվի ուսուցման ընթացքում քաղված դասերի հիման վրա:

Գլուխ 74. Անվտանգության միջոցառումներ վտանգավոր նյութերի փոխադրման ուղղությամբ

Վտանգավոր նյութերի փոխադրմամբ զբաղվող Կազմակերպությունները պետք է իրականացնեն իրենց աշխատանքը՝ համաձայն կանոնակարգի և ստանդարտների: Փոխադրման ժամանակ երկրաշարժի հետևանքով ստացված վնասը նվազագույնի հասցնելու, ինչպես նաև աղետների արձագանքման համար անհրաժեշտ վտանգավոր նյութերի փոխադրման ընթացքում անվտանգությունը ապահովելու համար Կազմակերպությունները

պետք է ձեռնարկվեն անվտանգության ստորև նշված միջոցառումները՝ ՀՀ ԱԻՆ, ՀՀ Ոստիկանության, ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության ցուցումների և վերահսկման ներքո՝

1) Սովորական պայմաններում և արտակարգ իրավիճակներում սահուն և պատշաճ կառավարման համար Կազմակերպությունները պետք է ամրապնդեն առնչվող կազմակերպությունների հետ փոխհամագործակցության և տեղեկատվության փոխանակման համակարգը:

2) Կազմակերպությունները պետք է պատրաստեն ապահով գործունեության պլան: Բացի դրանից, Կազմակերպությունները պետք է պատրաստեն ձեռնարկներ փոխադրման ժամանակ աղետների արձագանքման նպատակով կարևոր տեղեկատվություն տրամադրելու համար, ինչպես օրինակ՝ վտանգավոր նյութերի փոխադրման յուրահատկությունները, մարդկանց համար թունավոր լինելու աստիճանը, աղետների արձագանքման մեթոդը, հրդեհի մարման մեթոդը, առնչվող կազմակերպությունների հետ հաղորդակցության եղանակը, մեքենաների վերանորոգման մեթոդը:

3) Կազմակերպությունները պետք է աշխատողներին՝ հատկապես վարորդներին տան ուսուցում և կրթություն պլանի և ձեռնարկների բովանդակությունը հասկանալու, ինչպես նաև իրազեկվածությունը բարձրացնելու և աղետների արձագանքման հմտությունները զարգացնելու համար:

4) Կազմակերպությունները պետք է պատրաստեն փոխադրման պլան ամեն մի առաքման համար, որում կնշվի անվտանգության սարքերի և միջոցների և դրանցով համալրված մեքենաների և այլնի նկարագիրը: Վարորդներն ու օպերատորները պետք է լավ տեղեկացված լինեն փոխադրման պլանի բովանդակության մասին փոխադրման անվտանգությունն ապահովելու համար:

5) Վտանգավոր նյութեր արտադրողները, մատակարարողները և փոխադրողները պետք է ստեղծեն անվտանգության միասնական հանձնաժողով և նպաստեն փոխադրման ժամանակ աղետների արձագանքման ինքնուրույն գործողություններին:

Գլուխ 75. Միջոցառումներ աղետի ժամանակ խոցելի մարդկանց օգնություն ցուցաբերելու ուղղությամբ

Աղետի ժամանակ օգնության կարիք ունեցող խոցելի մարդկանց շարքին են դասվում սոցիալական հաստատությունների (օրինակ՝ որբանոց, ծերանոց) բնակիչները, հիվանդանոցների այցելուներ/հիվանդներ, մշտական բուժօգնության կարիք ունեցող մարդիկ, հաշմանդամները, տարիքով մարդիկ, հղիները, փոքր երեխաները, օտարերկրացիները և ճանապարհորդները: Խոցելի մարդիկ դժվարանում են աղետներից հետո արագ տարահանվել, ինչպես նաև գոյատևել: Խոցելի մարդկանց և նրանց ընտանիքի անհոգ ապրելու համար պետք է ձեռնարկվեն հետևյալ միջոցառումները:

Գլուխ 76. Խոցելի մարդկանց, ծերանոցների, կացարանների, հիվանդների և հատուկ խնամք պահանջող մարդկանց աջակցության ցուցաբերում

Նշված մարդկանց խմբի համար, բացառությամբ օտարերկրյա քաղաքացիներին և ճամփորդներին, բաժանվում են ըստ ծառայություններ մատուցող սուբյեկտների՝ ծերանոցների և բնակիչների կողմից իրականացվող միջոցառումների՝

1. Ծերանոցների Սոցիալական հաստատություններում անվտանգության միջոցառումների խթանում՝

1) Պահարանների շրջվելու, սարքավորումների ընկնելու և այլնի կանխման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում

2) Ղեկավարների կողմից մշտական վերահսկում անվտանգության միջոցառումների կիրառումը ապահովելու համար

2. Աղետների արձագանքման համակարգի արագ ստեղծում, մասնավորապես՝

1) Աղետների արձագանքման ձեռնարկի մշակում և դրա տարածումը անձնակազմի անդամների միջև բովանդակությանը լավ ծանոթանալու համար

2) Անձնակազմի անդամներին պարբերաբար տրամադրվող ուսուցում և կրթություն աղետների կառավարման վերաբերյալ

3) Աղետների կառավարման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների պահեստի ընդլայնում

3. Տեղական հասարակության հետ համագործակցության ամրապնդումը ներառում է՝

1) Հարևան ԹՄ կամ Համատիրության հետ համաձայնության ձեռքբերում աղետի ժամանակ խոցելի մարդկանց օգնություն ցուցաբերելու վերաբերյալ

2) Խոցելի մարդկանց քաղաքի այլ համայնքներից կամ մասերից օգնության տրամադրման համակարգի մշակում

3. Բնակիչների դերը հետևյալն է՝

1) Մասնակցություն խոցելի մարդկանց հետ կապված միջոցառումների իրականացմանը ՀՀ ԱԻՆ օժանդակության և ղեկավարման ներքո.

2) Մշտական կապ խոցելի մարդկանց հետ իրենց տներում, որպեսզի նրանք կարողանան ջանք գործադրել տարահանվելու իրենց ունակությունների բարձրացման ուղղությամբ:

5. Խոցելի մարդկանց օգնություն ցուցաբերելու համար ակտիվ միջոցառումներն են՝

1) Ընտանիքում և ԹՄ խոցելի մարդկանց աղետից պաշտպանելու գործողությունների խթանում.

2) ԹՄ և Համատիրությունների բնակիչների միավորումները, ՀՀ ԱԻՆ հովանու ներքո, պետք է օգնեն բնակիչներին գիտակցել, որ կարող են ինքնուրույն կառավարել աղետները “խոցելի մարդկանց աղետից պաշտպանելու” տեսանկյունից՝ օգտագործելով տարբեր հնարավորություններ, օրինակ՝ խոցելի մարդկանց օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հայտարարությունները, ուղեցույցները և այլն: Բնակիչների միավորումները պետք է նպաստեն

աղետի ժամանակ խոցելի մարդկանց անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներին:

3) ԹՄ/Համատիրությունների բնակիչների միավորումներում ստեղծված ենթախմբերը, որոնք զբաղվում են խոցելի մարդկանց օգնության ցուցաբերման հարցերով պետք է նպաստեն անդամների գործողություններին, ինչպիսին է խոցելի մարդկանց հետ մշտական կապը՝ նրանց աղետից պաշտպանելու համար:

ա. Աղետի ժամանակ խոցելի մարդկանց կողմից հրատապ գործողությունների իրականացման եղանակի մասսայականացում, խոցելի մարդկանց օգնության ցուցաբերման հարցերով զբաղվող ենթախումբը պետք է նրանց բաժանի աժամԻՆ կողմից պատրաստվելիք “Աղետների արձագանքման ձեռնարկը խոցելի մարդկանց համար” և մասսայականացնի ԱԻ ժամանակ խոցելի մարդկանց անվտանգության հաստատումն իրականացնելու եղանակը, ինչպես նաև ԱԻ արձագանքման այլ գործողությունները:

բ. Խոցելի մարդկանց ցուցակի պատրաստելու համար բնակիչների միավորումները պետք է պատրաստեն խոցելի մարդկանց ցուցակը աղետի ժամանակ այն օգտագործելու համար և պարբերաբար թարմացնեն:

գ. Սոցիալական հաստատությունները պետք է նախապես կնքեն համաձայնագիր քաղաքապետարանի և պետական կառավարման մարմինների հետ աղետի ժամանակ օգնության ցուցաբերման գործողությունները սահուն կատարելու համար, օրինակ՝ անվտանգության հաստատումը, խոցելի մարդկանց փոխադրումը, բարեկեցության ապահովման համար սարքավորումների տրամադրումը, տարահանված խոցելի բնակչությանը օգնության ցուցաբերումը:

դ. Խոցելի մարդկանց համար տարահանման վայրերում տարածքի ապահովում, քանի որ խոցելի մարդիկ ունեն ապահովության և առողջության հատուկ խնամքի կարիք, անհրաժեշտ է ապահովել տարածք խոցելի մարդկանց համար և օգնականներ ու սարքավորումներ նրանց խնամքի համար.

ե. Սոցիալական հաստատությունները պետք է ՀՀ ԱԻՆ և ՀՀ ԱՆ ղեկավարման և եկավումների ներքո նախապատրաստեն իրենց շինությունները, տարահանման կետեր այն խոցելի մարդկանց համար, ում դժվար է մնալ սովորական տարահանման կետերում:

Գլուխ 77. Օտարերկրացիներին և զբոսաշրջիկներին օժանդակելու միջոցառումները

Աղետի ժամանակ օտարերկրացիներին և զբոսաշրջիկներին օժանդակելու միջոցառումներն՝ ուղղված վերջիններիս անվտանգությանը և կենսապայմանների արագ վերականգնմանը հետևյալն են՝

1. ԹՄ և Համատիրությունների բնակիչների միավորումները պետք է ճանաչեն օտարերկրացիներին, ովքեր բնակվում են իրենց շենքերում, և ծանոթացնեն նրանց ՀՀ ԱԻՆ ինտերնետային կայքում աղետների վերաբերյալ հասանելի տեղեկատվության ու արձագանքման մեթոդներին: Միավորումները պետք է առաջարկեն իրենց անդամներին գրանցվել որպես կամավորներ օտարերկրացիներին օժանդակելու համար:

2. Բնակիչների միավորումները պետք է հուշեն ԹՄ ապրող օտարերկրյա քաղաքացիներին որտեղից կարելի է հայթայթել օտար լեզուներով հասանելի տեղեկատվությունը, ինչպես օրինակ՝ աղետների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները օտար լեզուներով և Հայաստանում օտարերկրյա դեսպանատների հետ կապ հաստատելու եղանակը և անհրաժեշտության դեպքում, տրամադրել այդ տեղեկատվությունը օտարերկրացիներին:

Գլուխ 78. Օժանդակություն ԹՄ և Համայնատիրություններին աղետների դիմակայման պատրաստվածության բարձրացման գործում

1. ԹՄ և Համայնատիրություններին աղետների դիմակայման պատրաստվածության բարձրացման համար անհրաժեշտ է քաղաքապետարանի և պետական կառավարման մարմինների ցուցաբերած օժանդակությունը, որը նշված է աղյուսակ 40-ում:

Աղյուսակ 40 Քաղաքապետարանի և պետական կառավարման մարմինների՝ համայնքներին ցուցաբերած օժանդակությունը

h/h	Գործողություն	Հիմնական օժանդակող մարմին
1	Աղետների կառավարմամբ զբաղվող ինքնուրույն խմբերի ստեղծում և ամրապնդում	ԱԻՆ (ՓԾ) և քաղաքապետարան
2	Աղետի կառավարման պլանի մշակում յուրաքանչյուր ԹՄ համար	ԱԻՆ (ՓԾ), քաղաքապետարան
3	Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման խթանում (վերազինում և թարմացում)	ԱԻՆ և քաղաքապետարան
4	Կահույքի շրջվելը, պատուհանի ապակու թափվելը և նման բաները կանխող միջոցառումների խթանում	ԱԻՆ (ՓԾ) և քաղաքապետարան
5	Աղետների կրթության նյութերի պատրաստում և աղետների կառավարման վերաբերյալ կրթության խթանում	ԱԻՆ պետական ակադեմիա) և քաղաքապետարան
6	Հրդեհային պաշտպանություն և ապահովություն վտանգավոր նյութերի համար	ԱԻՆ և քաղաքապետարան
7	Ջրի, սննդի, առաջին անհրաժեշտության պարագաների պահեստավորում և աղետների հետևանքների վերացման սարքավորումների պահեստավորում/ պահպանում/ մշտական ստուգում	ԱԻՆ
8	ԹՄ անդամների (բնակիչներ, աշխատողներ, ուսուցիչներ/աշակերտներ), օգնության կարիք ունեցող մարդկանց և աղետների կառավարմամբ զբաղվող կազմակերպությունների պատասխանատուների ցուցակների ստեղծում	ԱԻՆ (ՓԾ)
9	Ռիսկերի քարտեզի ստեղծում, օգնության տրամադրման օբյեկտների, օրինակ՝ տարահանման ապաստարանների նախապատրաստում և ծանուցում	ԱԻՆ և քաղաքապետարան
10	ԹՄ անդամների և բնակիչների պաշտպանության / օգնության ցուցաբերման նախապատրաստում	ԱԻՆ և քաղաքապետարան
11	Արձագանքման հնարավորությունների բարելավում և վարժանքների ու սեմինարների միջոցով	ԱԻՆ (ՓԾ), Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա)

խորհրդատվության տրամադրում երկրաշարժի ժամանակ իրականացվելիք գործողությունների վերաբերյալ	և քաղաքապետարան
---	-----------------

Գլուխ 79. ԹՄ և Համայնատիրություններին Քաղաքապետարանի և պետական կառավարման մարմինների օժանդակությանը և հսկողության իրականացումը

1. ԱԻՆ, ՓԾ և ԵՓՎ օժանդակում և վերահսկում են հետևյալ հարցերի կատարումը՝
 - 1) Աղետների կառավարման պլանի ձևի և նմուշի տրամադրում, պետք է բնակիչների միավորումներին, Կազմակերպություններին և դպրոցներին տրամադրվի սեյսմիկ աղետի կառավարման պլանի ձև և նմուշ, որպեսզի նշվածներից յուրաքանչյուրը կարողանա մշակել իր պլանը:
 - 2) Պետք է ստեղծվի աղետների կառավարման ոլորտի մասնագետների ուղարկման համակարգ ԹՄ, Համայնատիրություններ և դպրոցներ աղետների կառավարման պլանի մշակմանը աջակցելու, իրազեկվածության բարձրացման ու քարոզարշավները կազմակերպելու համար.
 - 3) ԵՓՎ պետք է վերանայի մշակված պլանները, որպեսզի դրանք ընդգրկեն անհրաժեշտ բոլոր հիմնահարցերը: ՓԾ պետք է պահի պլանները միջոցառումների կատարման ընթացքը հստակեցնելու և ցուցումներ տալու համար:
2. Աղետների կառավարմամբ զբաղվող ինքնուրույն խմբերի ստեղծման և զարգացման համար օժանդակության և հսկողության ուղղությամբ քաղաքում կա կատարված մեծ ծավալի աշխատանք և չնայած, որ դպրոցներում և կարևոր Կազմակերպություններում նշանակված են ԱԻ գծով ղեկավարներ, շատ ղեկաբերում հստակ սահմանված չեն հրդեհաշիջման, փրկարարական գործի, առաջին բուժօգնության, տեղեկատվության փոխանցման, աղետների կրթության, առօրյա կյանքի խթանման, սանիտարական պայմանների, խոցելի մարդկանց օժանդակման, ապահովության ստուգման, անվտանգության, օբյեկտների վերանորոգման ոլորտներում գործող ենթախմբերը: Բացի այդ, շատ համատիրություններում բնակիչներից չեն նշանակվում աղետների կառավարման գծով ղեկավարներ: ՓԾ և ԵՓՎ իր բաժինները պետք է օժանդակեն ԹՄ և Համայնատիրություններում աղետների կառավարմամբ զբաղվող ինքնուրույն խմբերի ստեղծմանն ու զարգացմանը, ինչպես ցույց է տրված աղյուսակ 41-ում:

Աղյուսակ 41 Աղետների կառավարմամբ զբաղվող ինքնուրույն խմբերի ստեղծման և զարգացման համար օժանդակության և ցուցումների տրամադրում

<ol style="list-style-type: none"> 1. Ցուցումներ ԱԻ դիմակայման կամավոր խմբերի ստեղծման վերաբերյալ 2. Խմբերի ենթախմբերի միջև խնդիրների բաշխման հստակեցում 3. Համագործակցության ամրապնդում գործնական վարժանքների անցկացման միջոցով

Գլուխ 80. Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման օժանդակության և գործընթացի ղեկավարման իրականացում

Այս հարցի մասին նշված է պլանի 100-107 գլուխներում:

Գլուխ 81. Կահույքի և պահարանների շրջվելը, պատուհանի ապակու թափվելը և այլն կանխող միջոցառումների օժանդակության և գործընթացի ղեկավարման իրականացում

Այս հարցի մասին նշված է պլանի 109-111 գլուխներում:

Գլուխ 82. Աղետների կրթության նյութերի պատրաստման, միջոցառումների օժանդակության և գործընթացի ղեկավարման իրականացում

ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան տրամադրում է օժանդակության և ցուցումներ կրթական նյութերի մշակման համար, իսկ Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է ղեկավարի աղետների կրթության իրականացումը, ընթացքը և արդյունքը: Օժանդակությանը և ցուցումներին ներկայացվող պահանջները նշված են աղյուսակ 42-ում:

Աղյուսակ 42 Կրթական նյութերի պատրաստման և աղետների կրթության խթանման համար տրամադրվող օժանդակություն և ցուցումներ

Կրթական նյութերի պատրաստում	1. Աղետների կրթության ոլորտում քարոզչական ու ուսուցողական բնույթի նյութերի պատրաստում
	2. Սեյսմիկ աղետներին արձագանքմանն առնչվող դիտական և գործնական հմտությունների զարգացման համար անհրաժեշտ նյութերի պատրաստում
	3. ԱԻՆ կողմից Աղետների կառավարման հիմնահարցերի մեթոդական ձեռնարկների նախապատրաստում
Աղետների կրթության խթանում	4. Աղետների կառավարման/դիմակայման ուղղված զանգվածային քարոզչական միջոցառումների կազմակերպում
	5. Աղետների կառավարման թեմայով սեմինարներ անցկացնող մեթոդիստների պատրաստում
	6. Բնակչությանը ուսուցանող պատասխանատուների համար աղետների կառավարման գծով ուսուցման կազմակերպում
	7. Հեռուստատեսության/ռադիո ծրագրերի միջոցով աղետների կառավարման վերաբերյալ տեղեկատվության տարածում
	8. ՃԿՊԱ և ԵՓՎ աղետների կառավարման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և գիտելիք փոխանցման գործողություններ

Գլուխ 83. Միջոցառումների օժանդակություն և գործընթացի ղեկավարման իրականացում հրդեհի բռնկումը կանխելու համար

Հրդեհաշիջման և փրկարարական գործի ՓԾ առնչվող բաժինները, ինչպես նաև գազի և էլեկտրական հոսանքի մատակարարման Կազմակերպությունները տրամադրում են օժանդակություն և ցուցումներ հրդեհը կանխարգելելու համար: ՓԾ պետք է տրամադրի

աղյուսակ 43-ում նշված օժանդակությունը և ցուցումները սեյսմիկ աղետի ժամանակ հրդեհները կանխելու ուղղությամբ:

Աղյուսակ 43 Հրդեհի բռնկումը կանխելու համար տրամադրվող օժանդակություն և ցուցումներ

1. Ցուցումներ կրակով աշխատող օբյեկտների/սարքավորումների ստուգման, համապատասխանեցման և անվտանգության ապահովման վերաբերյալ
2. Ստուգումներ օբյեկտների և սարքավորումների անվտանգության միջոցառումների իրականացման հաստատման համար
3. Տեխնիկական ցուցումներ պահեստավորման եղանակի վերաբերյալ՝ քիմիական նյութերից և այլնից բռնկված հրդեհը կանխելու համար
4. Ցուցումներ էլեկտրական սարքավորումներից բռնկված կրակը կանխելու միջոցառումների վերաբերյալ
5. Էլեկտրական հոսանքի մատակարարման Կազմակերպություններին տրամադրվող տեխնիկական ցուցումներ էլեկտրական սարքերից բռնկվող հրդեհը կանխելու համար անհրաժեշտ սարքավորումների կիրառման վերաբերյալ
6. Հրահանգներ հրդեհաշիջման թեմայով ուսուցման կազմակերպման համար և ցուցումներ ուսուցման բովանդակության վերաբերյալ
7. Ստուգումներ Բազմամարդ օբյեկտներում միջոցառումների իրականացման և ցուցումներ բարելավման համար

Գլուխ 84. Օժանդակություն և ցուցումներ վտանգավոր նյութերի անվտանգության ապահովման միջոցառումների համար

ՓԾ տրամադրում է օժանդակություն և ցուցումներ վտանգավոր նյութերի անվտանգության ապահովման միջոցառումների համար: ՓԾ պետք է տրամադրի աղյուսակ 44-ում նշված օժանդակությունը և ցուցումները միջոցառումների հետագա խթանման համար:

Աղյուսակ 44 Վտանգավոր նյութերի անվտանգության ապահովման միջոցառումների համար տրամադրվող օժանդակություն և ցուցումներ

1. Ցուցումներ Կազմակերպությունների աղետի կառավարման պլանի մշակման վերաբերյալ և դրա հաստատում
2. Ցուցումներ օբյեկտների և սարքավորումների ստուգման, համապատասխանեցման և անվտանգության ապահովման վերաբերյալ
3. Ստուգում վտանգավոր նյութերի օբյեկտների և սարքավորումների ուղղությամբ անվտանգության միջոցառումների իրականացման հաստատման համար
4. Հրահանգներ և ցուցումներ վտանգավոր նյութերի օբյեկտների սեյսմիկ զննման և սեյսմակայունության բարձրացման միջոցառումների վերաբերյալ
5. Հրահանգներ վտանգավոր նյութերից առաջացած աղետների արձագանքման վերաբերյալ ուսուցման կազմակերպման համար և ցուցումներ ուսուցման բովանդակության վերաբերյալ
6. Վտանգավոր նյութերի փոխադրամիջոցների և ճանապարհային տերմինալների անվտանգության ստուգում
7. Վտանգավոր նյութերի փոխադրամիջոցների պատահարի թեմայով ուսուցման կազմակերպում
8. Ցուցումներ վտանգավոր նյութերի յուրաքանչյուր տեսակի համար ընկերություններում խմբերի ստեղծման և վտանգավոր նյութերից առաջացած աղետների կանխարգելման

միջոցառումների խթանման վերաբերյալ

Գլուխ 85. Օժանդակություն և ցուցումներ խոցելի մարդկանց աջակցելու համար

Արտակարգ իրավիճակների նախարարությունը և Առողջապահության նախարարությունը պետք է տրամադրեն օժանդակություն և տա ցուցումներ աղետների ժամանակ խոցելի մարդկանց աջակցելու համար, ինչպես նշված է աղյուսակ 45-ում:

Աղյուսակ 45 Խոցելի մարդկանց աջակցելու համար տրամադրվող օժանդակություն և ցուցումներ

Ընդհանուր հարցեր աղետների ժամանակ խոցելի մարդկանց վերաբերյալ

1. Առկա սոցիալական հաստատությունները, որպես սովորական տարահանման վայրերում մնալու դժվարություններ ունեցող խոցելի մարդկանց համար, հատուկ տարահանման կետեր օգտագործելու վերաբերյալ համաձայնագրերի կնքման խթանում
2. Օժանդակություն առնչվող կազմակերպությունների և հատուկ օբյեկտների միջև համագործակցության ամրապնդման հարցում, որպեսզի հնարավոր լինի սահուն իրականացնել աղետների ժամանակ խոցելի մարդկանց աջակցման գործողությունները
3. Ցուցումներ աղետների ժամանակ խոցելի մարդկանց աջակցման միջոցառումների վերաբերյալ և ԹՄ աջակցության ցուցաբերման հարցերով սեմինարների կազմակերպման օժանդակում
4. Ցուցումներ “Աղետների ժամանակ խոցելի մարդկանց աջակցման վերաբերյալ ձեռնարկի” մշակման համար, որում սահմանվում են խոցելի մարդկանց անվտանգության հաստատման մեթոդը և արձագանքման գործողությունների եղանակները
5. Բնակիչների միավորումներին տրվող ցուցումներ աղետների ժամանակ խոցելի մարդկանց ցուցակի պատրաստման համար
6. Ցուցումներ խոցելի մարդկանց համար տարահանման վայրերում հատուկ տարածքների ապահովման վերաբերյալ

Օտարերկրացիներին վերաբերող կոնկրետ հարցեր

7. Ցուցումներ աղետների տեղեկատվական կայքի օտար լեզուներով ստեղծման հարցում և իրազեկվածության բարձրացման նպատակով օտար լեզուներով թռուցիկների ու պաստառների տարածման վերաբերյալ
8. Ցուցումներ օտարերկրացիներին աջակցելու համար կամավորների գրանցման և աջակցության եղանակների վերաբերյալ
9. Ցուցումներ գործնական վարժանքների անցկացման համար, որոնք կարող են հաճախել օտարերկրացիները
10. Ցուցումներ լրատվամիջոցների օգնությամբ օտար լեզուներով աղետների վերաբերյալ տեղեկատվության տարածման համակարգի ստեղծման վերաբերյալ
11. Օտարերկրյա քաղաքացիներին տեղեկատվության հասանելիության ապահովում կամավոր թարգմանիչների օգնությամբ
12. Ցուցումներ օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների հետ տեղեկատվության փոխանակման կենտրոնների հիմնման ուղղությամբ

Գլուխ 86. Քաղաքապետարանի, պետական կառավարման մարմինների և ԹՄ/Համայնատիրությունների միջև համագործակցություն

Սեյսմիկ աղետի կառավարման գործում կարևոր հարցերից մեկը քաղաքապետարանի, պետական կառավարման մարմինների և ԹՄ/Համայնատիրությունների միջև համագործակցության խթանումն է: Քաղաքապետարանը, պետական կառավարման մարմինները և ԹՄ/Համայնատիրությունների պետք է ավելի ամրապնդեն իրենց համագործակցությունը՝ խթանելով մշտական կապը միմյանց միջև:

Գլուխ 87. Համագործակցության միջոցով սեյսմակայուն քաղաքի ստեղծում

Քաղաքապետարանը, պետական կառավարման մարմինները, Կազմակերպությունները, դպրոցները, հասարակական կազմակերպությունները (<Կ) և այլն պետք է փոխանակեն տեղեկատվություն ինքնուրույն կատարված միջոցառումների վերաբերյալ, կիսեն խնդիրները և համագործակցեն սեյսմակայուն քաղաք ստեղծելու համար: Հարցը հասկանալու և դրա վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է՝

- 1) Ստեղծի առիթներ քաղաքապետարանի, պետական կառավարման մարմինների, բնակիչների միավորումների, Կազմակերպությունների, դպրոցների, <Կ-ների և այլնի համար փոխադարձ օգնության մասին քննարկումներ ծավալելու համար
- 2) Մշակի Ուղեցույցներ և ձեռնարկներ փոխադարձ օգնության, բովանդակության մասսայականացման և կարևորության ըմբռնման խթանման համար
- 3) Կազմակերպի գիտաժողովներ և դասախոսություններ՝ սեյսմակայուն քաղաք ստեղծելու վերաբերյալ

Գլուխ 88. Տեղական կազմակերպչական կառուցվածքի ստեղծում աղետների կառավարման ոլորտում համագործակցության համար

Բնակիչներին և հասարակությանը երկրաշարժերից պաշտպանելու համար անհրաժեշտ է ամրապնդել համագործակցությունը բնակիչների միավորումներում՝ ԹՄ/Համայնատիրություններում, Կազմակերպություններում, դպրոցներում և այլ վայրերում ստեղծված աղետների կառավարմամբ զբաղվող ինքնուրույն խմբերի միջև, ինչպես նաև իրականացնել համախմբված միջոցառումներ հասարակությունում: Այս նպատակով Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է ձեռնարկի հետևյալ միջոցառումները՝

1) Համագործակցության համար բնակիչների միավորումների՝ ԹՄ/Համայնատիրությունների, Կազմակերպությունների, դպրոցների <Կ-ների և այլնի միասնական ընկերակցության, ինչպես նաև նրանց միջև հաղորդակցության համակարգի ստեղծում:

2) Սեյսմակայուն քաղաքի ստեղծման գործում բնակիչների մասնակցության խթանում կազմակերպչական կառուցվածքի ամրապնդման և բնակիչների միավորումների՝ աղետների

կառավարման գործողությունների ակտիվացման միջոցով:

3) Կամավորների և բնակիչների միջև համագործակցության խթանման նպատակով աղետների կառավարման վերաբերյալ համատեղ ուսուցման կազմակերպում բնակիչների ինքնակամ մասնակցությամբ:

4) Բնակիչների միավորումների՝ ԹՄ/Համայնատիրությունների, Կազմակերպությունների, դպրոցների և այլնի միջև համագործակցության խթանում համաձայնեցված գործողությունների լավ օրինակների տարածման միջոցով, ինչպես նաև աղետների կառավարման գործողություններում տեղական Թաղային միավորին նպաստող Կազմակերպությունների ներգրավմամբ:

Գլուխ 89. Տնտեսության և արդյունաբերության վերականգնման նախապատրաստում

Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է նպաստի յուրաքանչյուր տեսակի արդյունաբերությունում ընկերակցության ստեղծմանը և կազմակերպմանը՝ աղետների կառավարման նպատակով տեղեկատվության փոխանակման համար: Այն հնարավորություն կտա արագացնել արդյունաբերության ոլորտում աղետների դեմ պատրաստվածությունը, ինչպես նաև ապահովել աղետներից հետ արագ վերականգնումը և աշխատանքի վերսկսումը:

Գլուխ 90. Միջին և փոքր Կազմակերպությունների համար ձեռնարկների մշակում արդյունաբերական աղետները կառավարելու նպատակով

Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է պատրաստի ձեռնարկներ ցանկացած տեսակի արդյունաբերության մեջ, հիմնականում միջին և փոքր Կազմակերպություններում, արդյունաբերական աղետների կառավարման վերաբերյալ:

Գլուխ 91. Արդյունաբերական կազմակերպություններին կենտրոնացված աջակցության կենտրոնի հիմնում

Աշխատանքի սահուն վերականգնմանը նպաստելու համար Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է իրականացնի նախապատրաստական աշխատանքներ Արդյունաբերական կազմակերպություններին կենտրոնացված աջակցության կենտրոնների հիմնման համար, որոնք կարող են տրամադրել միմյանց առնչվող տեղեկատվություն, խորհրդատվություն, վարչական օժանդակություն և այլն:

Բաժին 7 Սեյսմակայուն քաղաքաշինություն

Գլուխ 92. Սեյսմակայուն քաղաքի ստեղծմանը նպաստելու անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին՝

1. Սեյսմակայուն քաղաքային կենսաապահովման ենթակառուցվածքներին՝ ջրամատակարարում, կոյուղի, գազա- և էլեկտրամատակարարում, որոնք կառուցվել են սովետական ժամանակաշրջանում.

2. Մեղմացնել քաղաքացիներին հասցված վնասը և կանխել ճանապարհների փակվածությունը՝ ավելացնելով սեյսմակայուն շենքերը (մասնավորապես՝ կարևոր է հիվանդանոցների և դպրոցների ամրացումը),

3. Խթանել հին սեփական տներով խիտ կառուցապատված տարածքների վերակառուցումը, որտեղ դժվար կլինի իրականացնել տարահանումը և փրկարարությունը,

4. Ապահովել բաց տարածքներ, որոնք կարող են աղետի ժամանակ հասանելի լինել օգտագործման համար որպես տարահանման կետ (օգտագործել սեյսմակայուն տարրական դպրոցի դաշտը, խոշոր գործարանի տեղանքը և բաց տարածք ուրբանիզացված վայրում),

5. Զարգացնել ճանապարհների լայն ցանց ներառյալ՝ քաղաքի կենտրոնը շրջանցող ճանապարհների կառուցումը

6. Ավելացնել սեյսմակայուն շենքերը քաղաքի հարավային մասի սողանքային պաշտպանության տարածքում և Հրազդանի կիրճի ու Նորքի կիրճի երկայնքով սահող հողերի վրա:

Գլուխ 93. Հիմնական գաղափարներ քաղաքային պլանավորման համար

Քաղաքում իրականացվող զարգացման և շինարարական գործունեությունները պետք է համապատասխանեն “Քաղաքաշինության մասին (1998-05-05)” ՀՀ օրենքին և շինարարական նորմերին (շինարարական նորմեր և կանոններ, Հայաստանի Հանրապետություն II-6.02-2006, սեյսմակայուն շինարարություն, նորմեր ըստ նախագծի): Բացի այդ, վերակառուցման ծրագրեր իրականացնելիս դրանք պետք է համապատասխանեն Երևանի Գլխավոր Հատակագծին և անհրաժեշտ է ապահովել բաց տարածք որպես հասարակական տարածք, որը կառուցվել է նախկին սովետական ժամանակաշրջանում:

Գլուխ 94. Վերակառուցման ծրագրերի խթանում

Երևանի Գլխավոր Հատակագծին համապատասխանող վերակառուցման ծրագրերը պետք է իրականացվեն քայլ առ քայլ և համաձայն մշակված ռազմավարության: Վերակառուցման ծրագրեր իրագործելու համար անհրաժեշտ է, որպեսզի դրանք ընթանան հողի սեփականատերերի հետ բանակցություններով և համաձայնությամբ՝ քաղաքապետարանի համապատասխան վարչության (օրինակ՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կամ քաղաքաշինության և հողի վերահսկման վարչության) ղեկավարման ներքո: Ընդհանուր առմամբ, բնակիչները կարող են ձեռք բերել տուն իրենց ֆինանսներով, որոնք կարող են գոյանալ նախկին հողի և շենքերի իրավունքները կառուցապատողին վաճառելուց:

Քանի որ վերակառուցման տարածքի բնակիչները հիմնականում ունեն ցածր եկամուտ, իսկ վերակառուցման համար բնակիչներին տրվող փոխհատուցումը միշտ չէ, որ բավարարում է նույն տեղում նոր վերակառուցված տանը ապրելու համար, ապա պետք է հաշվի առնել հասարակական տների տրամադրումը և բնակարանի վարձակալումը քաղաքապետարանի նախաձեռնությամբ, որպեսզի տարեկան եկամուտ ստացող բնակիչները կարողանան շարունակել ապրել վերակառուցված տարածքի նույն վայրում առանց խնդիրների: Սեփական տների ամրացման համար կառաջարկվեն հետևյալ խնդիրները՝

1. Վերակառուցման ծրագրեր՝ համաձայն Գլխավոր Հատակագծի՝ վերակառուցման կարիք ունեցող շենքերը կառուցվել են մինչև 1989թ. (հիմնականում 1960 -1970թթ.): Խթանելով սեփական տների վերակառուցումը և ձեռք բերելով համաձայնություն բնակիչների և կառուցապատողի միջև՝ վերակառուցման աշխատանքը պետք է իրականացվի հետևյալ կերպ՝

- 1) խթանելով վերակառուցումը՝ նվազեցնելով արժեքը, որը կարելի է անել կառուցելով բարձր և միջին բարձրության շենքեր՝ ավելացնելով հատակի մակերեսը,
- 2) խթանելով վերակառուցման ծրագրերը՝ կառուցելով նոր շենքեր ցածրահարկ տների տարածքում՝ վերածելով հողը բնակարանի հատակի,
- 3) ապահովելով տների վարձակալություն, որտեղ ապրում են ցածր եկամուտ ունեցող բնակիչներ, մաշված տների վերակառուցումը խթանելու համար:

2. Սեյսմիկ ամրացման ծրագրեր՝ ելնելով Երևանի Գլխավոր Հատակագծում «հասարակական, պատմական և մշակութային շենքերի» դասակարգված շենքերի սեյսմիկ զննումից: Մասնավորապես, ինչ վերաբերում է հիվանդանոցներին և դպրոցներին, որոնք շատ կարևոր դեր են խաղում սեյսմիկ աղետի ժամանակ, դրանց սեյսմակայունության բարձրացումը կդառնա առաջնահերթ:

Գլուխ 95. Բաց տարածքների ապահովում՝ ուրբանիզացված տարածքում բաց տարածքների ապահովում

1. Գլխավոր հատակագծի GIS տվյալների, բնակչության բաշխվածության և այլ տեղեկատվության վերադրման արդյունքում հստակեցվեցին հետևյալ կետերը՝

- 1) Զբոսայգիները և կանաչ տարածքները ցրված են քաղաքով մեկ, իսկ քաղաքի արտաքին եզրագծի բաց տարածքների հարաբերակցությունը համեմատաբար բարձր է:
- 2) Մինչ քաղաքի կենտրոնական մասում՝ Կենտրոն և Արաբկիր վարչական շրջաններում, զբոսայգիներն ու կանաչապատ տարածքները համեմատաբար խիտ են, նմանատիպ վայրեր գոյություն չունեն Նորք-Մարաշ վարչական շրջանում:
- 3) Համաձայն Երևան քաղաքի Գլխավոր Հատակագծի՝ նախատեսվում է 2020թ. ավելացնել կանաչապատ տարածքներն ու զբոսայգիները՝ ավելի քան 10մ² /անձ:

Աղյուսակ 46 Կանաչապատ տարածքների ապագա պլանն ըստ վարչական շրջանների

ՀՀ	Համայնք	2005թ. (2003թ. տվյալներ)		2020թ.	
		Տարածք	Տարածք մեկ	Տարածք	Տարածք մեկ

			անձի համար		անձի համար
1	Աջափնյակ	12.0	1.12	243.0	16.40
2	Ավան	10.5	2.10	70.5	12.70
3	Արաբկիր	122.3	9.30	216.8	16.60
4	Դավթաշեն	7.8	1.90	97.8	21.60
5	Էրեբունի	18.5	1.55	372.0	30.04
6	Կենտրոն	128.0	9.85	148.0	11.60
7	Մալաթիա-Սեբաստիա	60.5	4.30	360.5	22.40
8	Նոր-Նորք	49.5	3.46	261.5	18.00
9	Նորք-Մարաշ	0.0	0.00	51.0	39.20
10	Նուբարաշեն	3.1	3.30	101.1	68.30
11	Շենգավիթ	32.6	2.30	334.6	20.80
12	Քանաքեռ-Զեյթուն	540.3	12.25	125.5	16.40
	Ընդամենը	540.3	4.90	2,382.3	19.85

2. Երկրաշարժի առաջացման դեպքում անհրաժեշտ է ապահովել քաղաքապետարանի կողմից սահմանված առաջնային տարահանման վայրը, օրինակ՝ դպրոցի դաշտը (տարրական և միջնակարգ դպրոցներ), հիվանդանոցներն ու կառավարական շենքերը (օբյեկտները): Ավելին, ուրբանիզացված տարածքում գտնվող զբոսայգին և քաղաքի արվարձաններում առկա բաց տարածքը կօգտագործվեն որպես երկրորդային տարահանման վայր: Սեփական տներով շատ խիտ կառուցապատված բնակելի վայրերում բաց տարածքների սակավության պատճառով և հաշվի առնելով հրդեհի տարածման կանխարգելումը՝ անհրաժեշտ է խթանել լրացուցիչ աշխատանք ևս, օրինակ՝ բուֆերային ծառատնկումը սեփական հողամասում և արգելապատնեշի տեղադրումը վերակառուցման ժամանակ:

3. Առկա զբոսայգիները պետք է սահմանվեն որպես աղետների կառավարման զբոսայգիներ և նախապատրաստվեն ոչ միայն ժամանակավոր տարահանման դեպքում օգտագործվելու, այլև փրկարարության և օգնության ցուցաբերման ժամանակ որպես գործողությունների բազա կիրառվելու համար, որտեղ տարածքը պետք է կազմի առնվազն 10-20 հեկտարից ավել: Հաշվի առնելով տարահանման համար ճանապարհների հասանելիությունը և երկրաշարժի դեպքում վնասի գնահատման արդյունքը՝ նախընտրելի է ծավալել աղետների կառավարման մի քանի զբոսայգիներ քաղաքի կարևորագույն հատվածներում:

4. Քաղաքի մի մասում, ընդարձակ զբոսայգու տեղում կառուցվել են բնակելի սեփական տներ: Բացի այդ, ուրբանիզացված տարածքում կարելի է տեսնել ընդհատված մայթեր, որոնք փոխարինվել են սեփական հողով: Սրա պատճառն այն է, որ հասարակական տարածքները, օրինակ՝ ճանապարհները, զբոսայգիները և մասնավոր հողերը դեռևս ամբողջությամբ տարանջատված չեն և հասարակական տարածքի օգտագործումը որոշվել է՝ ելնելով մասնավոր շինարարության կիրառումից (թույլտվություն): Զբոսայգիների և կանաչ տարածքների՝ որպես հասարակական բաց տարածքներ, կիրառման շարունակականությունը ապահովելու համար անհրաժեշտ է հասարակական բաց տարածքների մանրամասն նկարագիրը, ըստ քաղաքապետարանի պլանների որոշման:

Գլուխ 96. Ճանապարհների բարելավում

Մայրուղիների շինարարությունը պետք է արվի քայլ առ քայլ՝ համաձայն Երևանի Գլխավոր Հատակագծի: Սեյսմիկ աղետի ժամանակ տարահանման, փրկարարական և օգնության ցուցաբերման գործողությունների սահուն ապահովման համար արտաքին շառավղային ճանապարհների չկառուցված որոշ հատվածների շինարարական աշխատանքը պետք է անմիջապես մեկնարկի՝ քաղաքի կենտրոնից դեպի նախատեսված վայրեր հնարավորինս կարճ երթուղով հասնելու համար:

Գլուխ 97. Կայանման տարածքներ

Ուրբանիզացված տարածքում ճանապարհի երկայնքով կայանման տարածքները, ընդհանուր առմամբ, գտնվում են քաղաքապետարանի վերահսկման ներքո: Պահանջելով կայանման տարածքների սահմանափակումներ երկրաշարժի ժամանակ տարահանման, փրկարարական և օգնության ցուցաբերման գործողությունների նպատակով որոշված վթարային ճանապարհների համար՝ անհրաժեշտ է սահմանված վթարային ճանապարհների երկայնքով կառուցել լրացուցիչ ավտոկայանատեղեր: Քանի որ շենքերի հետին բակերը հիմնականում օգտագործվում են որպես ավտոտնակներ, դրանք կխոչընդոտեն տարահանման, փրկարարական և օգնության ցուցաբերման գործողությունները և կարող են նաև առաջացնել երկրորդային աղետի հավանականություն, ինչպես օրինակ՝ բենզինի բոցավառման հետևանքով առաջացած հրդեհ: Հաշվի առնելով նաև այն, որ ավտոտնակների ռիսկը մատնանշվել է նաև քաղաքացիների կողմից, որպեսզի դրանք չխոչընդոտեն գործողությունները աղետի ժամանակ, պետք է առաջարկվի դրանց պատշաճ պահպանումը և օգտագործման սահմանափակումը:

Գլուխ 98. Հասարակական տրանսպորտ

Աղետների ժամանակ մասնավոր մեքենաների օգտագործումը կսահմանափակվի, բացառությամբ շտապօգնության մեքենաների. որպես կանոն մարդիկ օգտվում են հասարակական տրանսպորտից: Առանց խոչընդոտելու շտապ օգնության մեքենաների տեղաշարժը, մասնավոր մեքենաների տեղաշարժը հնարավորինս հեշտացնելու համար քաղաքի հասարակական տրանսպորտային և երկաթգծի տրանսպորտային Կազմակերպությունները պետք է բարելավեն ենթակառուցվածքների սեյսմակայունությունը, օրինակ՝ սովորական պայմաններում փոխանցման գծում հեռախոսի սյուները: Բացի այդ, աղետի ժամանակ հետիոտն գծի ապահովման համար, կառաջարկվի, որ քաղաքապետարանի հասարակական տրանսպորտի վարչությունը և ավտոբուսների Կազմակերպությունը բարելավեն կանգառների սեյսմիկ ամրացումը: Աղետի ժամանակ մասնավոր մեքենաների օգտագործումը կանխելու համար առաջարկվում է նաև ընդլայնել մետրոպոլիտենը, որը աշխատում և ղեկավարվում է քաղաքապետարանի կողմից (հետագա ընդլայնման պլանով):

Գլուխ 99. Հողօգտագործումը աղետի ժամանակ

Աղետի ժամանակ պետք է հաշվի առնել Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից դպրոցների, հիվանդանոցների և վարչական շենքերի օգտագործումը, որպես առաջնային տարահանման վայրեր, իսկ զբոսայգիների, կանաչապատ տարածքների և այլ բաց

տարածքների (մասնավոր հող) կիրառումը, որպես երկրորդային տարահանման վայրեր: Նախքան երկրորդային տարահանման վայրերի օգտագործումը, անհարժեշտ կլինի կնքել համաձայնագիր Երևանի քաղաքապետարանի և հողի սեփականատիրոջ միջև՝ հողի օգտագործման թույլտվության վերաբերյալ: Ինչ վերաբերում է զբոսայգիներին և կանաչ տարածքներին, հաշվի առնելով աղետի ժամանակ որպես ապաստարաններ դրանց կիրառումը՝ խորհուրդ է տրվում տեղադրել ցուցատախտակներ (սահմանված տարահանման վայրը ցույց տալու համար)՝ վթարային զուգարան, վթարային լուսավորում և պահեստային բազա:

Բաժին 8 Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացումը

Գլուխ 100. Առկա շենքերի և շինությունների սեյսմակայունության և հակասեյսմիկ վերակառուցման ճշտում (ստուգում)

1. Երևան քաղաքում գոյություն ունեցող շենքերի գերակշռող մեծամասնությունը նախագծվել և կառուցվել են մինչև 1988 թվականը, և նրանց նախագծման հիմքում ընդունված սեյսմիկ ուժգնությունը ցածր է սպասվելիք ուժերից: Այդ է վկայում ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» (այսուհետ՝ ՍՊԾ) գործակալության կողմից 1998 թվականին կազմված և հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ գոտիացման (շրջանացման) նոր քարտեզը: Քանի որ Երևան քաղաքում մինչև 1988 թվականը կառուցված բոլոր շենքերի ու շինությունների նախագծային սեյսմակայունությունն ընդունված է եղել 7-8 բալլ՝ ըստ ՄՍԿ-64 (MSK-64) բալայնության սանդղակի, իսկ ըստ Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ գոտիացման քարտեզի Երևան քաղաքի տարածքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում՝ գետնի սպասվելիք առավելագույն $A_{max}=0.4g$ արագացումով (բալայնությունը 9 և բարձր ըստ ՄՍԿ-64 (MSK-64) սանդղակի, ապա ակնհայտ է դառնում, որ տարածաշրջանի հնարավոր ուժեղ երկրաշարժի ժամանակ (մագնիտուդը՝ $M>5.5$) տեղի կունենան բազմաթիվ շենքերի կամ նրանց առանձին մասերի փլուզում, որը կբերի մեծ թվով մարդկային զոհերի և ահռելի նյութական կորուստների: Երևան քաղաքի տարածքով անցնում են տեկտոնական խզվածքներ, բացի այդ Երևան քաղաքի վարչական տարածքում է գտնվում Փարաքարի երկրաշարժի էպիկենտրոնը, որը ակտիվ է:

2. Ոլորտի զարգացման միտումները անհրաժեշտ է առաջնահերթ ուղղել Երևանի տարածքում սեյսմիկ պաշտպանության տեսակետից հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության գնահատման և կենսաապահովման ենթակառուցվածքների սեյսմիկ ռիսկի գնահատման ու ռիսկի նվազեցման ուղղությամբ աշխատանքների կատարմանը:

3. ՀՀ ԳԱԱ Երկրաբանության գիտահետազոտական ինստիտուտի, ՀՀ ԱԻՆ «ՍՊԾ» գործակալության և մի շարք այլ նախագծային ինստիտուտների կողմից ճշտվել է Հայաստանի Հանրապետության և Երևան քաղաքի սեյսմիկ ակտիվությունը: Համաձայն իրականացված հետազոտական աշխատանքների Երևան քաղաքի տարածքի նվազագույն սեյսմիկ ակտիվությունը կազմում է 7 բալլ, իսկ առավելագույն սեյսմիկ ակտիվությունը՝ 10 բալլ:

Գլուխ 101. Հակասեյսմիկ աշխատանքների պլանների իրագործումը

ՀՀ Քաղաքաշինության նախարարությունը և ոլորտի համապատասխան նախագծային կազմակերպությունները պետք է մշակեն շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ:

Գլուխ 102. Սեյսմիկ պաշտպանության տեսակետից աղետի կառավարում ապահովող գերատեսչությունների շենքերի սեյսմակայունության բարձրացում

Առաջնահերթ անհրաժեշտ է գնահատել և ուժեղացնել հետևյալ օբյեկտների սեյսմիկ խոցելիության աստիճանը՝

Ազգային ժողովի վարչական շենք, Կառավարության տուն №1, №2 և №3 շենքերը, Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական շենքը, Արտակարգ իրավիճակների նախարարության վարչական շենքը, Տրանսպորտի և կապի նախարարության վարչական շենքը, Երևանի քաղաքապետարանի և բոլոր այն կառույցների շենքերը, որոնք աղետի ժամանակ պետք է ղեկավարեն արձագանքման, տարահանման և անհապաղ գործողությունների աշխատանքները:

Գլուխ 103. Դպրոցների և հիվանդանոցների սեյսմակայունության բարձրացում

Հանրապետական և քաղաքային համապատասխան կառույցները պետք է արագացնեն դպրոցների և հիվանդանոցների շենքերի մշտապես իրականացվող սեյսմակայունության բարձրացման աշխատանքները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցների և հիվանդանոցների շենքերը պետք է օգտագործվեն, որպես քաղաքի բնակիչների անհետաձգելի օգնության և ժամանակավոր տեղաբաշխման վայր:

Գլուխ 104. Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի սեյսմակայունության բարձրացում

Սեյսմակայունության բարձրացման կարևոր խնդիր է բազմաբնակարան շենքերի փաստացի տեխնիկական վիճակի գնահատումը, նրանց ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումների ուսումնասիրումը, փաստացի սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատումը՝ հաշվի առնելով վերջին երկրաշարժերի հետևանքներն ու կուտակված փորձը: Պետք է դասակարգել բազմաբնակարան շենքերը, որոնք ունեն տարբեր ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներ և կառուցված են տարբեր գրունտային պայմաններում՝ ըստ սեյսմիկ հատկությունների:

2. Հիմնվելով շենքերի և շինությունների մեծածավալ տվյալների բազայի, ինչպես նաև իրականացված բազմաթիվ նախնական հետազննությունների արդյունքների վրա, Երևան քաղաքում գոյություն ունեցող հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները կարելի է դասել 4 խմբի՝

1) խումբ 1՝ 2-4 հարկանի քարե պատերով շենքեր են՝ կառուցված մինչև 1960-ական թվականները: Դրանք կառուցվել են անհատական նախագծերով (դիզայնով), և շատերն ունեն ճարտարապետական կարևոր նշանակություն: Երևան քաղաքում գոյություն ունեցող հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների մոտ 30%-ը պատկանում են այս խմբին: Սպիտակի երկրաշարժի ժամանակ սույն կետում նշված շենքերը հիմնականում ստացան ուժեղ վնասվածքներ, ձևախախտումներ, իսկ շատերն էլ փլուզվեցին: Նշված խմբի շենքերն ունեն հետևյալ հիմնական ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ բնութագրերը՝

ա. բարդ հատակագծային լուծում, կոշտությունների և զանգվածների ոչ համաչափ բաշխում՝ ըստ շենքի գլխավոր երկրաչափական առանցքների ու շենքի բարձրության,

բ. սեյսմակայուն շինարարության նախագծման ժամանակակից նորմերի պահանջների բացակայություն,

գ. սեյսմապաշտպան համակարգերի բացակայություն,

դ. կրող պատերում գոյություն ունեցող պատուհանների ու դռների՝ թույլատրելի չափերից մեծ բացվածքներ,

ե. փայտյա կոնստրուկցիաներից իրականացված ծածկեր.

2) խումբ 2՝ 3-5 հարկանի, ներքին ե/բ կարկասով և պարփակող լայնական ու երկայնական քարե կրող պատերով շենքեր են: Երևան քաղաքում գոյություն ունեցող հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների մոտ 45%-ը պատկանում են այս խմբին: Դրանց մի մասը կառուցվել են տիպային նախագծերով և հատակագծում հիմնականում ուղղանկյունաձև են: Այս խմբի շենքերում կան բազմաթիվ անհամապատասխանություններ սեյսմակայուն շինարարության նախագծման ժամանակակից նորմերի պահանջների հետ: Սպիտակի երկրաշարժի ժամանակ սույն կետում նշված շենքերը ստացան ուժեղ վնասվածքներ, ձևախախտումներ, մի մասը փլուզվեցին և մի մասն էլ ենթակա էին վերականգնման.

3) խումբ 3՝ 9-12 հարկանի, հավաքովի երկաթբետոնյա կոնստրուկցիաներից իրականացված խոշորապանելային շենքեր են: Երևան քաղաքում գոյություն ունեցող հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների մոտ 15%-ը պատկանում են այս խմբին: Սպիտակի երկրաշարժի ժամանակ այս տիպի շենքերը ստացան չափավոր վնասվածքներ, ձևախախտումներ, բայց չփլուզվեցին և դրանք ենթակա էին վերականգնման.

4) խումբ 4՝ 6-9 հարկանի, հավաքովի երկաթբետոնյա կոնստրուկցիաներից իրականացված կարկասային շենքեր են: Երևան քաղաքում գոյություն ունեցող հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների մոտ 10%-ը պատկանում են այս խմբին: Սպիտակի երկրաշարժի ժամանակ այս տիպի շենքերի հիմնական մասը փլուզվեց, քանի որ կարկասային շենքերում հավաքովի երկաթբետոնյա կոնստրուկտիվ տարրերի միացման հանգույցներն ընկած են առավելագույն ճիգերի գոտում և աշխատանքներն իրականացվում էին ցածր որակով, այն դեպքում, երբ սեյսմակայունությունը գլխավորապես կախված է այդ հանգույցների միացման տեղից և որակից:

5. Վերը նշված բոլոր խմբերի սեյսմակայունության բարձրացման աշխատանքները պետք է իրականացվի Քաղաքաշինության նախարարության, Արտակարգ իրավիճակների նախարարության, քաղաքային և համայնքային իշխանությունների տեխնիկական և կազմակերպչական օժանդակությամբ:

6. Սպիտակի երկրաշարժից հետո ՀՀ ԱԻՆ «ՍՊԾ» գործակալության կողմից իրականացվել է Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի սեյսմակայունության աշխատանքներ, համաձայն որի բազմաբնակարան շենքերի ճնշող մեծամասնության սեյսմակայունությունը չի համապատասխանում տարածքի սեյսմիկ ակտիվությանը՝ ավելի նվազ է, քան տարածքի սեյսմակալիվությունը: Բացի այդ շենքերի մաշվածության և բնակիչների կողմից կատարված ձևափոխությունների հետևանքով բազմաբնակարան շենքերի նախագծային սեյսմակայունությունը նվազել է առնվազն մեկ բալով:

7. 1988 թվականից հետո կառուցվող շենքերի և շինությունների համար սահմանվել է առավելագույն 9 բալ սեյսմակայունության ապահովման պահանջ և նախագծվող շենքերի

սեյսմակայունությունը ներկայումս 9 բալ է: Նախագծերը անցնում են մասնագիտական փորձաքննություն, տրվում է նախագծի սեյսմիկ գնահատականը, որից հետո միայն իրականացվում է շինարարություն: Շինարարության որակի հսկման համար ՀՀ կառավարության կողմից տրվել են արտոնագրեր մասնագիտացված կազմակերպություններին, օրինակ՝ «Սեյսմակայուն շինարարության և կառույցների պաշտպանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, ՀՀ ԱԻՆ «ՍՊԾ» գործակալություն և այլն:

8. Ներկայումս (2012 թվականի հուլիս ամսվա դրությամբ) Երևան քաղաքում առկա է 2-րդ աստիճանի վթարայնության կարգ ունեցող 95, 3-րդ աստիճանի վթարայնության կարգ ունեցող 82 և 4-րդ աստիճանի վթարայնության կարգ ունեցող 7 բազմաբնակարանային շենքեր: 2-րդ և 3-րդ աստիճանի վթարայնության կարգ ունեցող բազմաբնակարան շենքերը պետք է վերանորոգվեն, իսկ 4-րդ աստիճանի վթարայնության կարգ ունեցող շենքերը ենթակա են քանդման, իսկ բնակիչները՝ վերաբնակեցման: ՀՀ կառավարության կողմից իրականացվում է 4-րդ աստիճանի վթարայնության կարգ ունեցող շենքերի քանդման և բնակիչների վերաբնակեցման աշխատանքներ:

9. Սպիտակի երկրաշարժից հետո հայ գիտնականների կողմից (ճարտարապետ, ակադեմիկոս Մկրտումյան) մշակվեց բազմաբնակարան շենքերի առանց վերաբնակեցման սեյսմակայունության բարձրացման տեխնոլոգիա, որը անցավ համապատասխան փորձարկում: Սակայն ֆինանսական միջոցների բացակայության հետևանքով ներկայումս ցածր սեյսմակայունություն ունեցող շենքերի սեյսմակայունության բարձրացման աշխատանքներ չեն իրականացնում: Համաձայն հաշվարկների Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բազմաբնակարան շենքերի սեյսմիկ կայունության բարձրացման համար (ակադեմիկոս Մկրտումյանի տեխնոլոգիայի կիրառմամբ) անհրաժեշտ է շուրջ 4 միլիարդ ԱՄՆ դոլար: Անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարության կողմից մշակվի և ընդունվի Երևան քաղաքում և ՀՀ այլ բնակավայրերում գտնվող բազմաբնակարան շենքերի սեյսմակայունության բարձրացման աշխատանքների կատարման պետական ծրագիր, որի իրականացման համար անհրաժեշտ կլինի նաև միջազգային դոնոր կազմակերպությունների լուրջ ֆինանսական աջակցությունը:

Գլուխ 105. Ռազմավարական նշանակության ավտոճանապարհների եզրերում առկա շենքերի սեյսմակայունության բարձրացում

Քաղաքաշինության նախարարությունը, Տրանսպորտի և կապի նախարարությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Քաղաքապետարանը՝ իրենց համապատասխան կառույցների հետ մեկտեղ պետք է իրականացնեն այն շենքերի սեյսմազինվածության բարձրացումը, որոնց փլուզումը երկրաշարժի ժամանակ կարող է փակել երթևեկությունը:

Գլուխ 106. Նոր կառուցվող շենքերի սեյսմակայունության ապահովում

Առաջարկվում է մշակել հստակ ձևակերպված և հանրության համար մատչելի պատժամիջոցներ, որոնք կկիրառվեն այն նախագծողների և շինարարների դեմ, ովքեր կխախտեն գործող ՀՀՇՆ II- 6.02 – 2006 նորմերը:

Քաղաքապետարանը և բոլոր շահագրգիռ մարմինները պետք է ընդունեն անհրաժեշտ միջոցներ և իրականացնեն քայլեր, որպեսզի պահպանվեն սեյսմակայունության նորմերը և կիրառվեն պատժամիջոցներ՝ դրանց խախտման դեպքում:

Գլուխ 107. Օրենսդրական դաշտի բարելավում

Սեյսմիկ ռիսկի նվազեցումը գտնվում է Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում:

2002 թվականի հունիսի 12-ին ընդունվել է «Սեյսմիկ պաշտպանության մասին ՀՀ օրենքը»:

Ընդունվել են ՀՀ կառավարության որոշումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության տարածքի և Երևան քաղաքի սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական համալիր ծրագրերի կատարմանը (Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 7-ի N392 և 1999 թվականի հունիսի 10-ի N429 որոշումներ, «Երևանի տարածքում սեյսմիկ պաշտպանության տեսակետից հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագիրը և իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին»):

Առաջարկվում է զարգացնել օրենսդրական դաշտը, որը կնպաստի բազմաբնակարան շենքերի հակասեյսմիկ միջոցառումների կիրառմանը՝ ուշադրություն դարձնելով վարչական և մեթոդական աշխատանքների ընդլայնմանը համատիրությունների հետ:

Գլուխ 108. Իրերի ընկնելու և կահույքի շրջվելու կանխում, վերելակների անվտանգության ապահովում

1. Երկրաշարժի ժամանակ մարդկային մեծ կորուստներ կարող են լինել փողոցներում. Ապակիների, գոլազդային վահանակների և այլ իրերի ընկնելու հետևանքով, և շինությունների ներսում՝ կահույքի շրջվելու հետևանքով:

2. Քաղաքապետարանի քաղաքաշինության և կոմունալ շահագործման վարչությունները, այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ, պետք է կատարեն շենքերում և նրանցից դուրս տեղակայված իրերի և սարքավորումների ստուգում, որոնք կարող են երկրաշարժի ժամանակ կորստի պատճառ դառնալ, և իրականացնեն անվտանգությունն ապահովվող միջոցառումներ:

3. Երկրաշարժի ժամանակ ապակիների և այլ իրերի ընկնելու կանխման նպատակով անհրաժեշտ է իրականացնել էվակուացիայի երթուղիների երկայնքով տեղակայված շենքերի ստուգում, և ընկնելու ռիսկի առկայության դեպքում՝ տալ համապատասխան ցուցումներ՝ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

4. Կանխատեսվում է, որ երկրաշարժի ժամանակ կորուստներ կառաջանան արտաքին գոլազդային վահանակների ընկնելու հետևանքով: Ելնելով նշվածից՝ անհրաժեշտ է նման վահանակներ տեղադրող կազմակերպություններին հրահանգել դրանց տեղադրման թույլատվության ընթացակարգերի պահպանման և տեղադրելուց հետո շահագործման սպասարկման խստագույն իրականացման վերաբերյալ:

5. Առկա բազմաբնակարան երկաթբետոնյա շենքերի մեծ մասի արտաքին պատերը

պատված են քարե սալերով, ինչի հետ կապված անհրաժեշտ է մշակել դրանց թափման կանխարգելմանն ուղղված հարցեր, և տալ ցուցումներ՝ վերակառուցման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

Գլուխ 109. Կահույքի շրջման կանխում

1. Կահույքի շրջվելու հետևանքով կորստի նվազեցման նպատակով՝ քաղաքապետարանի քաղաքաշինության և կոմունալ շահագործման վարչությունները, այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ, պետք է կատարեն բացատրական աշխատանքներ, հատկապես բազմաբնակարան շենքերի բնակիչների հետ, հետևյալ հարցերով.

2. Բնակելի տարածքի անվտանգությունը կարելի է ապահովվել՝

1) Ապահովել բնակելի տարածքի անվտանգությունը. Մասնավորապես, ննջարաններում չտեղադրել բարձր կահույք:

2) Բնակելի տարածքի անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել կահույքի օպտիմալ տեղակայմանն ու ամրացմանն ուղղված հարցեր:

3. Կենցաղային մակարդակում անվտանգության ապահովման մեթոդներն են՝

1) Նվազեցնել կահույքի քանակը այն սենյակներում, որտեղ ապրում են տարեց մարդիկ, հաշմանդամներ և երեխաներ:

2) Կահույքի շրջման կանխման նպատակով՝ նրանում իրերը դասավորել այնպես, որ ծանրության կենտրոնը լինի հնարավորինս ցածր:

3) Տեղակայել կահույքն այնպես, որ նույնիսկ ընկնելու դեպքում չառաջացնեն վնասներ և չփակեն տարահանման ելքերը:

4) Միջոցներ ձեռնարկել կահույքի ապակիների ցրվելու դեմ, որպեսզի կանխվեն վնասվածքները:

4. Կահույքի ամրացման միջոցով անվտանգության ապահովման մեթոդներն են՝

1) Կահույքի ամրացման ժամանակ անպայման ստուգել պատերի և առաստաղի ամրությունը:

2) Կահույքը ամրացնել պատերին մետաղական անկյունակների միջոցով:

3) Կիպ լրացնել կահույքի և առաստաղի միջև եղած բաց տարածքները՝ կահույքի շրջվելը կանխելու համար:

4) Միջոցներ ձեռնարկել կենցաղային էլեկտրական սարքերի շրջվելու դեմ:

Գլուխ 110. Վերելակների անվտանգության ապահովումը

1. Քաղաքապետարանի կոմունալ շահագործման վարչությունը, այլ շահագրգիռ և պատասխանատու կազմակերպությունների հետ համատեղ, պետք է ստեղծեն երկրաշարժի ժամանակ էլեկտրականության տատանումների ժամանակ վերելակների արգելափակման և վերելակներում մնացած մարդկանց հանելու համակարգեր: Պետք է նաև մշակվեն վերելակների աշխատանքը արագ վերականգնելու մեխանիզմներ:

1) Վերելակներում մարդկանց փակվելու կանխման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել հասարակական նշանակության շենքերի վերելակների անվտանգությունը՝ տեղադրելով փակման կանխման սարքեր (էլեկտրաէներգիայի խափանման դեպքում ընթացքը շարունակելու և հարկում կանգ առնելու ֆունկցիաներով): Նման միջոցառումներ առաջին

հերթին պետք է իրականացվեն բժշկական հաստատություններում և բազմաբնակարան շենքերում:

2) Փրկարարական աշխատանքների կատարման համակարգի ստեղծումը պայմանավորված է նրանով, որ երկրաշարժի ժամանակ անհրաժեշտ է իրականացնել փրկարարական աշխատանքներ բազում տեղամասերում, անհրաժեշտ է որպեսզի, բացի վերելակների շահագործման մասնագետներից և փրկարարական ստորաբաժանումների անդամներից բացի, վերելակների ապաբլոկավորման աշխատանքներ կարողանան իրականացնել նաև շենքի շահագործման ծառայությունների աշխատակիցները: Առաջարկվում է ուժեղացնել վերելակների տեխնիկական սպասարկման կազմակերպությունների, շենքերի շահագործման ծառայությունների և փրկարարական ստորաբաժանումների միջև համագործակցության համակարգը, և վերելակներում տեղադրել նրանցում մարդկանց առկայությունը ստուգող և վերելակների հեռակառավարման համակարգեր:

3) Հաշվի առնելով վերելակների շահագործման մասնագետների սահմանափակ քանակը՝ առաջնահերթ անհրաժեշտ է կարևորագույն օբյեկտներում տեղադրել վերելակների ավտոմատ դիագնոստիկայի համակարգեր, որոնք հնարավորություն կտան վերականգնել վերելակների աշխատանքը:

Գլուխ 111. Երևան քաղաքի կենսաապահովման ենթակառուցվածքների սեյսմակայունության բարձրացումը

1. Կենսաապահովման գծերի սեյսմակայունության բարձրացումը դա քաղաքի բնականոն գործունեության հենարանն է: Երկրաշարժի հետևանքով կենսաապահովման ենթակառուցվածքների ենթակառուցվածքների վատթարացումը հղի է լրջագույն հետևանքներով:

2. Երևան քաղաքի կենսաապահովման ենթակառուցվածքների սեյսմակայունության բարձրացումը ունի շատ կարևոր նշանակություն հնարավոր ավերիչ երկրաշարժի դեպքում բնակչության կենսաապահովման իրականացման, տուժած բնակչությանը օգնության ցուցաբերման, ստեղծված իրավիճակի վերաբերյալ ճիշտ և ժամանակին տեղեկատվության ստացման, բնակչության ազդարարման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների արդյունավետ իրականացման և այլ կենսական նշանակության խնդիրների իրականացման ապահովման համար:

3. Անհրաժեշտ է մշակել և իրականացնել այս կարևորագույն օբյեկտների սեյսմակայունության բարձրացման գործողությունների ստույգ ծրագիր: Քաղաքային իշխանությունները պետք է իրականացնեն կենսաապահովման ենթակառուցվածքների՝ ջրամատակարարման, կոյուղու (կեղտաջուր և անձրևաջուր), էլեկտրականության և գազի ցանցի հաշվառում: Անհրաժեշտ է հաշվարկել այսպես կոչված «վնասի ֆունկցիա», որը կարտահայտի գրունտի շարժի ինտենսիվության և վնասի միջև հարաբերությունը՝ կանխատեսելու համար վնասը, որը կարող է հասցվել կենսաապահովման միջոցներին: Դա թույլ կտա իշխանություններին կատարել ավելի իրական կանխատեսում, որը ճշգրտորեն կարտահայտի իրավիճակը և հնարավորություն կտա իրագործել առաջնահերթ գործողությունների ծրագիր:

4. Աղետների կառավարման մարմինները պետք է վերստուգեն կադաստրի պետական կոմիտեի արդեն ստեղծած տվյալները Երևան քաղաքի 12 համայնքներից 10-ի համար և շարունակեն տվյալների համալրումը:

Գլուխ 112. Ջրամատակարարման, ջրահեռացման և կոյուղու համակարգեր

1. Երկրաշարժի երկրորդային վտանգներից վնասների նվազեցման տեսակետից կարևորագույն խնդիր է բնակչությանը խմելու ջրով և հրդեհների մարման համար ջրով մատակարարումը:

Քաղաքային իշխանությունները պետք է ունենան մշակված պլան-սցենարներ, որպեսզի կարողանան ջրամատակարարման խողովակների վնասված մասերը առանձնացնեն ընդհանուր ցանցից:

2. Ջրամատակարարման համակարգը երկրաշարժակայուն դարձնելն ունի ավելի բարձր առաջնահերթություն, քան կոյուղին: Աղետի դեպքում, որպես ժամանակավոր միջոց կարելի է, օրինակ, տեղադրել շարժական զուգարաններ՝ մինչև կոյուղու վերականգնումը, չնայած դա կարող է բերել սանիտարական խնդիրների:

3. Առաջնահերթ անհրաժեշտ է ապահովել հիվանդանոցների և հանրային նշանակության օբյեկտների ջրագծերի սեյսմակայունությունը, քանի որ դրանք արտակարգ իրավիճակների դեպքում ունեն կարևորագույն նշանակություն:

4. Երևան քաղաքի ջրագծերի և կոյուղագծեր գերակշռող մասը չափազանց մաշված է և չի համապատասխանում անհրաժեշտ սեյսմակայունության մակարդակին: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կազմել և իրականացնել խողովակաշարերի փոխարինման ամենամյա ծրագրեր:

5. Երևան քաղաքի ջրամատակարարումը իրականացվում է 24 ջրամատակարարման կապտածներից, որոնց մեծ մասը ինքնահոս է: Երևանի ջրմուղ-կոյուղու համակարգը տնօրինում է «Երևան-Ջուր» ՓԲԸ-ն, որը պետական է, և հանձնված է կոնցեսիոն կառավարման՝ ֆրանսիական ընկերությանը:

Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցը կառուցվել է անցյալ դարի կեսերից մինչև 1990-ական թվականների սկիզբը, ներկայումս իրականացվում են աշխատանքների ջրամատակարարման և ջրահեռացման գծերի վերանորոգման աշխատանքներ: Անհրաժեշտ է, որպեսզի գնահատվեն կապտածների և օրվա կարգավորիչ ջրամբարների սեյսմակայունությունը և իրականացվեն ամրացման աշխատանքներ: Անհրաժեշտ է ապահովել կենսական նշանակության օբյեկտների (հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, սննդի ձեռնարկություններ, տեխնիկապես վտանգավոր օբյեկտներ և այլ) անխափան և հուսալի ջրամատակարարումը և ջրահեռացումը, բարձրացնելով ջրամատակարարման օբյեկտների և գծերի սեյսմակայունությունը:

6. Երևան քաղաքի վարչական տարածքով անցնում է Վերին Արտաշատի և Հրազդանի ջրանցքները, որոնք ոռոգման ջուր են ապահովում Արարատյան դաշտավայրին: Ջրանցքները կառուցվել են անցյալ դարի կեսերին և անհարժեշտ է, որ իրականացվի ջրանցքների սեյսմակայունության գնահատում և ուժեղ երկրաշարժի դեպքում կայունության որոշում: Ջրանցքները գտնվում են ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայության տակ:

Գլուխ 113. Էլեկտրամատակարարման համակարգ

1. Էլեկտրամատակարարման հնարավորինս անխափան իրականացման համար անհրաժեշտ է, որ ստուգվեն բարձրավolյտ էլեկտրամատակարարման գծերի հենասյունների և ցածրավolյտ բաշխիչ ցանցի ենթակայանների սեյսմակայունությունը և իրականացվեն ամրացման աշխատանքներ:

2. Բարձրավolյտ էլեկտրականության համար բաշխման համակարգերը պետք է դարձնել սեյսմակայուն, քանի որ բոլոր հարմարությունները հնացած են և ուժեղ երկրաշարժի ժամանակ կարող են կրել ուժեղ ազդեցություն: Ինչ վերաբերում է ցածրավolյտ բաշխման գծերին՝ արդյունավետ կլինի, եթե դրանք թաղվեն գետնի տակ, ինչի շնորհիվ դրանց վրա երկրաշարժի ազդեցության հավանականությունը կնվազի: Անհետաձգելի վերականգնողական աշխատանքի թիրախը պետք է լինեն բաշխման ցանցերը՝ կազմված էլեկտրականության սյուներից և վերգետնյա ու ստորգետնյա գծերից: Այս օբյեկտների անհետաձգելի վերականգնողական աշխատանքը պետք է ներառի ժամանակավոր էլեկտրականության սյուների և օդային գծերի տեղադրումը, ինչպես նաև՝ ստորգետնյա կամ ճանապարհային մալուխների կառուցումը: Եթե բաշխման համակարգի վնասի պատճառով տեղի է ունենում հոսանքի անջատում, սակայն բաշխման ցանցերը մնում են գործող վիճակում, ապա անհետաձգելի վերականգնումը կարող է ներգրավել էլեկտրամատակարարում՝ հարակից բաշխման ենթակայանի սպասարկման տարածքից: Այն էլեկտրացանցերում, որոնք կճանաչվեն ոչ բավարար սեյսմակայուն, անհրաժեշտ է իրականացնել սեյսմիկ ուժեղացման աշխատանքներ: Երկրաշարժի դեպքում կենսաապահովման օբյեկտների հնարավորինս անխափան գործունեության համար անհրաժեշտ է, որ օբյեկտները ապահովված լինեն նաև ինքնավար էներգամատակարարման համակարգերով՝ վառելիքի անհրաժեշտ նվազագույն պաշարով:

3. Անհրաժեշտ է իրականացնել նաև Երևանի վարչական տարածքում գտնվող Քանաքեռ ՀԷԿ-ի և Երևան-1 ՀԷԿ-ի ջրամբարի և ջրամատակարարման համակարգի սեյսմակայունության ուսումնասիրում և սեյսմիկ կայունության ապահովում:

Գլուխ 114. Գազամատակարարման համակարգ

1. Երկրաշարժի դեպքում գազատարների շարքից դուրս գալը կարող է պայմանավորվել խողովակների խափանմամբ, պատռվածքներով, ինչպես նաև խողովակների հանգույցների խզումով: Ի տարբերություն ջրամատակարարման և կոյուղու խողովակների՝ գազատարների դեպքում խողովակների չնչին վնասը կարող է բերել խոշոր վթարի:

Հայաստանի Հանրապետության գազամատակարարումն իրականացվում է «ՀայՌուսգազարադ» ՓԲԸ-ի կողմից: Գազի ստորգետնյա խողովակները կազմում են Երևան քաղաքի գազատարների 6%-ը, սակայն անհրաժեշտ է տալ առաջնահերթություն և ապահովել նրանց սեյսմակայունությունը, քանի որ մեծ է խոշոր խողովակաշարերի դերը: Ինչ վերաբերում է վերգետնյա գազատարներին, որոնք կազմում են Երևան քաղաքի գազատարների մոտավորապես 94%-ը, խողովակները սեյսմակայուն դարձնելու տեսանկյունից արդյունավետ կլինի հանգույցների և հենասյուների ամրացումը:

2. Երևան քաղաքում առկա է գազամատակարարման տարածված ցանց, քաղաքի տարածքով անցնում են բարձր, միջին և ցածր ճնշման գազատարեր, որոնք հիմնականում վերգետնյա են: Բնակչությանը գազամատակարարման համար նախատեսված ցածր ճնշման

գազատար ցանցը նույնպես վերգետնյա է և անցնում է բնակելի շենքերի և շինությունների անմիջական հարևանությամբ: Ուժեղ երկրաշարժի դեպքում վերգետնյա գազամատակարարման ցածր ճնշման գազատար ցանցը շատ հատվածներում կարող է հայտնվել փլատակների տակ և վնասվել, ինչպես նաև գազատար խողովակների հենասյունները կարող են շրջվել, հանգեցնելով գազի արտահոսքի: Անհրաժեշտ է, որ իրականացվի գազատար խողովակների հենասյունների ամրության ստուգման աշխատանքներ:

3. Ուժեղ երկրաշարժի դեպքում տուժած տարածքների գազամատակարարումը դադարեցվում է՝ պայթյունների, հրդեհների և բնակչության շրջանում թունավորումների կանխարգելման նպատակով, որը հնարավոր կլինի գազամատակարարման բաշխիչ կետերի անխափան աշխատանքի դեպքում: Անհրաժեշտ է ստուգել գազի բաշխիչ կետերի տեղակայման վայրերի համապատասխանությունը գոյություն ունեցող նորմերին (պետք է գտնվեն բնակելի շենքերից և շինություններից համապատասխան հեռավորության վրա):

4. Երևան քաղաքում առկա են մեծ թվով բարձր ճնշման ավտոգազալիցքավորման կետեր, որոնք գտնվում են բնակելի շենքերի, շինությունների, ճանապարհների և այլ ենթակառուցվածքների անմիջական հարևանությամբ: Անհրաժեշտ է իրականացնել ավտոգազալիցքավորման կետերի շինությունների սեյսմակայունության ստուգում և անհրաժեշտության դեպքում սեյսմակայունության բարձրացում:

5. Պետք է գիտակցել, որ գազամատակարարման համակարգի վերականգնման աշխատանքների համար պահանջվող ժամանակը կախված կլինի շենքերի վերականգնման համար պահանջվող ժամանակից, քանի որ նոր գազատարերը կկառուցվեն շենքերի կառուցումից հետո: Անհրաժեշտ է բոլոր գազաֆիկացված շենքերում և շինություններում տեղադրել գազի հոսքի ավտոմատ անջատման համակարգեր:

Գլուխ 115. Կապի համակարգ

1. Երևան քաղաքում կապի համակարգը բաղկացած է լարային և բջջային հեռախոսակապերից: Լարային հեռախոսակապը իրականացվում է թվայնացված ինքնավար հեռախոսակայանների միջոցով, որոնք տեղակայված են համապատասխան շինություններում՝ կառուցված խորհրդային տարիներին:

2. Երկրաշարժի դեպքում կապի համակարգերի շարքից դուրս գալը խիստ բացասական ազդեցություն կունենա և թույլ չի տա ժամանակին արձագանքել, ելնելով դրանից՝ անհրաժեշտ է ունենալ կապի այլընտրանքային միջոցներ: Արտակարգ իրավիճակում կապի համակարգի անխափան աշխատանքներն ապահովելու համար, սարքերը պետք է ունենան ալիքների գերբեռնվածության կանխման համակարգ: Երկրաշարժի ժամանակ հեռահաղորդակցման համակարգերի աշխատանքների համար անհրաժեշտ է ապահովել նրանց աշտարակների հենարանների և շենքերի սեյսմակայունությունը:

Գլուխ 116. Տրանսպորտային համակարգի սեյսմակայունության բարձրացում

1. Փրկարարական աշխատանքների կատարման, էվակուացիայի և վնասի որոշման գործընթացներում կարևոր պայման է հանդիսանում տրանսպորտի նորմալ գործունեության

ապահովումը:

2. Կամուրջների վնասվելը կամ քանդվելը կհանգեցնեն տրանսպորտի գործունեության անդառնալի հետևանքների, այդ պատճառով կամուրջների սեյսմիկ ուժգնացումը իրենից ներկայացնում է հատուկ կարևորություն:

3. Հետագայում, նոր կամուրջների կառուցման կամ առկա կամուրջների վերանորոգման ժամանակ անհրաժեշտ է նվազեցնել սեյսմիկ ռիսկը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր կամուրջի համար փորձագետների տված եզրակացությունները:

4. Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել տեխնիկական լուծումների մանրամասն ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն՝ կամուրջների սեյսմիկ ուժգնացման կտրուկ քայլեր ձեռնարկելու համար:

5. Ավելի հուսալի սեյսմակայուն նախագծման համար անհրաժեշտ է ընդունել սեյսմիկ կայունության համապատասխան նորմեր:

Գլուխ 117. Երկաթգծեր

«Հարավկովկասյան երկաթգծեր» ՓԲԸ-ն, որը կառավարում է Հայաստանի Հանրապետության, այդ թվում Երևան քաղաքի երկաթգիծը, պետք է ապահովի իր ենթակայության տակ գտնվող գրասենյակային շենքերի, կայարանների և այլ շինությունների, ինչպես նաև ուղիների, էլեկտրական կոնտակտային գծերի և օժանդակ կառույցների սեյսմիկ կայունությունը:

Հարկավոր է փուլ առ փուլ իրականացնել սեյսմիկ կայունության ստուգումներ՝ սկսած առավել կարևոր և մաշվածության բարձր աստիճան ունեցող կառույցներից՝ հաշվի առնելով նրանց շահագործման ժամանակը, և անհրաժեշտության դեպքում, իրականացնել սեյսմիկ ուժգնացման աշխատանքներ:

Գլուխ 118. Հիդրոտեխնիկական կառույցների սեյսմիկ ուժգնացում

Երկրաշարժի ժամանակ հնարավոր է Երևանյան լճի պատվարի փլուզում, որի հետևանքով կփակվի Երևան – Էջմիածին մայրուղին, կջրածածկվի Երևանի Շենգավիթ վարչական շրջանի մի մասը:

Այսպիսի ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ է ստուգել ջրամբարի պատվարի ջրթող և դրենաժային համակարգերի հուսալիությունը և սեյսմիկ կայունությունը, անհրաժեշտության դեպքում իրականացնել նրանց ուժգնացման և վերականգնման աշխատանքներ:

Գլուխ 119. Հենապատերի և պանելային արգելապատնեշների փլուզման կանխում

1. Հենապատերի նախագծումը և կառուցումը իրականացվում է համաձայն ՀՍՏ – 26815-86 ստանդարտի: Առկա հենապատերի նկատմամբ ներքոհիշյալ կազմակերպությունները պետք է կատարեն իրենց ենթակայության տակ գտնվող հենապատերի ակնդետ հետազոտություն՝ ճեղքերի և այլ թերությունների հայտնաբերման համար, կազմեն հենապատերի կատալոգ և ստուգեն նրանց սեյսմակայունությունը և մաշվածության աստիճանը:

1) Գետերի հենապատեր - քաղաքապետարանի շինարարության վարչություն,

2) Ավտոճանապարհների հենապատեր - քաղաքապետարանի շինարարության վարչություն, ճանապարհային ոստիկանություն, ճանապարհատրանսպորտային բաժին,

3) Շինարարական հենապատեր - քաղաքապետարանի շինարարության վարչություն, կադաստրի պետական տեսչության տարածքային ստորաբաժանում:

Գլուխ 120. Արգելապատնեշներ

Երկրաշարժի ժամանակ արգելապատնեշների փլուզումը դառնում է հետիոտների զոհվելու անմիջական պատճառ, ինչպես նաև դժվարացնում են փրկարարական աշխատանքները, տարահանման և վնասի չափի ճշգրտման աշխատանքները: Արդյունաբերական տարածքների արգելապատնեշների համար պահանջվում է օգտագործել ծանր բետոն, և այդ պայմանը պետք է պահպանվի շինարարության ընթացքում:

Խորհուրդ է տրվում առկա պանելային արգելապատնեշները, բացառությամբ արդյունաբերական տարածքների, քանդել և փոխարինել թեթև և երկրաշարժերին ավելի դիմացկուն կառույցներով: Սակայն հնարավոր չէ պահանջել քանդել առկա պանելային արգելապատնեշները: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ որպես միջանկյալ միջոցառում, խորհուրդ է տրվում, որպեսզի քաղաքապետարանի շինարարության վարչությունը մշակի պանելային արգելապատնեշների ուժգնացման մեթոդիկա, յուրաքանչյուր վարչական շրջանում կազմվում է այդ արգելապատնեշների կատալոգ, և յուրաքանչյուր պատասխանատու կազմակերպություն իրականացնում է իրեն ենթակայության տակ գտնվող արգելապատնեշների սեյսմիկ ուժգնացման աշխատանքները՝ համաձայն այդ մեթոդիկայի: Հետագայում պետք է ապահովել նման արգելապատնեշների շինարարության արգելքը՝ բացառությամբ արդյունաբերական կամ հատուկ բնույթի ընկերությունների տարածքներում:

Գլուխ 121. Մշակույթային արժեքների սեյսմիկ ուժգնացում

1. Անհրաժեշտ է իրականացնել մշակույթային արժեքների սեյսմիկ ուժգնացումը՝ համաձայն «Մշակույթային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի:

2. Անհրաժեշտ է իրականացնել մշակույթային արժեքների սեյսմիկ կայունության ստուգում և սեյսմիկ ուժգնացման հետագա աշխատանքներ:

3. Երկրաշարժի դեպքում, պատասխանատու անձը, որի պատասխանատվության տակ են գտնվում պատմամշակութային արժեքները, պարտավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել նրանց պահպանման ուղղությամբ՝ համաձայն ԱԻ հանձնաժողովի ցուցումների: Երևանի քաղաքապետարանի մշակույթի վարչությունը կազմում և ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացնում այդ արժեքներ ցուցակը, վերականգնման պլանը և իրականացնում է վերականգնման աշխատանքներ՝ բյուջետային միջոցներով:

Գլուխ 122. Սողանքների և սելավների կանխարգելում

1. Երևանի տարածքում լայն զարգացում ունեցող թեք լանջերը բարենպաստ պայմաններ են ստեղծում վտանգավոր երկրաբանական երևույթների զարգացման համար: Քաղաքի առավել սողանքավտանգ վայրերը գտնվում են Էրեբունու և Կենտրոն վարչատարածքային շրջաններում:

2. Քաղաքի այդ ռիսկային գոտիներն առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժի ժամանակ: Քաղաքային և համայնքային իշխանությունները պետք է իրականացնեն մշտադիտարկում՝ ճարտարապետա-տեխնիկական միջոցառումների մշակման և իրականացման համար:

Միաժամանակ տեխնիկական որոշումների հետ միասին անհրաժեշտ է իրականացնել կազմակերպչա-ինստիտուցիոնալ բնույթի հետևյալ միջոցառումները՝

- 1) Սողանքավտանգ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքում, ամփոփում և ռիսկերի գնահատում.
- 2) Օրենսդրական դաշտի կարգավորում.
- 3) Բնակչության իրազեկվածություն վտանգավոր լանջերի վերաբերյալ, դիտարկում, տեղեկատվության փոխանցման և տարահանման համակարգերի կարգավորում (հարմարեցում) և այլն:

Գլուխ 123. Սելավներ

Պետք է ձեռնարկել կազմակերպչա-ինստիտուցիոնալ բնույթի միջոցառումներ՝ ճշտել սելավավտանգ տարածքների սահմանները, բնակչության տեղեկացվածությունը հնարավոր ռիսկերի վերաբերյալ, բնակչության տարահանման հարցերը և այլն:

Բաժին 9 Սեյսմիկ ուսումնասիրություն և հետազոտություն

Գլուխ 124. Երկրաշարժի սցենարի ուսումնասիրությունն ու հետազոտությունը

1. Սույն ծրագրում օգտագործված սցենարային երկրաշարժերի ուղղությամբ պետք է իրականացվի լրացուցիչ հետազոտություն և զուգահեռաբար, պետք է հաշվի առնել այլ սցենարային երկրաշարժերի հավանականության վերաբերյալ ուսումնասիրությունը:1.

2. Պատմական երկրաշարժերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ՝

1) Երևան քաղաքում, ինչպես նշված է ստորև՝ հայտնի է երկու պատմական երկրաշարժ.

ա) 1679թ. հունիսի 4, Գառնիի երկրաշարժ ($M=7.0$) - Էպիկենտրոնը Երևանից 20կմ արևելք է: Գնահատված առավելագույն սեյսմիկ ինտենսիվությունը՝ 'X' է՝ ըստ MSK-64 , որի հետևանքով ամրոցը և առնվազն 12 եկեղեցի և երկու կամուրջ փլուզվել են, և 1,228 մարդ զոհվել է ներկայիս Երևան քաղաքի հյուսիսային մասում: Հարակից տարածքները ներառած ընդհանուր 7,600 մարդ է զոհվել:

բ) 1937թ. հունվարի 7, $M=5.2$ - Սա համարվում է տեղային երկրաշարժ Երևան քաղաքի մոտ: Գնահատված սեյսմիկ ինտենսիվությունը քաղաքում՝ 'VII' է եղել՝ ըստ MSK-64 սանդղակի: Քաղաքում մի քանի հարյուր տան վրա առաջացել են ճաքեր: Տուժածներ չեն հաղորդվել:

2. Ակտիվ խզվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում հիմնական ակտիվ խզվածքներն են Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքը (ՓՍՍԽ), Մռավի խզվածքը, Ախուրյանի խզվածքը, Գառնիի խզվածքը (ԳԽ) և Երևանի խզվածքը (ԵԽ): ՓՍՍԽ-ն, որը Հայաստանում ամենաերկար ակտիվ խզվածքն է (~410կմ), աջակողմյա խզվածք է վերնետք բաղադրիչով և ցուցադրում է աջակողմյա խզվածքի հստակ երկրամորֆիկ առանձնահատկություններ: ՓՍՍԽ-ի երկայնքով խրամատային ուսումնասիրություն իրականացվել է երեք վայրում (Philip et al., 2001): ՓՍՍԽ-ի կրկնման պարբերությունը ենթադրաբար 3000-4000 տարի է: Այնուամենայնիվ, ՓՍՍԽ-ն չի առաջացրել 7-ից ավել մագնիտուդով ուժեղ երկրաշարժ վերջին 2000 տարում: ՓՍՍԽ-ն հանդիսանում է ապագայում Հայաստանում երկրաշարժի առաջացման բարձր հիսկայնությամբ ակտիվ խզվածքներից մեկը: Մռավի խզվածքը վերնետք խզվածք է, որը թեքված է դեպի հյուսիս: Այս խզվածքը 1139թ.-ին առաջացրել է $M=7.5$ մագնիտուդով երկրաշարժ: Ախուրյանի խզվածքը ձախակողմյա խզվածք է: Այս խզվածքի երկայնքով տեղի են ունեցել $M=6.5$ -ից 7.0 մագնիտուդով պատմական երկրաշարժեր: Գառնիի խզվածքն անցնում է Նախիջևանով (Ադրբեջան), Երևան քաղաքի արևելյան մասով և միավորվում է ՓՍՍԽ-ի հետ: Երկարությունը ~200 կմ է: Ըստ Կարախանյանի և մյուսների (2004) և Գառնիի խզվածքի վերաբերյալ Գեոդիսիկ հաշվետվության, ԳԽ-ն բաժանված է 5 սեգմենտների: ԳԽ-ի երկայնքով տեղի են ունեցել 4 ուժեղից չափավոր պատմական երկրաշարժեր: Դրանք են՝ 906թ.-ի երկրաշարժը ($M 7.0$), 1679թ.-ի Գառնիի երկրաշարժը ($M 7.0$), 1828թ.-ի երկրաշարժը ($M 7.0$) և 1988թ.-ի Սախտակի երկրաշարժը ($M_s 6.9$): Պատմական երկրաշարժերը, կարծես, տեղափոխվում են հարավից հյուսիս:

3. Երևանի խզվածքը թաքնված խզվածք է, որը ենթադրաբար գտնվում է Երևան քաղաքի հարավում՝ հիմնվելով գրավիտացիոն անոմալիաների տվյալների վրա (Երևանի խզվածքի

վերաբերյալ Գեոռիսկի հաշվետվություն): Այնուամենայնիվ, այս ծրագրի համար Նոր-Ուդիում իրականացված պիլոտային խրամատը հաստատեց փխրուն մանրախճի վրա մեզոզոյան նստվածքը ծածկող փոքր անկյամբ վերնետք խզվածքը (վրաշարժ): ԵԽ-ի մի մասը կարող է հասնել մակերևույթին, սակայն, ավելի մանրամասն խրամատային հետազոտության անհրաժեշտություն կա: Ըստ փոքրից չափավոր երկրաշարժերի մեխանիզմի վերլուծության, Երևանից 30կմ հեռավորության սահմաններում դիտարկված տատանման գերակշռող տեսակը վերնետք է (Թովմասյան, 2008թ.): 893թ.-ի Դվինի երկրաշարժը հայտնի է, քանի որ Հայաստանի հնագույն մայրաքաղաք Դվինը ստացել էր լուրջ վնասներ: Դվինը գտնվում է ԵԽ-ի մոտ: Այնուամենայնիվ, 893թ.-ի երկրաշարժի էպիկենտրոնի մանրամասները ճշգրտված չեն: Կա այլ կարծիք, որ ԳԽ-ն է առաջացրել այս երկրաշարժը (Գեոռիսկի հաշվետվությունը Երևանի խզվածքի վերաբերյալ): Բացի դա, համաձայն մեկ այլ կարծիքի՝ Դվինի երկրաշարժ երկու անգամ է տեղի ունեցել՝ 863թ.-ին և 893թ.-ին (Guidoboni, 1997):

Գլուխ 125. Երկրաշարժով պայմանավորված աղետների գիտահետազոտական գործունեությունը

1. Ինչ վերաբերում է երկրաշարժերից առաջացած տարերային աղետների մասին վնասի գնահատմանը, ապա պետք է կատարվել ընդլայնված ուսումնասիրություն՝ ելնելով սույն ծրագրի արդյունքներից:

Սեյսմիկության գնահատման ժամանակ կարևորագույն խնդիրներից մեկը գրունտների տվյալների բազայի առկայությունն է:

Երևանում լիթոլոգիական կառուցվածքի ուրվագիծը կարելի է հասկանալ երկրաբանական, երկրաֆիզիկական և գեոտեխնիկական հետազոտությունների միջոցով: Այդ պարամետրերի տվյալները հավաքելու համար Երևանում կատարվել է 10 նոր հորատում: Հորատման կետերը հիմնականում ընտրվել են այն տարածքներում, որոնք ծածկված են չորրորդային նստվածքներով, որովհետև դրանք արդյունավետ են սեյսմիկ ցնցման ուժեղացման համար՝ գրունտային և հեղուկացման պոտենցիալների միջոցով: 10 նոր հորատման կետերում իրականացվել է PS գրանցում, ինչը երկրաֆիզիկական հետազոտության մեթոդ է, որի միջոցով չափվում է հողային շերտի S ալիքի արագությունը՝ հորատանցքային ընդունիչի միջոցով գրանցելով մակերևույթին գեներացված ալիքը: S ալիքի արագությունը հաշվվում է ալիքի գեներատորից մինչև ընդունիչ եղած հեռավորության և ալիքի գեներացման ու ընդունման միջև ընկած ժամանակահատվածի հարաբերության միջոցով:

Երևան քաղաքում մակերևութային ալիքի հետազոտություն է կատարվել 60 կետերում:

2. Մակերևութային ալիքի հետազոտության միջոցով ստացվում է հողային շերտերի S ալիքի արագության կառուցվածքը՝ օգտագործելով արհեստականորեն գեներացված մակերևութային ալիք կամ բնական միկրոսեյսմ: Մակերևութային ալիքը միաժամանակ դիտվում է գետնի մակերևույթի վրա տեղադրված մի քանի սեյսմաընդունիչների միջոցով և վերլուծվում է:

Միկրոսեյսմերի հետազոտությունը կատարվել է նույն վայրերում, ինչ մակերևութային ալիքի հետազոտության կետերը: Միկրոսեյսմը գետնի մակերևույթի շատ թույլ տատանման երևույթ է, որը հանդիսանում է տարբեր տատանումների բարդ վերադրման գործընթացի արդյունք, որոնք տարածվում են արդյունաբերական գործարաններում մեքենաների կամ

տրանսպորտային համակարգերի առաջացրած հեռավոր տեխնաձին տատանման աղբյուրներից և մակընթացային կամ հրաբխային ակտիվության առաջացրած բնական տատանումներից: Միկրոսեյսմ կարող է դիտվել ամեն տեղ՝ գետնի մակերևույթի վրա կամ տակ: Դիտված միկրոսեյսմն արտացոլում է գրունտի ֆիզիկական հատկությունները՝ S ալիքի արագության հստակ կոնտրաստով: Դիտված միկրոսեյսմի ալիքի սպեկտրը ցույց է տալիս S ալիքի արագության կառուցվածքը: Հ/Ու (հորիզոնական/ուղղաձիգ) սպեկտրալ հարաբերությունն օգտագործվում է լայնորեն և, երբեմն, ցույց է տալիս ավելի լավ արդյունք, քան հորիզոնական սպեկտրը: Այս ուսումնասիրության ժամանակ Հ/Ու սպեկտրները հաշվվում և օգտագործվում են մակերևույթային ալիքի հետազոտության մեթոդով՝ S ալիքի արագության կառուցվածքը հաստատելու համար: